



Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ԳՆՈՒՆԻ, Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, Լ. ՄԿՐՏՉՅԱՆ, Ա. ԲՈՒԲՈՒՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՄԵԳԱԼԻԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ



Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա.ԳԼՈՒՆԻ, Գ.ՍԱՐԳՍՅԱՆ, Լ.ՄԿՐՏՉԱՆ, Ա.ԲՈՐՈՒՅԱՆ

ԱՐՑԱԽԻ

ՄԵԳԱԼԻԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

MEGALITHIC CULTURE OF ARTSAKH

H. Avetisyan, A. Gnuni, G. Sargsyan,
L. Mkrtchyan, A. Bobokhyan

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

МЕГАЛИТИЧЕСКАЯ КУЛЬТУРА АРЦАХА

Г. Аветисян, А. Гнуни, Г. Саргсян,
Л. Мкртчян, А. Бобохян


PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
YEREVAN 2023

ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ЕРЕВАН 2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՑԱԽԻ ՄԵԳԱԼԻԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հ. Ավետիսյան, Ա. Գնունի, Գ. Սարգսյան,
Լ. Մկրտչյան, Ա. Բոբոխյան



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Պավել Ավերիսյան (գլխավոր խմբագիր), Լևոն Արրահամյան,
Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Տորք Դալալյան, Ջուսուր թրահնա, Թեո վան
Լինթ, Լորի Խաչատրյան, Թամար Հայրապետյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն
Մարության, Արմեն Պետրոսյան, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ,
Պարիկ Տոնապետյան, Պիրեր Քաուի

Գրախոսներ՝ Աշոտ Փիլիպոսյան
Լեոնիկ Հովհաննիսյան

Գիրքը տպագրվում է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող
համահայկական հիմնադրամի դրամաշնորհի սահմաններում

ՀՏԴ 903.6
ԳՄԴ 63.48
Ա.948

Ա.948 Արցախի մեզալիթյան մշակույթը / ՀՀ ԳԱԱ: Հնագիտության և ազգագրության ինստիտուտ: – Եր.:
ՀԱԻ հրատ., 2023. – 184 էջ:

Մեզալիթ ընդունված է անվանել մեծ քարերից կառուցված շինությունները և կոթողները: Սովորաբար
մեզալիթների թվին են դասվում մենհիրները (մենհիրների «պուրակները», հենջերը), դոլմենները,
կրոմեխները, «կիկլոպյան» շարվածքով շինությունները, աշտարակատիպ կառույցները: Մեզալիթյան
հուշարձանները հատկապես տարածված են Արևմտյան Եվրոպայում, սակայն հանդիպում են նաև
Առաջավոր Ասիայում, Կովկասում և Հայկական լեռնաշխարհում: Ներկա հատորը նվիրված է Արցախի
մեզալիթյան հուշարձաններին: Ի մի բերելով առկա հնագիտական տվյալները՝ հեղինակները փորձ են
կատարում ցույց տալ երևույթի արտահայտման տարատեսակ ձևերը և փոխակերպումները պատմա-
կան Արցախի տարածքում: Աշխատությունը նախատեսված է ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ
մշակույթով, արվեստով և պատմությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակների համար:

Կազմին պատկերված է Այլախ լճի մոտ գտնվող մեզալիթյան հարթակը՝ ծիսական ճանապարհով,
այն օդակող տասնչորս մենհիրներով և մեկ ձկնակերպ վիշապաքարով (լուսանկարները և գծագրերը՝
Լ. Մկրտչյանի, Ա. Հախվերդյանի, Ա. Բոբոյանի):

ՀՏԴ 903.6
ԳՄԴ 63.48

ISBN 978-9939-886-46-6

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ՀԱՅԵՏ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	7
Գլուխ I	
Մեզալիթյան հուշարձանների ուսումնասիրության պատմությունը	9
Գլուխ II	
Մեզալիթյան հուշարձանների տիպաբանության ընդհանուր սկզբունքները	15
Գլուխ III	
Մեզալիթյան հուշարձանները բազմաֆունկցիոնալ համալիրներում	23
Գլուխ IV	
Մեզալիթյան հուշարձանները ֆունկցիոնալ համալիրներում	48
Գլուխ V	
Մեզալիթյան համալիրները հիշողության հնագիտության համատեքստում	58
Վերջաբան	62
Summary	67
Резюме	71
Նկարներ	77
Գրականություն	169
Հապավումներ	176
Ցանկեր	177

ՆԱԽԱԲԱՆ

Արցախի վաղ շրջանի հնագիտական հուշարձանները հայտնի են դեռևս XIX դ.¹, սակայն դրանք կանոնավոր ուսումնասիրության են ենթարկվում XX դ. կեսերից սկսած: Ընդ որում, հնագիտական հետազոտության հիմնական առարկա է եղել Դաշտային Արցախը, մասնավորապես՝ Կուրի ավազանը²: Հնագիտական աշխատանքները Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում մինչև անկախացումը հիմնականում դիպվածային են եղել՝ կրելով զուտ փրկարարական բնույթ³: Այս տեսանկյունից կարևոր էին հատկապես Կ.Քուշնարյովայի հետազոտությունները Ակնայի Ուզերլիկ թեփե բնակավայրում և Իվանյանի (Խոջալու) դամբարանադաշտում⁴, ինչպես նաև Գ.Իսմայիլովի և Օ.Դանիելյանի պեղումները Իշխանազետի և Վարանդայի միջագետքում (Ղարաքյոփակթեփե բազմաշերտ բնակատեղի և այլ հուշարձաններ)⁵: Եթե սրան ավելացնենք Արցախի անկախության շրջանում իրականացված նոր աշխատանքները, ապա առկա նյութերի հիման վրա կարելի է առանձնացնել մի քանի հարցադրումներ:

1. Կարևոր է Արցախում և հարակից շրջաններում արտադրող տնտեսության ձևավորման հարցը: Թեպետ այս շրջանի հուշարձաններ Լեռնային Արցախում դեռևս չեն հայտնաբերվել, սակայն Դաշտային Արցախում նմանատիպ բնակավայրերի առկայությունը հուշում է, որ նախալեռնային գոտին ևս կարող էր բնակեցվել Ք.ա. VI հազ.:
2. Ուսումնասիրության կարիք ունի պղնձի-քարի դարաշրջանը: Մի շարք հանգուցային բնակավայրեր են պեղվել Վարանդայի հովտում և Դաշտային Արցախում: Քաջաթաղի շրջանում

հայտնի է համապատասխան խեցեղենի մի քանի բեկոր Եզնագոմեր հնավայրից:

3. Ինչ վերաբերում է վաղ բրոնզի մշակույթի տարածմանը, եթե մինչև 2000-ական թվականները Արցախում շենգավիթյան հնագիտական մշակույթի հուշարձանները հայտնի էին միայն Վարանդայի հովտում (Ղարաքյոփակթեփե ու հարևան բնակավայրերը, Հորադիզ) և Քարվաճառում (Ալի Բայրամլի), ապա հետագա հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ նշված մշակույթը տարածված է Արցախի գրեթե բոլոր լանդշաֆտային գոտիներում (Եզնագոմեր, Սոնասար, Անդոկաբերդ, Լուսաձոր, Միրիկ 2):
4. 2000-ական թվականներին վաղ բրոնզի դարի փուլաբաժանման ճշգրտման արդյունքում հնարավորություն ընձեռվեց հստակեցնելու Ստեփանակերտի դամբարանների թվագրումը: Եթե առաջ դրանց տարբեր շերտերը բնորոշվում էին նեոլիթից մինչև վաղ բրոնզ ընկած դարաշրջաններով, ապա այժմ Ստեփանակերտի դամբարանները սահմանվում են որպես վաղ բրոնզից միջին բրոնզի անցման փուլին բնորոշ հուշարձաններ (Ք.ա. XXIV դ.)⁶:
5. 1990-ական թվականներին միջին բրոնզի ժամանակագրական սանդղակի ճշգրտումը թույլ տվեց սահմանել Ուզերլիկ թեփեի ստորին հորիզոնները որպես թռելք-վանաձորյան մշակույթին պատկանող՝ թվագրելով դրանք Ք.ա. III հազ. վերջով⁷:
6. Արցախի վաղ շրջանի հնագիտության կարևորագույն հիմնահարցերից է ուշ բրոնզի և եր-

¹ Асрян 1999, 3-6.

² Հմմտ Гуммель 1940:

³ Մանրամասն տե՛ս Асрян 1999, 3-43:

⁴ Кушнарева 1970, 109-124, Кушнарева 1959, 380-440.

⁵ Исмаилов 1981.

⁶ Ավետիսյան և այլք 1996, 10:

⁷ Ավետիսյան և այլք 1996, 10:

կաթի դարերի փուլաբաժանման և ժամանակագրման հիմնահարցը: Ակնհայտ է, որ Հայկական լեռնաշխարհի լեռնային գոտիներում (Սյունիք, Արցախ) վաղերկաթեդարյան իրողությունները ավելի պահպանողական են եղել, և երկաթի դարը շարունակվում է ընդհուպ Ք.ա. VI դ.՝ կապված ուրարտական սահմանափակ ներթափանցման հետ:

7. 2003–2013 թթ. Կերենի դամբարանադաշտում և 2017 թ. Միրիկի ամրոցում կատարված պեղումները մեծ դեր ունեցան Արցախի Ք.ա. VII–VI դդ. նյութական մշակույթի խնդիրների պարզաբանման գործում: Հայտնաբերված նյութերը վկայում են, որ Վանի թագավորության թուլացումը և պատմական թատերաբեմից իջնելը համընկավ տվյալ տարածաշրջանում մշակութային զարգացումների հետ, ինչը կարող է դիտարկվել ինչպես կենտրոնական կառավարման թուլացման, այնպես էլ հարևան՝ հատկապես իրանական առնչությունների աշխուժացման համատեքստում:
- 8 Ուղեգծային նոր գիտարշավների և պեղումների շնորհիվ ի հայտ եկան մոնումենտալ արվեստի մի շարք բացառիկ հուշարձաններ. հատկապես հիշարժան են Միրիկ 1 ամրոցն իր աստիճանաձև հարթակ-տաճարով, Քաշաթաղի դոլմենատիպ շինությունները («Կռապաշտի տներ»), Ալ լճերի ավազանի սրբազան լանդշաֆտը, բարձր և միջին լեռնային գոտիներում հայտնաբերված վիշապ քարակոթողները: Նոր հետազոտությունները նաև պարզեցին, որ Արցախի տարածաշրջանը եղել է

«կիկլոպյան» ոճի կառուցապատման օջախներից մեկը՝ ուղեկալ դիտակետեր, հոգևոր և վարչական կենտրոններ կամ տնտեսական համալիրներ ներկայացնող կառույցներով:

Ասվածի ենթատեքստում արդիական է դառնում Արցախի մեգալիթյան հուշարձանների ուսումնասիրությունը (նկ.1), ինչը կարող է մեծապես օժանդակել խնդրո առարկա տարածաշրջանի նախապետական և վաղ պետական հասարակությունների զարգացման ընդհանուր պատկերի վերակազմությանը⁸:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն աշխատանքը, որն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Կրթության և գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A207 և 21AG-6A080 ծածկագրով գիտական թեմաների շրջանակում, հենվելով հին և նոր հետազոտությունների վրա, փորձելու է ներկայացնել մեգալիթյան մշակույթի տարատեսակ դրսևորումները Հայկական լեռնաշխարհի արցախյան ենթազոտում:

Ուսումնասիրությունը գրվել է հեղինակային խմբի, մասնավորապես՝ Հ.Ավետիսյանի (Նախաբան, Վերջաբան, Գլուխ V), Ա.Գնունու (Գլուխ I, III), Գ.Սարգսյանի (Գլուխ I), Լ.Մկրտչյանի (Գլուխ IV) և Ա.Բորոխյանի (Գլուխ II) կողմից: Ռուսերեն ամփոփումը շարադրվել է Ա.Գնունու, անգլերենը՝ Մ.Մանսուրյանի կողմից: Հեղինակները հատուկ շնորհակալություն են հայտնում Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամին՝ այս գրքի հրապարակումը հովանավորելու համար:

⁸ Այս մասին մանրամասն տե՛ս Müller 2011:

ԳԼՈՒԽ I

ՄԵԳԱԼԻԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մեգալիթ ընդունված է անվանել մեծ քարերից կառուցված շինությունները կամ կոթողները: Եզրույթի սահմանները ոչ միշտ են հստակ. սովորաբար մեգալիթների թվին են դասվում մենհիրները, մենհիրների «պուրակները», հենջերը, դոլմենները և կրոմեխները՝ հիմնականում Արևմտյան Եվրոպայում: Լայն իմաստով մեգալիթյան թաղում հաճախ համարվում է նաև ցանկացած վերգետնյա խուց, անկախ քարերի չափերից¹: Բացի այդ, մեգալիթների թվին են դասվում կիկլոպյան շարվածքով այլ հուշարձաններ, օրինակ՝ Մալթայի ամրոցները կամ Սարդինիայի աշտարակները²:

Մեգալիթները կոլեկտիվ հիշողության համակարգում. Թեպետ «մեգալիթ» եզրույթը շրջանառության մեջ է մտել միայն 1840 թ.³, սակայն իրականում մեգալիթների մասին հիշատակությունները գալիս են դարերի խորքից: Քարը և քարե կոթողները ողջ աշխարհում և մասնավորապես Հայաստանում հնուց պաշտամունքի առարկա են: Տարբեր ժողովուրդներ մեգալիթներն անվանում էին «փերիների քարեր» (Քենտ), «կայծակի քարեր» (Պորտուգալիա)⁴, «հսկաների մահճակալներ» (Հոլանդիա)⁵: Ժայռերի վրա թասաճև փորվածքները հայտնի են Ս. Կույս Մարիամի ոտնահետքեր, Հովվի ժայռ, Այծի ժայռ (Ֆրանսիա), Սատանայի ժայռ (Պորտուգալիա) անուններով⁶: Ժողովրդական բա-

նահյուսությունը կովկասյան մեգալիթները կապում է թզուկների տների հետ⁷: Օսական առասպելը դոլմենների կառուցումն առնչում է հսկաների հետ⁸: Դոլմենները նույն կերպ է մեկնաբանում XVII դ. հոլանդացի հեղինակ Ջ. Պիկարդը⁹:

Հայ իրականության մեջ քարապաշտությունը հիշատակվում է Եզնիկ Կողբացու և Ագաթանգեղոսի աշխատություններում¹⁰: Ավելին, Ագաթանգեղոսը ակնարկում է քարապաշտության կապը նախնիների պաշտամունքի հետ (հմմտ. «փայտին ասացին՝ այր իմ ես դու եւ քարին, թե քո իսկ է ծնեալ զմեզ»¹¹): Բենսէն նշում է, որ Բուլանըլսի հայ կիսն իր զարմանքն արտահայտում էր «վույ անժաժ քարեր, անժաժ պալեր (ժայռեր) ըլնի» խոսքերով¹²: Դիցաբանության և ժողովրդական բանահյուսության բազմաթիվ սյուժեներ թույլ են տալիս ենթադրել, որ խոսքը բնական կամ մարդու ստեղծած մեգալիթյան հուշարձանների մասին է:

Աղբյուրներում հիշատակվում են պաշտամունքի առարկա ժայռեր, քարեր, դամբարանների վրա դրված կոթողներ, խաչմերուկներին դրված հուշայուներ, քարակույտ զոհասեղաններ, կոնաճև քարեր (օմֆալոս): Հիշատակվում են նաև կոնկրետ հուշարձաններ: Այսպես, որոշ կոթողներ կարելի է նույնացնել մենհիրների հետ (քար կամ սյուն խաչմերուկին, քար, որի տակ թաղված են վարպետը և

¹ Брей, Трамп 1990, 153.

² Kipfer 2000, 343.

³ Herbert 1849.

⁴ Cambry 1805, 82, 158.

⁵ Непомнящий, Кривцов 2001, 220.

⁶ Varuch 1907, 54, 74.

⁷ Зотов 1915, 79-82.

⁸ Меликсет-Бек 1938, 8.

⁹ Picardt 1660, 23.

¹⁰ Եզնիկ Կողբացի 1826, 38, 109, Ագաթանգեղոս 1909, 13, 124, 149, 160, 217, 297:

¹¹ Ագաթանգեղոս 1909, 172:

¹² Բենսէ 1900, 139:

նրա գործիքները¹³, սարի գագաթին գտնվող քար, որից լույս է բխում¹⁴): Քննելով քարացած Շամիրամ թագուհու մասին հայկական առասպելը՝ Ղ. Ալիշանն այն համարում է մենհիրի հիշատակում¹⁵: Դոլմենների հետ կարելի է նույնացնել հեքիաթներում հանդիպող այն տունը, որտեղ կառուցված է թագավորի գերեզմանը, և որտեղ կարող է թաղված լինել արքայագին¹⁶: Տորք Անգեղի հղկած քարերը, որոնց վրա կենդանակերպ պատկերներ էին արվում, նույնացվում են ժայռապատկերների հետ¹⁷: Առասպելներում բազմիցս հիշատակվում են նաև վիշապ քարակոթողները:

Ավանդագրույցները հիշատակում են նաև մեգալիթյան կառույցների այլ տիպեր: Ժողովրդական առասպելներում հիշվում են աշտարակներ, մասնավորապես աստղի աշտարակը Մասիսի գագաթին, որտեղից երևացել է Բեթղեհեմի աստղը¹⁸: Ավանդագրույցներ են պահպանվել նաև Նեմրութ սարի գագաթին գտնվող աշտարակի մասին, ընդ որում՝ վերջինս նույնացվում է Բաբելոնի աշտարակի հետ¹⁹: Աշտարակը հիշատակվում է նաև հայ պատմիչների երկերում՝ կապված թաղման ծիսակարգի հետ²⁰: Հիշատակվում են նաև պարիսպներ և պատեր (որոնց տակ թաղված է լինում դևը)²¹: Ղ. Ալիշանը նշում է, որ պարիսպների վրա կատարվում էին թաղումներ, որտեղից և գալիս է դրանց բրգաձև հատվածը մահարձան անվանելու սովորությունը²²: Բազմիցս հիշատակվում է նաև վիշապների տաճարը Մասիսի լանջերին²³:

Այսօրինակ հիշատակումների հետ բանահյուսական աղբյուրներում վկայություններ կան կոնկ-

րետ համալիրների մասին, որոնց գտնվելու վայրը հնարավոր է որոշել:

Շատ են հիշատակվում տարբեր տեսակի ցից քարերը կամ/և ծիծ քարերը: Մասնավորապես, մեկուսի կանգնած ցից քարերը Վասպուրականում հաճախ ավանդաբար կապվում էին Շամիրամ թագուհու հետ (հարս ու փեսի քարը և Ծամբարը Վան քաղաքի Այգեստան թաղամասում)²⁴: Ցից քարերը կարող էին համարվել քարացած (Գետաշեն)²⁵ կամ գետնի տակ անցած (Սամշվիլդե)²⁶ հսկաներ: Մոավ լեռան գագաթին առկա ցից քարը և կից շինությունները առնչվում են Վաչագան թագավորի կողմից քրիստոնեական նահատակների վկայարանների կառուցման կամ նրա գերեզմանի հետ²⁷: Մեծ Աբուլ լեռան գագաթին գտնվող մենհիրը տեղի բնակչության կողմից համարվում էր Ս. Խաչատուրի գերեզման²⁸: Անձնացյաց գավառի Ագռավաքարի մոտ կար քար կամ քարայր, որտեղ, ըստ ավանդության, դևեր էին բնակվում, որոնք հոշոտում էին անցորդներին²⁹: Քարե սյունը կարող էր կապվել նաև գերբնական զենքի հետ (Այնակա Տեգ քարը Վարազա լեռան հյուսիսային լանջին)³⁰:

Ջորաց քարերի և Նեմրութի մենհիրների շարքերը նույնացվում են քարացած գորքի, իսկ դամբարանները՝ համապատասխանաբար հերոսների գերեզմանների հետ³¹: Բանակի (Նաղիր Շահի գորակայանի) հետ են նույնացվում Շարուրի Սանդուգան վայրի ուղղաձիգ պատը և Քանաքեռից հյուսիս-արևմուտք գտնվող մեգալիթյան համալիրը³²: Փոքր Մասիսի գագաթին հիշատակվում են ցից քարերի շարքերը՝ որպես ուղտի քարավան-

¹³ Гулакян 1983, 82, 156, 304-305.

¹⁴ Гулакян 1983, 156, Սասունցի Դավիթ, 1977, պատում է, 11, 440-450:

¹⁵ Ալիշան 1910, 45:

¹⁶ Гулакян 1983, 82.

¹⁷ Մովսես Խորենացի 1991, II:

¹⁸ Bryce 1879, 209.

¹⁹ Բենսե 1900, 138:

²⁰ Փառստոս Բուզանդ 1883, 151-152, 205:

²¹ Гулакян 1983, 304.

²² Ալիշան 1910, 445:

²³ Ս. Գրիգոր Պարթև 2002, 148-153:

²⁴ Լավայեան 1914, 28:

²⁵ Джейранов 1898, 64.

²⁶ Тетцов 1890, 132.

²⁷ Բարխուդարեան 1902, 84, Բարխուդարյան 1995, 153, Հարությունյան 1991, 93-94:

²⁸ Ростомов 1898, 25-26.

²⁹ Ալիշան 1910, 42:

³⁰ Լավայեան 1914, 29: Ե. Լավայանը այս քարը համարում է Առնակ աստծո պաշտամունքի վկայություն:

³¹ Լավայեան 1898, 174-175, Սրուանտեանց 1874, 47-48:

³² Լավայեան 1904, 262, Гарстаузен 1857, 215-217:

ներ³³: Նմանատիպ անվանում (Հովվի քարեր) ունեն Վասպուրականում՝ Վերին Խոշապի Պահանգ գյուղի մոտակայքում և Առնոս լեռան լանջերիցից քարերի շարքերը³⁴:

Մշո Ս.Կարապետ վանքի՝ բուժիչ հատկություններով տաշտածն քարն, ըստ ավանդության, Տրդատ թագավորը բերել էր Մասիսի գագաթից³⁵: Մոկսի Ս.Ամենավրկիչ վանքում գտնվող փոսիկավոր քարը կոչվում էր մոգերի քար և կապվում էր ավետարանական մոգերի՝ դեպի Երուսաղեմ ճանապարհին հանգրվանելու հետ³⁶: Թասաձն փորվածքով քարը Նարեկավանքում համարվում էր Ս.Գրիգոր Նարեկացու ոտնահետք³⁷: Կարսի մարզի Բաշ Շորագյալ գյուղի Ս.Հովհաննես եկեղեցու բակում գտնվող բաժակատիպ քարը կապվում էր Ս.Սարգսի հետ³⁸: Սանդաձն քարերը երբեմն կարող էին առնչվել լուսատուների պաշտամունքի հետ³⁹:

Նույն կերպ բանահյուսական աղբյուրներում հաճախ են հիշատակվում դամբարանադաշտերը, որոնք հաճախ անվանվում են «ջիներ», «տիտաններ», «հսկաներ», «օղուզներ»⁴⁰: «Օղուզի քյալաֆաներ» էին անվանվում նաև Օշականի դղմենատիպ կառույցները⁴¹, իսկ Եղվարդի դամբարանադաշտը դեռևս XVIII դ. հայտնի էր «օղուզ» անունով⁴²: Նույն «օղուզ» անունով էին կոչում Սևանա

լճի ավազանի⁴³, Քարհատի (Դաշքեսանի)⁴⁴ դամբարանները⁴⁵: Կիկլոպյան ամրոցները հաճախ կոչում էին «ջինվիզների ժամանակների» կառույցներ⁴⁶:

Ավանդույթներում հիշատակվում են նաև աշտարակատիպ կառույցներ՝ մասնավորապես Արդար Դավթի մասին պատումներում⁴⁷: Բանահյուսական աղբյուրները խոսում են նաև ամրոցների և ճանապարհների մասին: Այսպես, Տալքի ամրոցները⁴⁸, Արուլ լեռան ամրոցը և ժայռավոր ճանապարհը կապում էին Քյոռ օղու⁴⁹, նահապետների⁵⁰ հետ, իսկ Մասիսի լանջին գտնվող ժայռավոր ճանապարհը՝ Ս.Վարդանի հետ:

Մեգալիթները ճանապարհորդների հուշերում. Հայաստանի մեգալիթյան հուշարձանները բազմիցս հիշատակվում են ճանապարհորդների կողմից: Այսպես, հիշվում են Նեմրոթ լեռան լանջին գտնվող մենհիրների շարքերը, Վանի Ագռավաքարի մերձակայքում գտնվող քարերի կուտակումները, Ամասիա քաղաքից ոչ հեռու գտնվող քարե պուրները⁵¹: Կիկլոպյան պատեր են հիշատակվում Քանաքեռի մոտ⁵², Շարուրում (Սանդուգան)⁵³ և Մեծ Մասիսի լանջերին⁵⁴: Բնական և արհեստական մենհիրատիպ հուշարձաններ են փաստագրվել նաև Սղնախում (Արցախ)⁵⁵, Վարազա լեռան հյուսիսային լանջին, Մոկսում⁵⁶, Գյումուշխա-

³³ Ծոցիկեան 1917, 413-414:

³⁴ Լալայեան 1914, 29-30:

³⁵ Աղդեասեան 1898, 56: Սիմեոն Լեհացին այս տաշտածն քարը կապում է Ս. Գրիգոր Լուսավորչի անվան հետ (Սիմեոն Լեհացի 1997, 119):

³⁶ Լալայեան 1914, 29:

³⁷ Միրախորեան 1884, 112:

³⁸ Бунятов 1891, 140.

³⁹ Լալայեան 1896, 349:

⁴⁰ Սրուանձտեանց 1876, 130, Թաղիադեան 1846, 142-143:

⁴¹ Ղափանցեան 1914, 91-92:

⁴² Арапатский 1981, 60.

⁴³ Reclus 1900, 138.

⁴⁴ Ресслер 1903, 94.

⁴⁵ Խ. Սամուելյանը «օղուզ» բառը համադրում է «սկյութ» բառի հետ (Սամուելյան 1931, 331):

⁴⁶ Թորամանեան 1921-1922, 209:

⁴⁷ Арапатский 1981, 49, Թաղիադեան 1975, 115-117:

⁴⁸ Ատրպետ 1929, 155, 174-175:

⁴⁹ Ростомов 1898, 27, Եղիազարեանց 1881, 3:

⁵⁰ Խորենացի 1991, I, ԺԲ:

⁵¹ Սրուանձտեանց 1874, 47-48, 50, Սրուանձտեանց 1879, 71:

⁵² Гартхаузен 1857, 216: Հատկանշական է, որ տվյալ համալիրները բնորոշվում են համար Ա. Հաքստհաուզենն առաջիններից է, որ օգտագործում է «կիկլոպյան» բնորոշումը:

⁵³ Լալայեան 1904, 262:

⁵⁴ Մխիթարեան 1904, 158:

⁵⁵ Լալայեան 1897, 188:

⁵⁶ Լալայեան 1914, 29-30:

նեում⁵⁷։ Մենհիրների հետ մեկտեղ գրառումներում նշվում են նաև Բուլանըխի, Ամասիայի⁵⁸, Քիրս լեռան գագաթի⁵⁹ մարդակերպ արձանները։ Չափազանց էական են վիշապ քարակոթողների հիշատակումները ժողովրդական հավատալիքներում⁶⁰։ Խարբերդում և Սշո Ս. Կարապետ վանքում հիշատակվում են հարթակ գոհասեղաններ⁶¹։ Պարզագույն մեգալիթյան կառույցների թվում հիշատակվում են իրար վրա դրված քարերը (տետրալիտները) Սամշվիլդեում⁶²։ Բրգաձև կառույցներ են նշվում Մեծ Մասիսի լանջերին⁶³, աշտարակատիպ կառույցներ՝ Սշո Ս. Կարապետ վանքում⁶⁴։

Մեգալիթների հնագիտական ուսումնասիրության սկզբնավորումը. Ինչպես և ողջ Կովկասի հնագիտության համար, Հայաստանում մեգալիթների ուսումնասիրության գործում մեծ դեր ունեցավ Թիֆլիսի Հնագիտական V համագումարը, որի նախապատրաստական նյութերում արդեն հիշատակվում են Հարժիսի մենհիրները⁶⁵։ XIX դ. սկսվում է նաև Զորաց քարերի մեգալիթյան համալիրի ուսումնասիրությունը։ Հետագայում նմանատիպ մենհիրների շարքեր, կրումելիսներ և դրանց համադրություններ հայտնաբերվում են նաև Գեղարքունիքում, Վայոց ձորում և Կարսի մարզում⁶⁶։

Սկսած XIX դ. ուսումնասիրվում են նաև մեգալիթյան թաղման սրահները և դոլմենատիպ կառույցները (Աղստևի հովիտ, Ռեդկին Լագեր)⁶⁷։ Նմանատիպ կառույցներ հիշատակվում են Կարսում⁶⁸, Վայոց ձորում⁶⁹, Սյունիքում (Վերիշեն)⁷⁰։

XIX–XX դդ. սահմանին սկիզբ է առնում վիշապ քարակոթողների ուսումնասիրությունը Տայքից, Սարիղամիշից մինչև Արագած և Գեղամա լեռներ ընկած գոտիներում⁷¹։

Հետազոտությունների երկրորդ փուլը (1910–1930-ական թվականներ). Թեպետ XIX դ. ընթացքում և XX դ. սկզբին մեգալիթյան հուշարձանների հնագիտական հետազոտությունների բնագավառում որոշ աշխատանքներ արդեն կատարված էին, սակայն դրանք կրում էին մասնակի բնույթ։

XIX–XX դդ. սահմանին սկսվում է Օշականի համալիրների հնագիտական ուսումնասիրությունը Խաչիկ վարդապետ Դադյանի, կոմս Ուվարովի, Գ. Ղափանցյանի⁷² կողմից։ Սակայն Օշականի մեգալիթյան թաղումների համակարգված հետազոտությունն իրականացրել է Թ. Թորամանյանը⁷³։

Մեգալիթյան հուշարձանների ուսումնասիրության գործում մեծ ավանդ ունեցավ Ա. Քալանթարը, որը 1923–1924 թթ. նման կառույցներ փաստագրեց Սյունիքում, Արագածոտնում, Շիրակում, Լոռիում։ Նա փորձ է կատարել խմբավորելու մեգալիթյան հուշարձանները 22 շրջաններում, որոնք ընդգրկում են Արագածի լանջերը՝ Օշականից (Օշական, Աղավնատուն, Ծաղկալանջ) Շամիրամ⁷⁴։

Նույն ժամանակաշրջանում Ս. Լիսիցյանի կողմից շարունակվեցին Զորաց քարերի հետազոտությունները։ Նա ամբողջացրեց հուշարձանի մասին գոյություն ունեցող տեղեկությունները՝ առանձին անդրադառնալով կենտրոնական դոլմենատիպ կառույցին⁷⁵։

Նշված ժամանակաշրջանին են վերաբերում վիշապ քարակոթողների առաջին լուրջ ուսումնասիրությունները։ Մասնավորապես հարկ է նշել Ն. Մառին և Յ. Սմիռնովին, որոնք 1909–1910 թթ. Գե-

⁵⁷ Սրուանձտեանց 1884, 37–38։

⁵⁸ Սրուանձտեանց 1879, 71։

⁵⁹ Լալայեան 1897, 192։

⁶⁰ Ростомов 1898, 53, 93–94։

⁶¹ Սիմեոն Լեհացի 1997, 115, 120։

⁶² Терцов 1890, 160։

⁶³ Միսիթարեան 1904, 147։

⁶⁴ Սիմեոն Լեհացի 1997, 119։

⁶⁵ Байерн 1871, 308–309։

⁶⁶ Լալայեան 1904, 246։

⁶⁷ Протоколы 1879, 32, Байерн 1882, 17–22։

⁶⁸ Янович 1904, 8։

⁶⁹ Лалаян 1905, 46։

⁷⁰ Լալայեան 1898 a, 31։

⁷¹ Բորովյան 2020։

⁷² Есаян, Калантарян 1988, 6, Լալայեան 1931, 4, 10, Ղափանցյան 1914, 91–92։

⁷³ Թորամանյան 1942, 8։

⁷⁴ Քալանթար 1925, 210–211, 221–222։

⁷⁵ Лисициан 1938, 709–721։

դամա լեռներում փաստագրել են իրենց սկզբնական տեղում գտնվող 19 կոթող⁷⁶:

Հետազոտությունների երրորդ փուլը (1940–2000-ական թվականներ). Դժբախտաբար 1930-ական թվականներից հետո Խորհրդային Միությունում մեգալիթյան հուշարձանների համակարգված հետազոտությունները դադարեցին: Դրանք ուսումնասիրվում էին միայն այլ հուշարձանների համատեքստում: Միննույն ժամանակ հետազոտությունների այս փուլում սկսվում են այդ հուշարձանների պեղումները, որոնք թույլ են տալիս պարզել դրանց ժամանակագրական սահմանները:

Հարկ է հիշել Մ.Հասրաթյանի հետազոտությունները Օշականում և Սյունիքում⁷⁷: Հայաստանի Հանրապետության տարածքում վաղագույն մեգալիթյան կոթողներից մեկը հայտնաբերվել է 1950–1960-ական թվականներին Շենգավթի վաղբրոնզե դարյան բնակավայրի պեղումների ընթացքում⁷⁸: Ք.ա. III հազ. սկզբին կառուցված Մոխրաբլուրի տաճարի գագաթին կանգնեցված էր բազալտե մենհիրանման կոթող⁷⁹: Վաղ բրոնզի դարով է թվագրվում Հառիճի դամբարանադաշտում պեղված դոլմենատիպ կառույցը⁸⁰: Այս դարաշրջանում է հիմնադրվել նաև Քարվաճառի բնակատեղին, որտեղ կենտրոնական դիրք է զբաղեցնում մեծ քարերից կառուցված մոնումենտալ կառույցը՝ 20 մ տրամագծով և 2 մ լայնությամբ պատերով⁸¹:

1970–1980-ական թվականներին Օ.Խնկիկյանի կողմից շարունակվեցին Ջորաց քարերի պեղումները⁸², իսկ Գ.Արեշյանի կողմից՝ Շամիրամի հնագիտական ուսումնասիրությունները⁸³: Պեղումներ իրականացվեցին նաև Քարհատի (Դաշքեսանի) շրջանում: Այստեղ՝ Դաշլի թեփե և Դաշլի թեփե II կիկլոպյան ամրոցների շրջակայքում՝ Անանուն լեռան գագաթին, պեղվեցին 6–30 մ տրամագծով ուղղահայաց դրված քարերի շրջաններ⁸⁴: Բացառիկ

նշանակություն ունեցան Թոեղքի դամբարանների պեղումները: Որոշ դամբարանաբլուրների գագաթներին դրված էին մենհիրներ, իսկ դեպի դամբարաններ էին տանում սալահատակված ճանապարհներ՝ երբեմն մի քանի հարյուր մետր երկարությամբ⁸⁵:

Ուսումնասիրվում են նաև պարամեգալիթները, որոնք ներկայացված են քանդակագործ ժայռային ելուստներով, ժայռային բեկորներով և ժայռափոր կերտվածքներով: Այսպես, 1970–1990-ական թվականներին տասնյակ նմանատիպ կոթողներ են ուսումնասիրվել Վանա լճի ավազանում⁸⁶: ՀՀ տարածքում այդպիսի հուշարձաններից հարկ է նշել Բյուրականի պաշտամունքային ժայռը⁸⁷:

Հետպատերազմյան շրջանում՝ 1940–1980-ական թվականներին, վիշապ քարակոթողների հետազոտությունը, որոշ բացառություններով հանդերձ⁸⁸, դարձավ անկանոն: Այս ընթացքում երկու կոթող հայտնաբերվեց հնագիտական պեղումների արդյունքում. մասնավորապես 1963 թ. Գառնիում՝ Ք.հ. III դ. պալատական համալիրի հիմքում⁸⁹, և 1980 թ. Լճաշենում՝ միջինբրոնզեդարյան դամբարանում⁹⁰: Վերջին տարիների հետազոտությունները թույլ տվեցին ճշգրտել վիշապ քարակոթողների տեղադրման սկզբունքները, հնարավոր գործառնությունները: Ուսումնասիրության թիրախ դարձան հիմնականում Արագածի լեռնագանգվածի հարավային և Գեղամա լեռների հարավարևմտյան լանջերը, որտեղ նախկին հետազոտողները հիշատակում էին վիշապ քարակոթողների հիմնական կուտակումների մասին: Առավել անորոշ էին նախկին տեղեկությունները Վարդենիսի և Սյունիքի լեռների կոթողների մասին:

Ուսումնասիրություններ Արցախում. Արցախում մեգալիթյան հուշարձանների փաստագրումը սկսվել է դեռևս XIX դ.: Այսպես, Ե.Լալայանը նշում է մի շարք հուշարձաններ (ինչպես բնական, այն-

⁷⁶ Դափանցյան 1914:

⁷⁷ Հասրաթյան 1985, 166–201, 209–218:

⁷⁸ Մարդարյան 2004, 295:

⁷⁹ Areshyan 2005, 83–84.

⁸⁰ Хачатрян 1975, 56.

⁸¹ Исмаилов, Даниелян 1979, 4.

⁸² Хнкикян 2002, 26, 60–61, il. 4, pl. VI.

⁸³ Арешян 1978, 503–504.

⁸⁴ Кесманлы 1975, 472.

⁸⁵ Нариманишвили 2009, 97–103.

⁸⁶ Işık 1995.

⁸⁷ Գևորգյան, Պետրոսյան 1993, 20–23:

⁸⁸ Բարսեղյան 1967:

⁸⁹ Аракелян, Арутюнян 1966.

⁹⁰ Խանգաղյան 2005:

պես էլ մարդու ստեղծած), որոնք կարելի է նույնացնել մեգալիթների հետ: Մասնավորապես հիշատակվում են պաշտվող քարեր Սղնախում (Դուկ քարը), Քյաթուկում, Աշանում, Ներքին Թաղավարդում⁹¹, Գետաշենում, Էրքեջում, Մուրուտում⁹²: Այս համատեքստում Լալայանն առանձնացնում է Սխտորաշենի և Քարին տակի ցից քարերը, որոնք համեմատում է մենհիրների հետ⁹³: Արժանահիշատակ է Ալամանց գոմեր տեղամասի բնական մեգալիթը, որը կարելի է նույնացնել տետրալիթի հետ⁹⁴: Հիշվում են նաև պաշտվող քարակույտեր Կուսապատում, Շուշում, Ավդուտում⁹⁵:

XIX դ. վերջից ցից քարերը փաստագրվում են նաև հնագիտորեն, մասնավորապես դամբարանների համատեքստում: Այսպիսի կոթողներ փաստագրել է Է.Ռյուպերը Գանձակի շրջանի դամբարաններում: Ընդ որում, ցից քարերը դրված են եղել ինչպես խցին կից⁹⁶, այնպես էլ՝ խցի մեջ⁹⁷:

Սկսած XIX դ. ուսումնասիրվում են նաև մեգալիթյան թաղման կառույցները (Է.Ռյուպերը մեգալիթյան կառույցների թվին է դասում Խոջալուի դամբարանաարանները⁹⁸), դոլմենատիպ կառույցները Գանձակում, Քարհատում և Շուշիի շրջանում⁹⁹:

1930-ական թվականներից հետազոտություններ են ընթանում նաև Փոքր Կովկասի նախալեռներում: Այստեղ Ի.Ջաֆարզադեի կողմից հաստատագրվում են մի շարք մենհիրների շարքեր, ուղղանկյունաձև դասավորված ցից քարեր (հեղինակը բնորոշում է դրանք աղբյուրներին hasar՝ ցանկապատ բառով) և կրոնիկներ¹⁰⁰:

1930-ական թվականների վերջում Յա. Գումելը պեղումներ է իրականացնում Կուրի միջնահոսանքում

(Գանձակ, Խանլարի Գետաշենի ենթաշրջան): Հատկանշական է, որ այդ աշխատանքները փաստում են մեգալիթյան կառույցների և դամբարանադաշտերի՝ միասնական համատեքստում գտնվելը: Մասնավորապես, Խանլարի դամբարանադաշտում հեղինակը պեղել է ծխական նշանակության քարակույտ, որի տակ բացվել է հիմնահողային փոս: Նույն տարածքում արձանագրվում են նաև մի շարք հնագույն ճանապարհներ: Այսպիսի ճանապարհներից մեկի՝ տափորակ հարթակի վրա դրված էին մենհիրներ, որոնք դասավորված էին ինչպես շարքերով, այնպես էլ շրջաններով և ուղղանկյունաձև շարված քարերով: Ուշադրության է արժանի նաև այսպես կոչված թիվ 36 «պաշտամունքային դամբարանաբլուրը»: Այստեղ՝ բլրի գագաթին, դրված էին քարաբեկորների շարքեր և քարե շրջաններ: Յա. Գումելի ենթադրությամբ՝ այստեղ եղել է բրոնզի դարաշրջանի ինչ-որ խոշոր կառույց¹⁰¹:

Հետպատերազմյան շրջանում ամբողջացվեցին և շարունակվեցին Է.Ռյուպերի պեղումները Իվանյանի դամբարանադաշտում: Այստեղ Կ.Քուչնարյովան առանձնացրել է դոլմենանման քարարկղերի մի խումբ, որոնց խցերի մակերեսը երբեմն գերազանցում էր 30 մ քառ.: Նույն տարածքում գտնվեց երկու մենհիր, որոնց շրջանում քարաբեկորներից շարված պատերով մեծ և բարդ հատակագիծ ունեցող կառույց էր¹⁰²:

Այսքանով հանդերձ, արցախյան մեգալիթները երբեք չեն դարձել առանձին հետազոտության առարկա:

⁹¹ Լալայան 1897, 188-191:

⁹² Լալայան 1900, 329-331, Джейранов 1898, 89.

⁹³ Լալայան 1897, 189:

⁹⁴ Լալայան 1897, 189:

⁹⁵ Израелов 1891, 48, Լալայան, 1897, 190:

⁹⁶ Ресслер 1904, 45-46.

⁹⁷ Ресслер 1904, 44, 59.

⁹⁸ Ресслер 1900, 154.

⁹⁹ Ресслер 1901, 94.

¹⁰⁰ Джафарзаде 1956, 39.

¹⁰¹ Гуммель 1940, 75, 77, 103-105.

¹⁰² Кушнарева 1970, 109-116.

ԳԼՈՒԽ II

ՄԵԳԱԼԻԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մեգալիթյան հուշարձանները կարող են դասակարգվել ըստ տիպերի և գործառնությունների: Ըստ գործառնության տիպաբանելու առաջին փորձը կատարել է Լ.Մելիքսեթ-Բեկը: Նա մեգալիթները բաժանում է երկու խմբի՝ վերնաշենքային (բառի փիլիսոփայական իմաստով) և հենքային: Առաջինների թվին դասվում են ծխական օբյեկտները՝ մենհիրները, դրանց հետագա զարգացման արդյունք հանդիսացող կենդանակերպ, մարդակերպ արձանները և վիշապները, պոլիլիթները (բիլիթոնները, տրիլիթոնները և տետրալիթները): Հենքային մեգալիթների թվին դասվում են կիկլոպյան ամրոցները, դոլմենները և միջանցքային դամբարանները (բլինդաժները): Վերջին երկու տիպերը Լ.Մելիքսեթ-Բեկը դասում է կացարանների թվին, անկախ այն բանից՝ դրանք նախատեսված են ողջերի, թե հանգուցյալների համար¹:

Առավել մանրամասն է Լ.Մարսադոլովի տիպաբանությունը, որի հիմքում դրված է ժամանակագրական սկզբունքը. բոլոր տիպի մեգալիթները բաժանվում են երկու խմբի՝ հին մեգալիթներ և երկրորդական օգտագործման օրինակներ: Այս խմբերում զատ-զատ դիտարկվում են դրանց գործառնությունները՝ ծխական, թաղման, բնակելի-պաշտպանական և արտադրական²:

Տիպաբանությունն ըստ տեսակների առավել պրակտիկ է: Այս տեսանկյունից են դիտարկվում մենհիրները, կրոմլեխները և դոլմենները³, որոնք սովորաբար միավորվում են դասական մեգալիթների խմբում⁴:

Մենհիրներ. Մենհիրների գիտական նկարագրության առաջին փորձը պատկանում է շվեդ քարտեզագիր և պատմաբան Օ.Մագնուսին: Վերջինս փորձ է կատարում տիպաբանել մենհիրանման հուշարձանները՝ ըստ ձևերի և գործառնությունների: Մասնավորապես նշվում և նկարագրվում են ուղիղ և կլորացող վերնամասով օրինակները⁵:

XVII դ. դանիացի բժիշկ և հնախույզ Օլե Ուորմը, նկարագրելով դանիական և նորվեգական մենհիրները, հիշատակում է գլանաձև և եռանկյունաձև գազաթնամասով օրինակները⁶: Այսպիսով, ավանդաբար, որպես տիպաբանական սկզբունք, ընդունվում էր միայն կոթողի արտաքին ձևը⁷:

Վերջին տարիների հետազոտությունների արդյունքում փաստացի նյութի կուտակումը թույլ տվեց դիտարկել հուշարձանների այս տիպը որպես փոքրածավալ ճարտարապետության օբյեկտ՝ զգալիորեն ընդլայնելով հատկանշային ցանկը, հաշվի առնելով քարամշակման տարատեսակ առանձնահատկությունները:

Առաջնորդվելով մենհիրանման հուշարձանների համալիր նկարագրության սկզբունքով՝ կարելի է դրանք դասակարգել մի քանի ենթախմբերի՝ մենհիրներ (բառի նեղ իմաստով), հուշայտուներ և կոթողներ (միավորելով դրանք վիշապ քարակոթողների, կենդանակերպ և մարդակերպ կոթողների, ինչպես նաև անցումային ձևերի հետ՝ ցից քարերի մեծ խմբում):

Իբրև մենհիր են հաճախ ներկայացվում բոլոր ցից քարերը՝ որպես հիմնական հատկանիշ նշելով

¹ Меликсет-Бек 1938, 130-132.

² Марсодолов 2016, 47.

³ Քալանթար 1925, 211, Լիսիցյան, Բայրություն 1928, 20:

⁴ Цонев 2010, 47.

⁵ Magno 1558, 24.

⁶ Worm 1643, 64, 147.

⁷ Հմմտ. մոնղոլական տափաստանների «եղջերվաքար» մենհիրները՝ սապատավոր (ձկնակերպ), թեք վերնամասով, ճկված իրանով (Кызласов 1978, 25-30):

Աղ. 1. Մենհիրադիպ հուշարձանների հայրկանիշային ցանկը

Ըստ մշակման	Անմշակ, սեպային, կոպտատաշ, սրբատաշ ⁸	
Ըստ ուղվագծերի	Ուղիղ, թեք, ճկված, անկանոն	
Ըստ իրանի ձևի	Չուգահեռանիստ, գլանաձև, կլորացող, սեղանաձև, բրգաձև, մարդակերպ, ձկնակերպ, բազմանիստ, տձև	
Ըստ վերնամասի ձևավորման	Ուղիղ, թեք, սապատավոր, կլորացող, հնգանկյուն, կոնաձև, երկթեք, տձև, սեղանաձև	
Ստորին հատվածի ձևավորումը	Ուղիղ, լայնացող, դրոց, եռանկյուն, թեք, նեղացող, կլորացող, տձև	
Քանդակը	Տեղադրությունը	Վերնամաս, կենտրոն, ստորին հատված, գագաթ
	Ձևավորումը	Միջանցիկ անցք, փորվածք, մարդակերպ, կենդանակերպ, այլ

քարի չափերը (մինչև 3-4 մ) և երկարուկ ձևը⁹։ Ի լրումն այս հատկանիշների՝ հաճախ նշվում է կոպտատաշ կամ գրեթե անմշակ լինելու փաստը¹⁰, որը փաստորեն մենհիրների հիմնական տարբերանշանն է։ Գրեթե բոլոր մենհիրները ուղիղ են, իսկ իրանը տձև է կամ զուգահեռանիստի տեսք ունի։ Քանդակը սահմանափակվում է միջանցիկ անցքերով կամ փոսիկներով։ Մենհիրների թվագրումը լուրջ հիմնահարցերի տեղիք է տալիս, սակայն Արուճի №5 դամբարանի, Շամիրամի №1 մենհիրի պեղումները թույլ են տալիս ենթադրել, որ նշված հուշարձանները առավելապես տարածվում են Ք.ա. II հազ. կեսից¹¹։

Հուշայությունը. Ցից քարերի հաջորդ մեծ խումբը հուշայություն են (obelisk)¹², որոնք առաջին անգամ հիշատակում է Օ.Մագնուսը¹³։ Կոթողների այս խումբը տարբերվում է լավ մշակմամբ, գրեթե սրբատաշությամբ։ Այսօրինակ կոթողներ փաստագրված են Գոլովինոյում¹⁴, Գոմքում և Հարժիսում։ Հարժիսյան հուշայություն ունի փոսիկներով օղակված համակենտրոն շրջանի քանդակ, որն ունի զուգահեռներ Ք.ա. VII-V դդ. խեցեղեն և մետաղե առարկաների վրա¹⁵։

Կոթողներ. Ցից քարերի համատեքստում առկա են քանդակազարդ հուշարձաններ (Լեոնարոտ, Խնածախ, Տեղ, Արենիի քրիստոնեացված հուշարձանները)¹⁶։ Բացի քանդակազարդ մակերեսից, այս տիպի հուշարձանների հատկանշական գծերից

կարելի է համարել համեմատաբար լայն համամասնությունները, իսկ երբեմն՝ քառակուսուն մոտեցող լայնակի հատվածը։

Կոտքեր. «Կոտք» բառն ունի լայն իմաստ։ Այստեղ դիտարկվում են միայն այն կոտքերը, որոնք, լինելով համեմատաբար փոքրածավալ, կրկնում են ցից քարերի ձևերը։ Այս տիպի կոթողների թվին պետք է դասել Արվականի մեծ դամբարանից հայտնաբերված կենդանակերպ կոտքերը¹⁷։ Դրանցից առաջինը պատրաստված է մոխրագույն ծակոտկեն բազալտից։ Իրանն անկանոն պրիզմաձև մարմին է՝ կլորացված անկյուններով։ Քանդակի հետևի մասն անմշակ է, հետևաբար, կոտքը կամ հենած էր պատին, կամ ներդրված էր պատի մեջ։ Իրանի վերին հատվածում սեգմենտաձև փորվածք է, իսկ ստորին հատվածում ուղղահայաց ակոսներ են։ Գլխիկը նույնպես վեցանիստ է։ Այն իրանից բաժանված է խորը ակոսով։ Չի բացառվում, որ քանդակը պատկերում է գիշատիչ թռչնի ձագ։

Երկրորդ կոտքը պատրաստված է վարդագույն կոնգլոմերատից և ունի անկանոն եռանիստ պրիզմայի տեսք։ Այն կոպտատաշ է։ Իրանն ու գլխիկն իրարից զատվում են ոչ խորը ակոսով։ Արձանն իրանի ուղվագծերով նմանվում է արջի ձագի¹⁸։

Կոտքեր հայտնաբերվել են նաև Միրիկում. in situ վիճակում դրանք գտնվել են ամրոցի տաճարական կառույցի և ժայռային դարպասների միջև ըն-

⁸ Քարամշակման եղանակները ներկայացված են ըստ Берлин и др. 1979, 40:

⁹ Բաթիստոպոլսի 1935 33:

¹⁰ Լիսիցյան, Բայբուրթյան 1928, 20:

¹¹ Շամիրամի №1 մենհիրի դամբարանի նյութերը պահվում են ԷՊԱԹ-ում (ի/հ 2766-2771, Արեշյան, Թումանյան 1991, 26):

¹² Տե՛ս օր.՝ Cambry 1805, X:

¹³ Magnus 1658, 11: Հուշայություն հիշատակվում են Հյուսիսային Եվրոպայում՝ կանգնեցված ի հիշատակ հերոսների կամ ինչ-որ իրադարձության, կամ էլ տեղադրված դամբարանների վրա (Magnus 1658, 11-13):

¹⁴ Թումյան 1937, նկ. 30:

¹⁵ Ավետիսյան և այլք 2021, 212-213:

¹⁶ Այս տիպի հուշարձանները երբեմն զատվում են մեգալիթների ընդհանուր համատեքստից՝ դասվելով այսպես կոչված պարամեգալիթների թվին (Цонев 2010, 51):

¹⁷ Գևունի, Խաչատրյան 2010, 58:

¹⁸ Բաթրոշումները՝ Մ. Աղամյանի, Ն. Մանասերյանի (Գևունի, Խաչատրյան 2010, 59):

կաձ բաց տարածքի կենտրոնում: Կուռքերի բարձրությունը 0,5–0,7մ է, դրված են շարքով: Թեպետ կուռքերի վերնամասը հիմնականում կոտրված է, սակայն դրանցից մեկի գլխամասը իրանից բաժանված է ակոսով¹⁹: Եվս երեք կուռք ներդրված էր №2 դամբարանի դրոմոսում: Դրանք կարող էին օգտագործվել որպես շինաքար (հմնտ. Եզնագոմերի կուռքերը), սակայն կարող էին ունենալ նաև խորհրդանշական իմաստ՝ փակելով դրոմոսի մուտքը: Կուռքերը կոպտատաշ են, վերնամասում միջանցիկ անցք է: Կուռքերից երկուսը տձն են, իսկ երրորդը նմանվում է սապատաձն մենհիրներին:

Մարդակերպ կուռք հայտնաբերվել է նաև Անդոկաբերդի միջնաբերդից: Այն տուֆակերտ է, կոպտատաշ և առանձնահատկություններով մոտենում է Ք.ա. I հազ. կեսին բնորոշ մարդակերպ քանդակներին²⁰:

Կուռքերի թվին պետք է դասել նաև երկու ձկնակերպ-վիշապակերպ քարեր: Դրանցից առաջինը փաստագրված է Քաշաթաղի շրջանի Վարդուտ գյուղում և, ամենայն հավանականությամբ, տեղադրված է եղել բարձր քարահողային լիցքով դամբարանի վրա (այն գրեթե հիմնովին ավերվել էր ճանապարհաշինարարության ժամանակ) (նկ. 63): Տարածքում հայտնաբերված խեցեղենի առանձին բեկորները բնորոշ են Ք.ա. XIV–XIII դդ.²¹: Երկրորդը ևս ձկնակերպ է, բերվել է Քաշաթաղի շրջանի Որոտան գյուղից՝ ավազահանքի տարածքից²² (նկ. 64, գձանկ. 6):

Կուռքերի համատեքստում պետք է դիտարկել նաև Գյունեշ թեփեից հայտնաբերված օրինակը, որի վերնամասը զատվում է խորը ակոսով՝ կազմելով ֆալիկ արձանի սֆերիկ գլխամասը: Իրանը տձն է, եռանկյունաձև ստորին հատվածով: Արձանի ստորին հատվածում առկա է փոսիկ²³:

Այսպիսով, Ք.ա. I հազ. կեսից դիտարկվում է մենհիրանման կերտվածքների փոքրացման և դրանք կուռքերի վերածելու միտում:

Անցումային ձևեր. Կարելի է առանձնացնել ցից քարերի ձևեր, որոնք միավորում են առանձին տիպեր.

1. Մենհիր-հուշայայուն. Մի շարք կոթողներ կրում են ինչպես մենհիրներին, այնպես էլ հուշայայուններին բնորոշ գծեր²⁴: Վերջիններիս թվին կարելի է դասել համեմատաբար լավ հղկվածությունը և/կամ հատույթում հստակ քառանկյունությունը: Այսպես, Արտավանի №2 մենհիրի կողային հատվածները և դիմային հատվածը լավ մշակված են, անկյունները՝ ընդգծված: Քառակող, ընդգծված անկյուններով, թեք վերնամասով մենհիրներ առկա են մի շարք վայրերում (Դաղիվանքի խաչքարացված մենհիր, Աբովյանի Կապույտ խաչ խաչքարացված մենհիր, Հարժիսի Բարևախաչ մատուռի հարավային պատի մեջ ագուցված խաչքարացված մենհիր)²⁵:

2. Մենհիր-մարդակերպ քանդակ. Արձանների այս տիպը երբեմն համարվում է կոթողի մարդակերպացման փուլերից մեկը, որը կարող է արտահայտվել կոթողին մարդու ռճավորված ուրվագծեր տալով, մարդկային ուրվագծեր հիշեցնող բնական քարերի օգտագործմամբ²⁶: Այդօրինակ կոթող հայտնաբերվել է Փոքր Ալ լիճը եզերող քարացրոններում (Ալ լիճ 8)²⁷: Թեպետ այն խիստ ռճավորված է, սակայն որոշ հատկանիշներ (հնգանկյուն վերին հատվածը²⁸) կոթողին մարդակերպություն են հաղորդում: Այս նույն համատեքստում պետք է դիտարկել Որոտանի մահմեդական գերեզմանոցի երկրորդային օգտագործման մենաքարերից մեկը (նկ. 147–149, մասնավորապես՝ 149-ը)²⁹:

3. Հուշայայուն-մարդակերպ քանդակ. Այս խմբին պատկանող Հարժիս 27-ը ունի գլանաձև և դեպի վեր նեղացող իրան (չափերը՝ 225×37×35սմ): Մարդու դեմքը իրանի վերնամասում է, գլանաձև ելուստի վրա, որից կարելի է եզրակացնել, որ քննարկվող քանդակը նշանավորում է մենհիրների անտրոպոմորֆիզացիան:

4. Մենհիր (կոթող)-ֆալիկ քանդակ. Այս տիպի կերտվածքների թվին կարելի է դասել «Կռապաշտի

¹⁹ Ավետիսյան և այլք 2019, 11:

²⁰ Մարգարյան և այլք 2022, 155, 160, հմնտ. Առաքելյան 1976, տախտ. III:

²¹ Գևորգի, Խաչատրեան 2003, 252, 270:

²² Ներկայիս Դվին գյուղ է բերվել Որոտան բնակավայրից 2019թ., գյուղի բնակիչ Մայիս Կարապետյանի կողմից: Կոթողը լուսանկարել և Երևան է տեղափոխել ՀԱԻ աշխատակից Հ. Աբրահամյանը:

²³ Исмаилов 1981, 32.

²⁴ Հմնտ. ֆալիկ արձանների վերափոխումը սյուն-կուռքերի (Գևորգի 2004, 125):

²⁵ Ավետիսյան և այլք 2015, 65:

²⁶ Beneteau-Dovillard 2002, 570.

²⁷ Ավետիսյան և այլք 2015, 66:

²⁸ Հնգանկյուն վերնամաս առկա է նաև որոշ մենհիրների պարագայում, օրինակ՝ Բանդիվանի մենհիրում (հետազոտությունը՝ Ա. Բորոյանի):

²⁹ Հետազոտությունը՝ Գ. Մարգարյանի:

տներ»¹ կուռքը, որն աչքի է ընկնում ընդգծված ֆալիկ գլխամասով, ինչպես նաև կոպտատաշ կերտվածքով³⁰:

5. Վիշապոժը. Մենաքարերի խումբ, որը կրում է պատկերագիր ցից քարի՝ վիշապ քարակոթողի (ձկնակերպ, քառակող կյոր քանդակներ) և մենհիրի տարրեր: Վիշապոժը դասական վիշապ քարակոթողից տարբերվում է հաճախ փոքր չափով, ձևով, պատկերի բացակայությամբ³¹:

Հաստատագրված են նաև կենդանակերպ պատկերներով ցից քարեր. պատկերված են օձեր, վիշապներ, արջեր: Այս տիպի մենհիրները, ըստ Մ. Պատոնի, Եվրոպայի հնագույն մեգալիթյան հուշարձաններն են³²:

Պոլիլիթներ. Մեգալիթների համատեքստում առանձին պետք է դիտարկել շքամուտքի՝ պորտալի տեսք ունեցող քարերը երկու ուղղահայաց սյուներից ծածկված հորիզոնական սալով, որոնք հետագայում անվանվեցին տրիլիթոն: Առաջին անգամ դրանք դեռևս XIII դ. հիշատակում է Հ. Հանթինգթոնը³³: Վ. Ստոկելեյն առաջինն էր, որ այսօրինակ կոթողները դիտարկեց որպես ճարտարապետական առանձին տիպ՝ օգտագործելով տրիլիթոն եզրույթը³⁴: Այս նույն խմբին կարելի է դասել նաև բիլիթոնները կամ դարպասները³⁵: Տրիլիթոնները և բիլիթոնները կարող են դրված լինել ինչպես մեկուսի³⁶, այնպես էլ միավորված լինել կրոմլեխի շրջանակի մեջ կամ նշանավորել որևէ մեգալիթյան կառույցի մուտքը: Վերջին համատեքստում պետք է դիտարկել Միդիկի տաճարական համալիրի ժայռային մուտքը:

Պոլիլիթների թվին են պատկանում տետրալիթները կամ շարժվող քարերը, երբ մեծ քարը խնամքով տեղադրված էր ավելի փոքրի վրա³⁷:

Ժայռային կերտվածքներ. Հուշարձանների նշված խմբում կարելի է միավորել մշակված ժայռերը, ժայռաբեկորները, հորիզոնական հարթակները, ժայռային հրապարակները: Այսօրինակ հուշ-

արձանները մեգալիթների թվին կարելի է դասել խիստ պայմանականորեն: Եթե մշակված ժայռերը կամ ժայռաբեկորները որոշակիորեն կարելի է դասել պարամեգալիթների թվին³⁸, ապա հորիզոնական հարթակները և հրապարակները մեգալիթյան հուշարձաններ չեն: Մինչույն ժամանակ, հուշարձանների նշված խմբերը միավորվում են քանդակի առանձնահատկություններով՝ ակնհայտորեն կրելով մարդու ներգործության հետքեր. աստիճաններ, թասաձև փորվածքներ, խորհրդանշական քարե դռներ, արհեստական անձավներ և այլն, ուստի նպատակահարմար է դրանք դիտարկել միասնաբար:

1. Մշակված ժայռեր. Սրանք առավել տարածվում են Վանի թագավորության ժամանակաշրջանում, թեպետ այս ավանդույթն ավելի վաղ է սկիզբ առնում: Այսպես, Բյուրականի աստիճանավոր ժայռ-գոհասեղանի հետազոտության ընթացքում հայտնաբերվել է Ք.ա. II հազ. բնորոշ բրոնզե կացին³⁹: Մշակված ժայռերը հաճախ համալիրի են նմանվում՝ ներառելով որմնախորշեր, հարթակներ, աստիճաններ, բաժակատիպ քարեր⁴⁰:

2. Ժայռային հրապարակներ և հարթակներ. Ժայռափոր հարթակները Հայկական լեռնաշխարհի ամենակայուն մշակութային տարրերից են և բնորոշ են ինչպես բրոնզ-երկաթեդարյան, այնպես էլ ուրարտական և ավելի ուշ շրջաններին: Հարթակների առաջին խմբում կարելի է միավորել ընդարձակ ժայռային հրապարակները (օր.՝ Ագարակ), որտեղ ներկայացված են բազմաթիվ ճարտարապետական տարրեր. տարբեր հատակագծի փոսիկներ, ֆալանման ժայռային ելուստներ, առվակներ, աստիճաններ: Այսօրինակ հրապարակները կարող էին կերտվել բլուրների հարթ գագաթներին կամ գետափնյա մերկացումներին (Ամբերդի և նրա վտակների ափերը)⁴¹: Հաջորդ տիպը հորիզոնական փոքրածավալ քարե հարթակներն են: Նման հուշարձանների դասական օրինակ է Միսիանի տարա-

³⁰ Հմմտ. Տիվայի (Кызласов 1978, 28) և Հյուսիսային Կովկասի (Արմավիր) (Савинов, Членова 1980, 6) «եղջերվաքարերը»՝ ֆալակերպ վերնամասերով:

³¹ Հմմտ. Բորոյսյան և այլք 2015, 298:

³² Patton 2003, 60.

³³ Ferguson 1864-1866, 193-195.

³⁴ Stukeley 1740, 64.

³⁵ Марсацолов 2016, 47.

³⁶ Jones 1655, 62, Aubery 1862, 316.

³⁷ Cambry 1805, 202.

³⁸ Цонев 2010, 52.

³⁹ Գևորգյան, Պետրոսյան 1993, 20-22:

⁴⁰ Հմայակյան 1990, 68, 69:

⁴¹ Аветисян 2006, 256, 257.

ծաշրջանի Նորավան գյուղից ոչ հեռու, դամբանա-դաշտի տարածքում գտնվող կերտվածքը, որը բնական ժայռ է՝ մշակված ֆալաձև ելուստով: Այս և նմանատիպ կերտվածքներն ազգագրական գրականության մեջ ընդունված է անվանել պորտաքար⁴²: Հորիզոնական ժայռային հարթակ հայտնի է Ծիծեռնավանքում (համանուն կիկլոպյան ամրոցի հարևանությամբ), Վերիշենում (Իշակ Մեյդան), Միրիկում (Միրիկ 4):

3. Մշակված ժայռաբեկորներ և ժայռային ելուստներ. Հարթակների այս տիպը երեք ենթատիպով է: Առաջին ենթախմբում միավորվում են լայն հարթ մակերեսով տձև, զուգահեռանիստին մոտեցող կամ պրիզմաձև զոհասեղանները (Մելիքին դուռ⁴³, Միրիկ 5): Երկրորդ ենթատիպը կարծես միջանկյալ դիրք է զբաղեցնում հորիզոնական հարթակների և զանգվածեղ ժայռաբեկորների միջև: Դրանք աչքի են ընկնում համեմատաբար փոքր չափերով և բարձրությամբ: Այս խմբին պետք է դասել Ավանիկի հուշարձանը՝ պորտաքարանման ելուստով: Երրորդ խումբն աչքի է ընկնում գրեթե կոնաձև կերտվածքով՝ նմանվելով մշակված ժայռերի մանրակերտների (հմտ. Գառնիի հուշարձանը⁴⁴ և Ծիծեռնավանք 2 զոհասեղանը՝ իմիտացիոն աստիճաններով):

Քարակույտեր, քարե բուրգեր, աշտարակներ. Հայաստանի մեգալիթյան մոնումենտալ կառույցների մեջ իրենց ուրույն տեղն ունեն աշտարակատիպ շինությունները՝ քառանկյուն⁴⁵ ու կլոր⁴⁶ հատակագծով և գլանաձև, կոնաձև կամ աստիճանաձև տեսքով⁴⁷: Աշտարակները սովորաբար կառուցվել են այլ հուշարձանների, օրինակ՝ դամբարանների համատեքստում⁴⁸: Աշտարակատիպ կառույցների առավել բարդ տիպերից են այսպես կոչված նուրագները՝ բարդ աշտարակային համալիրներ՝ բազմաթիվ անցումներով և միջանցքներով, որոնք բրոնզ-երկաթի դարաշրջանում անցել են էվոլյուցիայի երկարատև ուղի⁴⁹: Աշտարակներն ունեն հնագիտական հստակ միջավայր, ճարտարապետական ձևեր, տեսողական կապի մեջ են

եղել միմյանց ու կիկլոպյան ամրոցների հետ և կատարել են որոշակի գործառնություն:

Սրանց հիմնական լանդշաֆտը նախալեռնային (քարքարոտ կամ ժայռոտ բլուրներ, բլրաշղթաներ) և լեռնային (քարացրոններ ու առապարներ) գոտիներն են: Կառուցված են մեծածավալ կոպտա-տաշ քարերի չոր շարվածքով, կանգնած են մեկուսի՝ իշխելով շրջակայքին: Գտնվում են բարձրադիր, ժայռոտ բլուրների կամ հազվադեպ՝ հարթեցված, թեք տեղանքների գագաթներին՝ դարավանդաձև փովելով ստորոտներին:

Աշտարակները կարող են լինել բնակավայրերում, ամրոցներում և դրանց մերձակայքում (Ձյանբերդ, Մոտկան), դամբարանադաշտերում (Ծաղկալանջ, Հայթաղ, Կարճաղբլուր): Ընդ որում՝ ամրոցների պարսպապատերի մեջ, բրգաշտարակներից կամ որմնահեցերից առանձին աշտարակների առկայությունը վկայում է նրանց՝ ոչ ամրաշինական նպատակով կառուցված լինելու մասին: Դամբարանադաշտում կան աշտարակներ, որոնք առանձնացված են քարաշարերով կամ պատաշարերով (Ուջան 6, Այգեշատ): Դամբարանադաշտում քարաշարերով առանձնացված աշտարակները կարող են հուշել առանձին դամբարանախմբերի գոյության մասին:

Ըստ տեսակների՝ աշտարակները կարելի է բաժանել հետևյալ խմբերի. 1. բլորաձև (այդ թվում փոքր՝ 2–4մ, միջին՝ 5–8մ և մեծ՝ 10մ և ավելի տրամագծով), որոնք, ըստ ծավալատարածական լուծումների, լինում են կոնաձև և գլանաձև, 2. ձվաձև, որոնք առայժմ հանդիպում են միայն Կոտայքի տարածաշրջանում (Ջառ, Ձորաղբլուր), 3. օվալաձև (Ուջան), 4. պայտաձև կամ կիսաշրջանաձև (Ուջան 1, Բյուրական 1, «Օյուղ», Արտանիշ), 5. ուղղանկյուն (Արագածի և Հատիսի շրջակայք), 6. հնգանկյուն (Կարբի)⁵⁰:

Ծիսական աշտարակները կարող էին հանդիսանալ ինչպես զուտ պաշտամունքային օբյեկտներ, այնպես էլ մահվան աշտարակներ⁵¹:

⁴² Լիսիցյան 1969, 200, 285, աղ. CXVIII:

⁴³ Հուշարձանը ուսումնասիրվել է 2014 թ. ԼՂՀ Ջրուսաշրջության գործակալության արշավախմբի կողմից (Գ. Սարգսյան):

⁴⁴ Հետազոտությունը՝ Լ. Մկրտչյանի, Ա. Գնունու:

⁴⁵ Melis 2003, 8.

⁴⁶ De Valerra, O'Nuallain 1972, 84.

⁴⁷ Melis 2003, 24.

⁴⁸ Holmes 1907, 66.

⁴⁹ Melis 2003, 20–24.

⁵⁰ Մկրտչյան 2018, 112–115:

⁵¹ Դիտարկումը՝ Ֆ. Մուրադյանի: Մահվան աշտարակների հնարավոր օրինակ կարող են լինել Ադրբեջանի Դուբայի շրջ. հավանաբար վաղ միջնադարյան աշտարակատիպ կառույցները (որպես կապակցող նյութ օգտագործվել է կրաշաղախ),

Քարե բուրգերը (cairn) մեգալիթյան հուշարձանների համատեքստում հիշատակվում են դեռևս Օ.Մագնուսի կողմից⁵²։ Հայկական մեգալիթյան կառույցների համատեքստում առանձին խումբ են կազմում քարակույտերը, որոնք համադրելի են եվրոպական cairn-ների հետ, սակայն վերջիններս ավելի շուտ հոծ աշտարակատիպ կառույցներ են⁵³։ Նման քարակույտեր հիշատակվում են նաև Աստվածաշնչում⁵⁴։

Քարակույտ-հարթակները կարող էին տեղակայվել ինչպես քարացրոններում, այնպես էլ դրանց անմիջական հարևանությամբ (Այլախ)։ Որոշ դեպքերում (Ալ լիճ 18) քարակույտ-հարթակը և քարակույտ աշտարակը համադրվում են։

ԴՊՄՆՆՆԵՐ և ՂՈՒՄՆՆԱՏԻՊ ՀՈՒՇԱՐԺԱՆՆԵՐ.

Ինչպես մեգալիթյան այլ հուշարձանների, այնպես էլ դոլմենների մասին տեղեկությունները ևս առաջին անգամ հրապարակ են իջնում դեռևս XVI-XVII դդ.⁵⁵։ XVIII դ. վերջից աստիճանաբար հստակեցվում է «դոլմեն» եզրույթը։ Թ. դ'Օվերնյե-Կորեն առաջիններից է, որ 1797 թ. օգտագործում է «դոլմին» բառը։ Սակայն հեղինակն այս բառը մեկնաբանում է որպես հսկա քար, որը դրված է հուշարձանի վրա⁵⁶։ 1812 թ. Ժ. Բոդենն առաջին անգամ օգտագործում է «դոլմեն» ձևը՝ քարե սեղան իմաստով⁵⁷։

Կարևոր է այն հարցը, թե արդյոք կարելի է դոլմեն համարել հողային կամ քարահողային լիցքով ծածկված կառույցները։ Ա. Բոնսթեթենը անդրդամբանային կառույցները դասում է դոլմենների երկրորդ տիպին⁵⁸։ Ա. Ուվարովը դոլմեն չի համարում անդրդամբանային շինությունները⁵⁹։ Նույն սկզբունքով է առաջնորդվում նաև Ֆ. Բայերնը՝

զատ-զատ դիտարկելով դոլմենները (վերգետնյա կառույցները) և դոլմենանման կառույցները (հողաթմբով ծածկվածները)⁶⁰։

Առանձին դեպքերում դոլմենները կարող են դասակարգվել նաև ըստ ծածկի կառուցվածքի⁶¹ կամ հատակագծի⁶²։ Որոշակիորեն սրան է նմանվում դը Մորգանի տիպաբանությունը։ Նա դիտարկում է դոլմենների չորս խումբ. մեկ սենյականոց, երկու սենյականոց, դեպի խցեր տանող սրահով և միայն սրահային⁶³։

Ա. Քալանթարը դիտարկում է երկու տիպի դոլմեններ։ Պարզ տիպը հետագա զարգացման ընթացքում սկիզբ է տալիս գետնափոր քարարկերին, իսկ բարդ տիպը՝ վերգետնյա, քարաշեն դամբարաններով թաղման կառույցներին։ Դոլմենների թվին հայ հետազոտողները ավանդաբար դասում էին նաև կեղծ թաղով վերգետնյա կառույցները՝ «օղուզի/հսկայի տները»⁶⁴։

Ավելի համակարգված է Ե. Ֆելիցինի տիպաբանությունը, որը դոլմենային կառույցները դիտարկում է առանձին խմբերով՝ ըստ տեղադրության, ձևի, շինարարական տեխնիկայի և հողի մակերեսի նկատմամբ դիրքի⁶⁵։ Այս տիպաբանությունը հետագայում հիմք դարձավ այլ վերակազմությունների համար։ Մասնավորապես Լ. Լավրովը հիմք է ընդունում շինարարական տեխնիկան՝ որպես առանձին խումբ դիտարկելով սալային, բաղադրյալ, տաշտաձև, մոնոլիտ դոլմենները⁶⁶։ Այս համակարգը կատարելագործվել է Մարկովինի կողմից⁶⁷։

Բնական մեգալիթներ. Ուսումնասիրվող համակարգում առանձին խումբ են կազմում բնական մեգալիթները՝ բնական ցից քարեր, որոնց սրբագործման կամ որոնց մերձակայքում ծիսական գոր-

որոնք ներկայացնում են երկու կցված շրջանակներ, և Ի. Ջաֆարզադեի կողմից համադրվում են զրադաշտական dha-ma-ներին (Джафарзаде 1939, 70)։

⁵² Magno 1558, 21-22, 24.

⁵³ Cambry 1805, 84, Magnus 1658, 11.

⁵⁴ «Եւ ասէ ցեղբարսն իւր, կուտեցէք քարինս, և կուտեցին քարինս և արարին բլուր և կերան և արբին անդ ի վերայ բլրոյն։ Եւ կոչեաց զնա Լարան Կարկառ վկայութեան» (Ծննդ. ԼԱ 46-48), «... և քարկոծեցին զնոսա քարամբք։ Եւ կուտեցին ի վերայ նոցա կարկառ մեծ քարանց միևն զայսօր» (Յես է 25- 26, Lebeuf 2012, 42)։

⁵⁵ Worm 1643, 8, Magno 1558, 22, 24, Magnus 1658, 13.

⁵⁶ D'Auvergne-Corret 1797, 24.

⁵⁷ Bodin 1812, 6-13.

⁵⁸ Bonstetten 1865, 17.

⁵⁹ Уваров 1876, 269-290.

⁶⁰ Байерн 1882, 10.

⁶¹ Օր.՝ Holmes 1907, 65:

⁶² Спицын 1908, 28.

⁶³ Де Морган 2010, 237.

⁶⁴ Քալանթար 1925, 212-215:

⁶⁵ Фелицын 1904, 14-16.

⁶⁶ Лавров 1960, 101-105.

⁶⁷ Морковин 1994, 229-237.

ծողություններ կատարելու մասին պահպանվել են գրավոր կամ բանավոր վկայություններ: Հուշարձանների այս խումբը մեգալիթների թվին պետք է դասել որոշակի վերապահումով, քանի որ այս կամ այն բնական օբյեկտը կարելի է համարել սրբատեղի միայն մարդու միջամտության պարագայում⁶⁸: Մինչև ժամանակ, նշված ժայռերը ժողովրդական պաշտամունքի առարկա են, ինչն ինքնին արդեն որոշակի միջամտություն է⁶⁹:

Առանձին խումբ են կազմում միջանցիկ անցքերով ժայռերը և ժայռաբեկորները: Լ.Մելիքսեթ-Բեկը նմանատիպ քարերը դասում է մեգալիթյան հուշարձանների թվին⁷⁰: Ժողովրդական հավատալիքներում այս տիպի քարերին վերագրվում էին բուժիչ հատկություններ⁷¹:

Մեգալիթյան համալիրներ. Որպես մեգալիթների դասավորության առանձին տիպեր կարող են ընկալվել դրանց միաշար և երկշար խմբերը⁷²: Միաշար մեգալիթները կարող են տեղադրված լինել երեք եղանակով՝ 1. երբ ամենաբարձր կենտրոնական քարն է, 2. երբ ամենաբարձր քարը դրված է շարքի վերջում, 3. երբ համեմատաբար փոքր մեգալիթները շրջապատում են մեծերին⁷³: Երկշար մեգալիթները կազմում են մեգալիթյան արահետներ⁷⁴ (վերջիններս Ջ.Օբերին իրավացիորեն անվանում է արարողակարգի ճանապարհներ⁷⁵): Երրորդ տիպը մեգալիթների ցանցատիպ դասավորվածությունն է⁷⁶:

Մենհիրների տեղադրության հաջորդ եղանակը շրջանաձև/օվալաձևն է (կրոմեկս⁷⁷): Դիտարկվում են տարբեր տրամագծի ինչպես մեկ (Խնածախ, Այլախ), այնպես էլ մի քանի համա-

կենտրոն (Ալի Բայրամլի) և ոչ համակենտրոն ներգծված շրջաններ: Որպես առանձին տիպ՝ դիտարկվում են նաև օվալաձև կրոմեկսները⁷⁸: Կրոմեկսների հետ գոյություն ունեն նաև ուղղանկյուն ցանկապատեր՝ կվադրիլերիթալ (վերջիններս հետագոյովել են նաև Դանիայում, Ֆրանսիայում, Պորտուգալիայում, սևծովյան ավազանում⁷⁹):

Առանձին տիպ պետք է համարել նաև կրոմեկսի և շարքերի համադրությունները (այս տիպը հավաստված է մեգալիթյան հուշարձաններին նվիրված վաղագույն աշխատություններում⁸⁰): Կրոմեկսները կարող էին հաղորդակցվել քարաշարերով⁸¹:

Շրջանաձև կերտվածքների համատեքստում երբեմն մեգալիթների թվին են դասում այսպես կոչված հյուսիսային լաբիրինթոսները⁸²: Դրանք մի քանի մուտքերով իրար հաղորդակցվող համակենտրոն շրջանների համադրություններ են, սակայն հանդիպում են բազմաթիվ ձևեր՝ պարզ պարույրներից մինչև ամենաբարդ կառուցվածքներ⁸³:

Մեգալիթյան համալիրները կարող են կազմված լինել տարբեր տիպի մեգալիթյան կառույցներից, կոթողներից և կերտվածքներից: Դրանցում համատեղ կարող են լինել մենհիրների շարքեր, կրոմեկսներ, քարե աշտարակներ, տրիլիթոսներ, պատեր, դոլմեններ, մարդակերպ արձաններ:

Այդ համալիրները կարող են ընդգրկել նաև ոչ մեգալիթյան հուշարձաններ: Այսպես, Ա.Քալանթարը մեգալիթների (դոլմեններ, մենհիրներ, կրոմեկսներ) հետ մեկտեղ հիշատակում է հուշարձաններ, որոնք մեգալիթների համատեքստում են լինում (պատեր, տաճարներ, ամրոցներ⁸⁴): Այսօրի-

⁶⁸ Հմմտ. Марсодолов 2016, 47, Смирнова 2006, 98:

⁶⁹ Հմմտ. Ширакуни 1904, 183: Հայաստանի սահմաններից դուրս այսօրինակ քարերի թվին եվրոպական Հյուսիսում կարելի է դասել սրբացված ժայռերը՝ passe-wara, սաամների կողմից պաշտվող այսպես կոչված «սեղիները»՝ տձև ցից քարերը (Визе 1912, 400): Ընդ որում՝ սրբացման կարևոր գործոն էին համարվում մարդակերպ ձևերը (Визе 1912, 397, հմմտ. Ալիշան 1910, 42):

⁷⁰ Меликсет-Бек 1938, 131-132.

⁷¹ Լալայեան 1908, 88:

⁷² Bayens 1905, 8-10.

⁷³ Beneteau-Douillard 2002, 570.

⁷⁴ Ferguson 1877, 51.

⁷⁵ Aubery 1862, 320.

⁷⁶ Шкорпил 1905, 374-378.

⁷⁷ Դասական իմաստով՝ կրոմեկսը օրթոստատ քարերի շրջանակ է, սակայն հնագիտական գրականության մեջ կրոմեկս բառով հաճախ բնորոշվում է դամբարանն օղակող ցանկացած քարե շրջանակ (Լիսիցյան, Բայբուրթյան 1928, 20):

⁷⁸ Magno 1553, 26, Borlase 1769, 193-210, Worm 1643, 63-64, 147.

⁷⁹ Worm 1653, 6, 35, Сизов 1889, 82, Pope, Miranda 1999, 112.

⁸⁰ Rowe 1830, 194, Цонев 2010, 51.

⁸¹ Rowe 1830, 204.

⁸² Марсодолов 2016, 47.

⁸³ Гурин 1948, 126.

⁸⁴ Քալանթար 1925, 211-212:

Նաև կերտվածքները հաճախ կապող օղակ են մեգալիթյան համալիրներում:

Մեգալիթյան համալիրներին հաճախ են հանդիպում ծակ քարերը⁸⁵, քարե զոհասեղանները⁸⁶, թասատիպ և բաժակատիպ փորվածքներով քարերը⁸⁷, օջախները, ջրհորները⁸⁸: Մեգալիթյան հուշարձանների միջավայրում կարող են լինել նաև ժայռապատկերները⁸⁹:

Մեգալիթյան լանդշաֆտի ձևավորումը. Մեգալիթյան համալիրները գտնվում են ոչ միայն մարդածին, այլև բնական միջավայրում՝ ձևավորելով որոշակի լանդշաֆտ և շրջակա բնական տեղանքից զատվելով որպես առանձին միավոր: Մե-

գալիթյան հուշարձանների միջավայրում հատուկ արժևորվում են ջրի աղբյուրը (այդ թվում նաև ջրհորը), քարանձավը⁹⁰, բնական բարձունքը⁹¹: Այս համատեքստում պետք է դիտարկել նաև ժայռափոր, սալահատակված և քարերով եզերված կամ երկայնքով փորված ակոսներով ճանապարհները⁹²: Մարդաստեղծ և բնական բաղադրատարրերի տեսանկյունից դոլմենային միավորները կարող են դասավորված լինել գծային (օրինակ՝ դոլմենների խմբերը տեղադրված են հովտի երկու կողմերում) կամ կենտրոնախույզ (օրինակ՝ դրանք հովհարաձև տեղադրված են բլրի գագաթի շուրջ) տրամաբանությամբ⁹³:

⁸⁵ Mishev 2016, 317-318.

⁸⁶ Rowlands 1766, 91, Markov 2015, 32.

⁸⁷ Borlase 1769, 117, Rowe 1830, 203.

⁸⁸ Patton 2003, 56, Сизов 1889, 170.

⁸⁹ Марков, Марков 2013, 165.

⁹⁰ Markov 2015, 32, Borlase 1769, 119, Сизов 1889, 170.

⁹¹ Trifonov 2013, 324, Фавр 1848, 42.

⁹² Schneider 2012, 13-15.

⁹³ Бианки 2010, 96.

ԳԼՈՒԽ III

ՄԵԳԱԼԻԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ

Պատմամշակութային լանդշաֆտը կարելի է բաժանել մի քանի ենթամասերի՝ ներառելով բնական, սոցիալ-տնտեսական և հոգևոր-ծիսական ոլորտները: Բնական միջավայրը յուրատեսակ առանցք է, որի շուրջը կենտրոնանում են մշակութային լանդշաֆտի բոլոր բաղադրատարրերը: Տարածքի բնակլիմայական պայմանները, բնական հարստությունները, ջրային աղբյուրների հատկանիշները, ճանապարհային ուղիներին վերաբերող տվյալները կարևոր են հասկանալու համար լանդշաֆտի բնույթը:

Սոցիալ-տնտեսական բաղադրատարրի կարևորագույն միավորը բնակավայրերն են: Ընդ որում՝ բնակավայր հասկացությունը պետք է դիտարկել համալիր, ներառյալ բնակավայրային ագլոմերացիայի ողջ գոտին (միջնաբերդը, «արտաքին քաղաքը», արբանյակ բնակատեղիները, ֆորտիֆիկացիոն կառույցները, դիտակետերը, կենսապահովման կառույցները՝ ջրանցքներ, ջրամբարներ, դաշտեր, ամրացված փարախներ):

Պատմամշակութային լանդշաֆտի երրորդ կարևորագույն բաղադրիչը հոգևոր-ծիսականն է: Տվյալ խմբում պետք է միավորել ինչպես բնակավայրերում, այնպես էլ դրանցից դուրս գտնվող ծիսապաշտամունքային համալիրները և փոքրածավալ ճարտարապետության օբյեկտները:

Լանդշաֆտային համալիրներում բոլոր նշված գործոնները սովորաբար լինում են փոխկապակցված՝ միավորվելով մեկ ամփոփ տարածքում և ստեղծելով յուրատեսակ բազմաֆունկցիոնալ լանդշաֆտային համալիր¹: Ընդ որում՝ բաղադրատար-

րերից յուրաքանչյուրն արժևորվում է հենց այդ կապերի շնորհիվ²: Այս սիմբիոզի պատճառներից է այն, որ հին մարդու ողջ կյանքը պարուրված էր մոգական պատկերացումներով, և ողջ իրականությունը միատիկ էր³:

Ալ լճերի համակառույց (սկ. 2–33, գծանկ. 1–3). Ալ լճերը գտնվում են Արցախի Շահումյանի շրջանի Քարվաճառի ենթաշրջանում, բարձր լեռնային մարգագետինների գոտում, ծ.մ. 2750–2850 մ բարձրության վրա: Լճերը նշված են նաև ռուսական 5 վերստանոց քարտեզում՝ Ելիզավետպոլի գուբերնիայի Ջևանշիրի ուեզդի կազմում⁴: Ալ լճերի հնագիտական շրջանն ընդգրկում է այսօր գոյություն ունեցող երկու և մի քանի չորացած լճերը, դրանք սնող գետերի ավազանները, դրանք օղակող լեռները՝ դեպի արևմուտք մտնելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի նախկին վարչական շրջանի և Վայոց ձորի մարզի Վայքի նախկին վարչական շրջանի տարածք:

Ալ լճերը գիտական գրականության մեջ առաջին անգամ հանդիպում են դեռևս XIX դ. առաջին կեսին: Մասնավորապես, Ալ լճերի ավազանը հիշատակում է Ֆ. Դյուբուա դե Մոնպերեն՝ նշելով, որ Վայոց ձորի, Գեղարքունիքի և Արցախի սահմանում գտնվող այս լճերը սնում են տասնյակ գետեր⁵: Դ. Ալիշանը, հիշատակելով չորս կամ հինգ Ալ լճերը (այսօր դրանք երկուսն են), նշում է դրանց կարևորությունը ապագա երկրաբանական ուսումնասիրությունների համար⁶: Երկրաբանական առումով նշված տարածքը կազմված է պլիոցենյան տարիքի ապարներից, իսկ շրջանի արևելյան հատվածը

¹ Ավետիսյան և այլք 2019, 100–102:


² Хайдегер 2008, 138–139.

³ Леви-Брюль 1994, 27–28.


⁴ Пагирев 2007, 45.

⁵ Dubois de Montpereux 1839, 303.

⁶ Ալիշան 1893, 206:



Գծանկ. 1. Ալ լիճ 1 վիշապ քարակոթողը
(գծագիրը՝ Ա. Հախվերդյանի)



Գծանկ. 2. Ալ լիճ 2 վիշապ քարակոթողը
(գծագիրը՝ Ա. Հախվերդյանի)



Գծանկ. 3. Ալ լիճ 3 վիշապ քարակոթողը
(գծագիրը՝ Ա. Հախվերդյանի)

ներկայացված է կավճային ժամանակաշրջանի վերին բաժնի ապարներով⁷: Տեկտոնիկ առումով տարածքը ներկայացնում է օրոգենային ալպիական համալիրի վաղ օրոգենային հարկի վերին ենթահարկը: Տարածքը չորրորդական հրաբխային գործունեության կենտրոններից է, որի լավային հոսքերը աչքի են ընկնում ճաքճքվածությամբ և ծակոտկենությամբ, ինչի հետևանքով մակերեսային ջրերի մեծ մասը թափանցում է լավային հաստվածքի խորքերը՝ կուտակվելով Պալեոմարսիկի թաղված

հովտում և այնտեղից թափանցելով Սևանի արտեզյան ավազան⁸: Հատկանշական է, որ տեղանքի այս նույն առանձնահատկության մասին ենթադրություն է կատարում նաև Ղ. Ալիշանը⁹:

Հնագիտական տեսանկյունից Ալ լճերի տարածքը շատ թույլ է ուսումնասիրված, թեպետ լճերի՝ սրբազան տեղանքի կենտրոն լինելու մասին ակնարկ կա դեռևս Ղ. Ալիշանի և Ե. Լալայանի աշխատություններում: Վերջիններս նշում են այս վայրի մեկ այլ անվանում՝ Ալլահգյոլ¹⁰:

⁷ Геология Азербайджанской ССР 1972, Схематическая геологическая карта Аз. ССР.

⁸ Халатов, Гогинян 2008, 23.

⁹ Ալիշան 1893, 206:

¹⁰ Ալիշան 1893, 206, Լալայան 1904, 242, 252: Այս առնչությամբ պետք է հիշատակել Գանձակից ոչ հեռու գտնվող Գյոլ-Գյոլ

Կատարված հետազոտությունների շնորհիվ հնարավոր է գտնել մի քանի տիպի հուշարձաններ:

1. Դամբարանադաշտեր. Ալ լճերի ավազանում առկա դամբարանները հիմնականում կենտրոնացած են քարացրոնների և լճափի միջև ընկած տարածքում (նկ. 19–21): Դրանք, ըստ արտաքին կառուցվածքի, կարելի է բաժանել մի քանի խմբի. դամբարանբլուրից զուրկ փոքր տրամագծով կրոմլեխներ (Ալ լիճ 10–11), քարային լիցքի գերակայությամբ ոչ բարձր դամբաններ (Ալ լիճ 12–13, 19), մեծ տրամագծով քարահողային լիցքով դամբաններ (Ալ լիճ 9): Թեպետ Ալ լճերի ցամաքային գիծը խիստ փոփոխական է, սակայն պետք է փաստել, որ առավել մեծ դամբարանները գտնվում են բարձր լեռնային լճերի ափամերձ գոտում¹¹:

2. Կոթողային հուշարձաններ. Ալ լճերի ավազանի կոթողային հուշարձանները երեքն են, որոնք ի հայտ են գալիս մեգալիթյան այլ կառույցների համակարգում: Առաջինը ցլակերպ վիշապ քարակոթող է, որը հայտնաբերվել է Ալ լճերի տարածաշրջանի սահմանին՝ Արփա գետի ակունքի մոտ (Ալ լիճ 1): Երկրորդը ձկնակերպ վիշապ քարակոթող է, որը դրված էր քարային լիցքով հարթակի վրա և մշակված էր միայն մեկ կողմից (Ալ լիճ 2): Երկրորդմանի մշակված ևս մեկ ձկնակերպ վիշապ քարակոթող հայտնաբերվել է ամենամեծ քարակույտ սրբատեղիում (Ալ լիճ 3) (նկ. 6–14, գծանկ. 1–3):

Կոթողային երրորդ հուշարձանը հայտնաբերվել է Փոքր Ալ լիճը եզերող քարացրոններում: Թեպետ կոթողը խիստ ոճավորված է, սակայն որոշ հատկանիշներ (հնգանկյուն վերին հատված) թույլ են տալիս ենթադրել դրա մարդակերպ լինելը (Ալ լիճ 8): Արձանների այս տիպը երբեմն համարվում է կոթողի մարդակերպացման փուլերից մեկը, որը կարող է արտահայտվել կոթողին մարդու ոճավորված ուրվագծեր տալով, մարդ հիշեցնող բնական քարերի օգտագործմամբ¹²:

3. Սրբատեղիներ և ծիսական հարթակներ. Ալ լճերի ավազանում ծիսական հարթակների հիմնական տիպը քարացրոնների հատվածներ կամ

քարակույտներ են, որոնց կենտրոնական հատվածում ուղղանկյուն կամ բոլորակ խցեր են (նկ. 17–18): Առաջին տիպի հարթակներն առկա են Մեծ Ալ լիճը եզերող քարացրոններում (Ալ լիճ 14):

Հաջորդ ենթատիպը քարացրոններից դուրս գտնվող շինվածքներն են: Դրանք տարբերակվում են ինչպես իրենց հատակագծային առանձնահատկություններով, այնպես էլ խցերի քանակով: Ալ լճերի ավազանում քարացրոններից դուրս հավաստված քարակույտ-հարթակներից մեկը գտնվում է Փոքր Ալ լճի ավազանում: Մեծ Ալ լճի ավազանում գտնվող քարակույտ-սրբատեղին բացառիկ է Հայաստանի համար (Ալ լիճ 4): Այն գտնվում է լճափից քարացրոններ ընկած տարածքում, իսկ տրամագիծը մի քանի տասնյակ մետր է: Քարակույտում փորված է 12 խուց: Երրորդ քարակույտ-հարթակը Ալ լճեր-Մաքենիս ճանապարհին է և ունի կից աշտարակատիպ կառույց (Ալ լիճ 18): Հայաստանում նմանատիպ հարթակներ կան մի շարք հնավայրերում՝ Կապուտան¹³, Այլախ, Մուրադ սար, Սև լիճ, Արայի դաշտ, Նոտնու¹⁴ (հմմտ. նկ. 16): Հատկանշական է, որ բոլոր նմանատիպ կառույցները գտնվում են դամբարանադաշտերում¹⁵:

Հարթակների թվին պետք է դասել նաև քարացրոնների սահմանին գտնվող գլաքարը՝ սանդաձև փորվածքով (Ալ լիճ 21)¹⁶:

Հարթակ կարող է լինել նաև Արփայի ակունքի մոտ՝ վիշապի հարևանությամբ հայտնաբերված կրոմլեխը: Նմանատիպ կրոմլեխ-հարթակներ հաճախ են փաստագրվում վիշապների և աշտարակների համատեքստում¹⁷:

4. Մեգալիթյան պատ. Ալ լճերի բացառիկ հուշարձաններից է քարացրոնների մեջ կառուցված պատը (Ալ լիճ 14) (նկ. 28–31): Սա իրականում Մեծ Ալ լճի արևելյան, հարավային և արևմտյան կողմերում բնական քարացրոնների զանգվածի միջով անցկացված մի քանի պատաշարերի համակարգ է: Հետազոտությունների ընթացքում օդալուսանկարվել է պատի՝ Մեծ Ալ լճի հյուսիսային կողմի ընդամենը 1,5 կմ հատվածը:

լիճը, որի վերնամասը հայերն անվանում էին Ըստծու ծով: Ի դեպ, Մ. եպս. Բարխուդարյանն այստեղ նույնպես հիշատակում է «տեղ-տեղ դիզված ահագին քարեր» (Բարխուդարյան 1995, 164–165):

¹¹ Այս նույն օրինաչափությունը նշում է Ե. Լալայանը Սևանա լճի պարագայում: Տե՛ս Լալայան 1906, 32, 37:

¹² Beneteau-Dovillard 2002, 570.

¹³ Հետազոտությունները՝ Լ. Մկրտչյանի, Ա. Գնունու:

¹⁴ Ուսումնասիրությունը՝ Լ. Մկրտչյանի:

¹⁵ Հայաստանից դուրս նման կառույցներ հանդիպում են Մալթայի մեգալիթյան համալիրներում (Bonanno 2001, 40):

¹⁶ Նմանատիպ հարթակներ հանդիպում են դամբարանադաշտերում. հմմտ. Այգեշատի, Հատիսի, Քարհատի (Դաշքեսանի շրջ.) օրինակները (Ավետիսյան և այլք 2015ա, 43, Джафарзаде 1939, 64):

¹⁷ Բորոխյան և այլք 2015, 274–281:

Աղ.2. Ալ լճերի վիշապ քարակոթողները

Ալ լիճ 1	
Անվանումը այլ/հին	Ալ լիճ
Տիպը	Ցլակերպ
Նյութը	Բազալտ
Պահպանվածությունը	Կոթողը. լավ (պահպանվել է ամբողջությամբ, միայն վերնամասից մի փոքր մաս և ստորին փոքր հատվածը կտրորված են, ետնամասի վերին հատվածը մասամբ մաշված է) Պատկերը. վատ (մաշված է, չի պահպանվել, կամ էլ կիսաֆաբրիկատ է) Համատեքստը. բավարար (նախնական տեղում է, շուրջը փորված է, որի արդյունքում ձագար է առաջացել)
Չափսը	365x105x34 սմ, մաքրելուց հետո՝ 380x105x34 սմ
Նախնական տեղը	Ճաղատ սարի և Փորակի միջև, Արարատ գյուղի արտավայրի մոտ
Ներկա տեղը	Նախնական տեղում
Բարձրությունը ծ.մ.	2969 մ
Վարչական դիրքը	ՀՀ Վայոց ձորի մարզի և Ճահումյանի շրջանի Զարվաճառի տարածաշրջանի սահմանին, Ջերմուկ (մոտակա համայնք)
Հայտնաբերման պատմությունը	Սամվել Շահինյանը գտել է 2015թ. հունիսի 30-ին, աղջկա՝ Աշխենի ծննդյան օրը նշելիս: 2014 թ. Շահինյանն այստեղ եղել է, բայց չի տեսել, գլխի մասն է երևացել: Հայտնաբերման պահին բարի շուրջը ոչ վաղ անցյալում փորվել էր:
Հնագիտական համատեքստը	Ամփոփական. քարերի ամկայությունը կոթողի շուրջը վկայում է, որ կրոմլեխ-հարթակի համատեքստում է: Գծագրելու նպատակով մաքրելիս (25.08.2018) անփոփական միջավայրից դուրս եկան վանակատի բեկորներ: Հարակից. վիշապի շրջակայքում կան կրոմլեխներ, 250 մ հյուսիս-արևմուտք՝ ճանապարհով դամբարաններ, 500 մ դեպի հարավ՝ քառակուսի և կլոր կառույցների հետքեր, որից 200 մ արևելք՝ դամբարաններ և հսկայի տուն: Դեպի Ալ լիճ 1 գնում են Մուրադ սարի ժայռապատկերների և հսկայի տների կողքով:

Ալ լիճ 2	
Անվանումը այլ/հին	Ալ լիճ
Տիպը	Ձկնակերպ
Նյութը	Բազալտ
Պահպանվածությունը	Կոթողը. լավ (պահպանվել է ամբողջությամբ) Պատկերը. բավարար (երկրորդ կողմի աչքը մաշված է) Համատեքստը. լավ (նախնական տեղում է)
Չափսը	110x43x23 սմ
Նախնական տեղը	Մեծ Ալ լճի հյուսիսարևմտյան ափամերձ գոտի
Ներկա տեղը	Նախնական տեղում
Բարձրությունը ծ.մ.	2747 մ
Վարչական դիրքը	Ճահումյանի շրջ. Զարվաճառի ենթաշրջ., Արցախ, Աղբրածոր (մոտակա համայնք՝ Գեղարքունիքում)
Հայտնաբերման պատմությունը	Հայտնաբերել է ԵՊՀ սյունիքյան արշավախումբը 19.08.2015 թ. Ալ լճերի շրջակայքում իրականացված հետախուզական աշխատանքների ընթացքում
Հնագիտական համատեքստը	Ամփոփական. դամբարանաթմբի, ավելի շուտ հսկայի տան վրա է, վերջինիս բնորոշ հարակից փոքր քարակուտակումներով և ճառագայթներով Հարակից. անփոփական շրջակայքում կան կրոմլեխներ և վանակատի ցրված կուտակումներ

Ալ լիճ 3	
Անվանումը այլ/հին	Ալ լիճ
Տիպը	Ձկնակերպ
Նյութը	Բազալտ
Պահպանվածությունը	Կոթողը. լավ (պահպանվել է ամբողջությամբ, գլխամասից մի փոքր հատված կտրորված է, որի բեկորը գտնվեց կոթողի կողքին) Պատկերը. լավ (բոլոր մանրամասները պահպանվել են) Համատեքստը. լավ (նախնական տեղում է)
Չափսը	279x61x32 սմ
Նախնական տեղը	Մեծ Ալ լճի արևմտյան ափամերձ գոտի
Ներկա տեղը	Նախնական տեղում
Բարձրությունը ծ.մ.	2737 մ
Վարչական դիրքը	Ճահումյանի շրջ. Զարվաճառի ենթաշրջ., Արցախ, Աղբրածոր (մոտակա համայնք՝ Գեղարքունիքում)
Հայտնաբերման պատմությունը	Հայտնաբերել է ԵՊՀ սյունիքյան արշավախումբը 25.08.2018 թ. Ալ լճերի շրջակայքում իրականացված հետախուզական աշխատանքների ընթացքում: Առաջին այցելության ժամանակ (19.08.2015 թ.) փաստագրվել է հսկայի տունը, բայց ոչ կոթողը (այն չի երևացել), որը գտնվում է հսկայի տան հյուսիսարևմտյան հատվածում:
Հնագիտական համատեքստը	Ամփոփական. միջին չափսի քարերով շարված, մոտ 30 մ տրամագծով, 1,5 մ բարձրությամբ և 10 խցերով հսկայի տան հյուսիսարևմտյան հատվածում է Հարակից. շրջակայքում կան կրոմլեխներ և վանակատի ցրված կուտակումներ

Նշված տարածքում բնական քարացրոնների մեջ բացված պատաշարերը եզակի չեն: Դրանցից հիմնականը՝ 4,0 կմ երկարությամբ պարիսպ-պատաշարը, գտնվում է Մեծ Ալ լճի հյուսիսարևելյան կողմում: Այն սկիզբ է առնում Մեծ Ալ լճի հյուսիսարևելյան ծովախորշի ավից՝ ընդհատումներով, բայց մի գծով, և, անցնելով մոտ 4,000 մ, հասնում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս գյուղի վերին հանդամասերը: Այնտեղից բաժանվելով քարացրոնների՝ տարբեր բազուկներով իջնում հասնում է մինչև Մաքենիս գյուղի մոտակայքը: Այն ընթանում է Ալ լճերի հյուսիսային կողմով, Փորակ լեռան հարավարևմտյան լանջերի բնական քարացրոններով, դրանց զանգվածի խոտածածկ մարգագետնի հետ հպման եզրագծով՝ կրկնելով հպման եզրագծի ուրվագիծն ու ռելիեֆը: Պարիսպը ձգվում է խոտածածկ դաշտավայրից 3–20 մ հեռավորության և մինչև 5–6 մ բարձր նիշով: Պարսպի 3,2 կմ անցնում է Արցախի տարածքով, մնացածը՝ Հայաստանի Հանրապետության: Պարսպագիծը շարված է քարացրոնների միջին չափի բնական, անմշակ քարերից, չոր (առանց շաղախի), կոպիտ շարվածքով: Լայնությունը հիմնամասում 1,5–2,5 մ է, իսկ պահպանված բարձրությունը՝ մինչև 1,5 մ: Պարսպի շարի քարերը վերցված են անմիջապես պարսպի ներսի ճակատի տակից այնպես, որ պարսպագծի տակ՝ ներսում՝ քարացրոնների մեջ, առաջացել է երկարաձիգ ակոսատիպ խրամատ: Շարվածքի հնության մասին խոսում է պատաշարի մամռապատ լինելը և քարերի ճակատային երեսի այսպես կոչված արևային այրվածքը՝ պատինան:

Ընթացքի տարբեր, միմյանցից զգալի հեռավորությունների վրա ընկած կետերում, հիմնական պարսպագծի ճակատից դեպի դուրս, խոտածածկ դաշտ են իջնում բազմաթիվ անցում-ճանապարհներ: Անցումները բացված են մարգագետնի մոտ ընկած կետերում, հաճախ բնական սելավատարների ուղղությամբ: Սակայն այն դեպքերում, երբ պարսպագիծը խոտածածկույթից զգալի հեռավորության ու բարձրության վրա է, կան դեպի խոտածածկը իջնող հենապատերով ամրացված թեքադիր անցում-ճանապարհներ: Հիմնական պարսպին ներսից դեպի քարացրոնները նայող ճակատին կցված են բազմաթիվ այլ պատեր: Վերջիններս կազմում են կլորացող, ուղղանկյուն ու բազմանկյուն մեծ ու փոքր տարածքներ, ճանապարհներով ու ան-

ցումներով հաղորդակցվող մեծ բաց բակեր, հավանաբար անասնափարախներ¹⁸: Ներսից կցված կառուցվածքները համատարած են, հաջորդում են մեկը մյուսին և ներսից ամբողջովին փակում են հիմնական պատաշարը: Ներսից կցված պատերը կառուցված են նույն տեխնիկայով, բայց շատ ավելի անփույթ ու ցածր, ուստի և մեծ դժվարությամբ են ուրվագծվում: Շատ դեպքերում դրանք կորցրել են արտաքին նշանները և գրեթե ձուլվել շրջակա քարացրոններին:

Ներսի կառուցվածքների տարածման խորությունը տարբեր է: Այն ներփակում է հիմնական պատաշարը՝ քարացրոնների զանգվածի մոտ 40–100 մ խորությամբ: Այնուամենայնիվ, նկատվում են տեղամասեր, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի սահմանագծի մոտ երևացող պատաշարերը, որոնք հեռանում են հիմնական պարսպից ավելի քան 1 կմ և քարացրոնների միջի բնական խոտածածկ մակերեսներով կղզյակներն ու պատաշարերով փարախները սելավատարի ձորակով բացված ճանապահով կապում հիմնական մարգագետնի հետ:

Այս բոլոր կառուցվածքները բնական քարացրոնների զանգվածի մեջ են, որոնց հատակը մերկացող, խոտազուրկ, բնական, չհարթեցված քարաքեկորներն են:

4000 մ երկարությամբ պարսպագծի մոտ 1200 մ ձգվող հատվածը փաստացիորեն ընդհատվող պարսպագծերի համակարգ է: Սրանք պարբերաբար ընդհատվում են քարացրոնների այն հատվածներում, որոնք հիշեցնում են դեպի քարացրոնների խորքը տանող նեղ միջանցքներ: Այս միջանցքները լինում են ինչպես հարթեցված քարերով, այնպես էլ քարազուրկ: Սրանք տանում են քարացրոններում «խորշեր» հիշեցնող քարազուրկ հատվածներ, որտեղ կղզյակների պես առկա են կանաչ գոտիներ: Այս, առաջին հայացքից պարզ թվացող համակարգը քարացրոնների խորքում ավելի է բարդանում, երբ այս քարազուրկ խորշերը սկսում են ավելանալ՝ կապվելով իրար նմանատիպ միջանցքներով: Հավանաբար գործ ունենք մի յուրահատուկ անասնապահական «ազլումերացիա-յի» հետ, որտեղ կանաչ «խորշերին» հարևանում են նաև բոլորածև և ուղղանկյուն հիմքով փոսեր՝ առանց ակնհայտ պատերի: Սրանք ստացվել են քարացրոնների քարերը հետզհետե հեռացնելու

¹⁸ Այս բաց բակերի հնարավոր գործառնությունների վերաբերյալ հնարավոր են որոշ տարբերություններ: Փարախ կարող էին լինել այն տարածքները, որտեղ քարերը հեռացված են, և առկա է խոտածածկույթ: Ինչ վերաբերում է քարային կուտակումներով քարացրոններին, ապա թեպետ որոշ տարածաշրջաններում (օր.՝ Խիբինյան լեռներ) դիտարկվում է դրանց՝ բուսածածկույթով պատված լինելը (Гладкий 1930, 438, Ахромеев 2002, 112), սակայն այսօր Հայաստանում դիտվող քարացրոնները (Արագած, Մասիս) բուսածածկույթ չունեն (Габриелян 1961, 100):

եղանակով և հավանաբար կարող էին կապ ունենալ ջրերի կուտակումների հետ¹⁹։ Համեմատության համար տեղին է հիշատակել ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղից 13 կմ հյուսիս-արևելք գտնվող «Տիգրանի ջրհորը»²⁰, որը նույնպես գտնվում է քարացրոնների մեջ։ Նմանատիպ ուղղանկյուն և բոլորաձև հատակագծով փորվածքներ կան Զատի և, մասնավորապես, Տիգրանաբերդի մոտակայքի քարացրոններում, որոնք տեղացիները կոչում են «քարե ջրհորներ»²¹։

Չի բացառվում, որ այդ փոսերի մի մասը լինեն նաև դամբարաններ, որոնք նույնպես ունեն իրենց գուգահեռները ինչպես վերը նշված Գեղաշենի, այնպես էլ Տիգրանաբերդի «քարե ջրհորների» մոտ, որոնք թալանված դամբարաններ են կամ ծիսական հարթակներ²²։

Այլ լճերի համակառույցը ստեղծվել է մի ընդհանուր մտահղացմամբ և նախագծով, քանի որ տարբեր ժամանակաշրջանների հասարակությունների համար լուծում էր մեկ ընդհանուր կարևորագույն խնդիր, այն է՝ ալպյան ամառանոցներում անասնապահությանը զբաղվելու հարցը²³։ Համակառույցի կառուցման ընթացքը պարզ չէ։ Այն իրողությունը, որ առաջին հայացքից երևում է միայն արտաքին երկարաձիգ պարսպագիծը, վկայում է, որ կառուցողները հիմնական վտանգը սպասում էին դրսից՝ ալպյան մարգագետինների դաշտավայրի կողմից, ուստի և այս պարսպը կառուցել են ավելի խնամքով, կայուն ու ամուր, որ գրեթե առանց լուրջ ավերումների է հասել մեզ։ Եվ վտանգը, ըստ

ամենայնի, հիմնականում վայրի կենդանիներն էին²⁴։

Այլ լճերի բազմաթիվ բաղադրատարրերի առկայությունն ինքնին հուշում է, որ այս համակառույցը ժամանակին օգտագործվել է որպես մեծաքանակ նախիրների և հոտերի ամառանոցային ամենօրյա հանգրվան։ Նման բարդ համակարգի առկայությունը ենթադրել է տալիս սոցիալական միավորների միջև համագործակցության ծավալման մասին, որին նպաստում էր Հայկական լեռնաշխարհի ակտիվ ներգրավվածությունը մերձավորարևելյան ռազմաքաղաքական գործընթացներին²⁵։

Հուշարձանի թվագրության հարցը բարդ է։ Քարացրոնների մեջ հողաշերտ, ուստի և մշակութային շերտ չկա։ Բայց, նկատի ունենալով, որ նման մեծածավալ շինարարական նախագիծ կարող էր իրականացնել միայն վաղ պետականության շերտը՝ հաղթահարած, ամառային արտավայրերի խիստ պահանջ ունեցող ինքնակազմակերպված հասարակությունը, կարելի է ընդունել, որ մեզալիթյան պարսպները կառուցվել են Ք.ա. II հազ. կեսերին և դրանից հետո, երբ լայն թափ է առնում ալպիական մարգագետինների յուրացումը²⁶։

Այլ լճի մեծ պատի միակ գուգահեռը, որոշ վերապահումներով, կարելի է կրկին տեսնել Կոտայքի մարզում։ Կապուտան գյուղից 4,5 կմ հյուսիս-արևելք՝ քարացրոններում (40°21'47.45"N, 44°43'15.05"E, 2073 մ), ձգվում է 300 մ երկարությամբ մի պարսպագիծ։ Ինչպես այստեղ, այնպես էլ շրջակայքում, քա-

¹⁹ Փարախների տեղադրության այս համակարգը՝ այսպես կոչված միջանցքայինը, երբ փարախները տեղադրվում են արահետի երկու կողմերում, առավել արդյունավետն է (Брентова 2016, 107)։

²⁰ Տե՛ս Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, ցուցիչ՝ 6.23/40։

²¹ Ուսումնասիրությունը՝ Կոտայքի մարզի հուշարձանների երկարամյա պահապան Ա. Սեդրակյանի, որին պատկանում են հուշարձանների այս բացառիկ օրինակների գրեթե բոլոր բացահայտումները։ Ըստ նրա բանավոր մի տեղեկության՝ նախորդ դարի 60–70-ական թվականների ամառային սեզոններին, խոտհնձի ժամանակ խմելու ջուր դեռ վերցնում էին նման «քարե ջրհորներից»։ Այս վարկածն առավել հավանական է, քանի որ քարացրոնների առանձին քարաքեղծությունները տակ սովորաբար կուտակվում են մթնոլորտային ու ձնհալի ջրերը և նույնիսկ սառույցը (Габриелян 1961, 99–100, Гладкий 1930, 438)։ Միևնույն ժամանակ ջրհորը կարող էր սրբազործվել (հմմտ. Երզման ջրհորը՝ Ծննդ. ԻԱ 14, 31)։ Ջրհորի և գոհասեղանի համադրության մասին հմմտ. «Եւ շինեաց անդ սեղան և կարդաց անդ գանուն Տեառն։ Եւ եհար անդ զխորան իւր։ Փորեցին ծառայքն Իսահակայ անդ ջրհոր» (Ծննդ. ԻԶ, 25)։ Միջազգային դիցաբանությունում լեռը և ջրհորը կարող էին դիտվել մի ծիսական միասնության համատեքստում (հմմտ. Рабинович 1973, 103–105)։ Աշխարհները միավորող յուրատեսակ առանցք հնդկական դիցաբանությունում կարելի է համարել Տրիտայի ջրհորը (Ригведа 1989, I, 105)։ Հմմտ. նաև հայկական հեքիաթների պոմեները. ջրհոր, որտեղից ոչ ոք չէր վերադառնում, ջրհոր, ուր պատանին իջնում է՝ դնին փնտրելու (Гулакян 1983, 165)։

²² Հմմտ. Գամդլիս Ծղարո գյուղում մետաղագործի գանձում գտնված ծիսական հարթակի մանրակետը, որտեղ ոչխարների հոտը պատկերված է բացօթյա հարթակում (Брилева 2011, 111–112, Лордкипанидзе 1989, 159–160)։

²³ Բացառված չէ, որ այս ցանկապատը խրամատի կողմից ամրացված լինե՛ր ցաքու շարքերով։ Այդ բույսը ցայսօր օգտագործվում է կենդանիներից փարախները պաշտպանելու համար։ Ազգագրորեն նմանատիպ երևույթ առկա է Լոռու մարզի Գեղասար գյուղի ալպիական արտավայրերում, նույն մարզի Մարց գյուղի շրջակայքում (Ռ. Նահապետյանի անձնական հաղորդում)։ Օգտվելով առիթից՝ շնորհակալություն ենք հայտնում պ. գ. դ. Ռաֆիկ Նահապետյանին՝ տրամադրած տեղեկատվության համար։

²⁴ Հմմտ. Անանյան 1961, 303, 337։

²⁵ Ավետիսյան 2014, 64–65։

²⁶ Այսքանով հանդերձ՝ բարձր լեռնային գոտիների յուրացումը սկիզբ է առել դեռևս էնեոլիթի և վաղ բրոնզի դարաշրջաններում (Մարտիրոսյան 1969, 194)։

րացրոնների մեջ նկատելի են պատեր, որոնք կրկին դրանց խորքում օղակում են կանաչ հատվածներ²⁷:

Անդրադառնալով այսօրինակ հուշարձաններին՝ Ա.Քալանթարը նշում է դրանց առկայությունը մեգալիթյան հուշարձանների համատեքստում: Մասնավորապես նշվում է, որ դրանք կցոնվում են աշտարակներին (Այգեշատ, Արդար Դավիթ), դոմեններին (Շամիրամ)՝ ձգվելով երբեմն մի քանի կիլոմետր: Նշվում է նաև, որ նմանատիպ պատեր կան նաև Եղվարդի շրջակայքում՝ հասնելով Կարմիր բերդ: Անդրադառնալով նշված պատերի գործառնություն՝ Ա.Քալանթարը գտնում է, որ դրանք կարող են լինել սահմաններ մանր ու մեծ հողաբաժինների, գուցե նաև պետական կազմավորումների միջև²⁸:

5. Ժայռապատկերներ. Այլ լճերի ավազանում առկա են ժայռապատկերների մի քանի խմբեր (նկ. 22–27): Առաջին խումբը Մեծ Այլ լճի ավազանում է: Այս խումբը հավաստված է դեռևս Գ. Իսմայիլովի կողմից, այնուհետև՝ Գ. Սարգսյանի²⁹: Ժայռապատկերների երկրորդ խումբը փաստագրված է Փորակ լեռան մերձակայքում³⁰: Քանդակների երրորդ խումբը գտնվում է Գորտագետի հովտում՝ Փորակից 3 կմ հարավ-արևելք, երկու ժայռերից բխող աղբյուրների շուրջը (Այլ լիճ 6): Չորրորդ խումբը Փոքր Այլ լճերի տարածքում է (Այլ լիճ 7): Պատկերները տարբերվում են ինչպես կատարման տեխնիկայով, այնպես էլ պյուժեներով: Ըստ պյուժենների՝ ժայռապատկերները կարելի է բաժանել մի քանի խմբի:

ա. Մարդու պատկերներ. Կան մի քանի տարբերակներ. ա. ձեռքերը վերև պարզած և ընդգծված արական սեռական հատկանիշներով (Գորտագետ), բ. նետաձիգների պատկերներ (Փոքր Այլ լիճ), գ. առանց վերին վերջույթների պատկերներ (Փոքր Այլ լիճ), դ. մեկ՝ մարմնին ուղղահայաց պարզած ձեռքով պատկեր (գուցե պրոֆիլային պատկեր է), զ. դեպի վերև պարզած ձեռքերով, լայն բացած ոտքերով, ձեռքի և ոտքի մատները լայն բացած պատկերներ (Մեծ Այլ լիճ)³¹: Այս վերջինը կարող է մեկնաբանվել որպես Արևի աստվածության պատկեր³²:

բ. Կենդանական պատկերներ. Բացառապես բոլոր քանդակները պատկանում են եղջերավոր կենդանիների: Ըստ պատկերագրական առանձնահատկությունների՝ Այլ լճերի և Գորտագետի ավազանի ժայռապատկերները կարելի է բաժանել մի քանի ենթախմբերի. ա. աղեղնաձև եղջյուրներով, դեպի ներքև ուղղված պոչով, բ. դեպի վերև թեքված ուղիղ պոչով, թույլ կորացող եղջյուրներով, գ. աղեղնաձև եղջյուրներով, դեպի վերև կորացող պոչով, դ. աղեղնաձև եղջյուրներով, ուղիղ հորիզոնական պոչով, ե. վերին հատվածում կորացող եղջյուրներով, ուղղահայաց բարձրացող պոչով:

գ. Այլ պատկերներ. Նախ պետք է նշել Ա.Ավագյանի և Ա.Կարախանյանի՝ Փորակ լեռան շրջակայքում հայտնաբերված պատկերը, որը հեղինակները Չաթալ Հույուքում հայտնաբերված պատկերի նմանությամբ մեկնաբանում են որպես հրաբխի ժայթքման տեսարան³³: Երկրորդ պատկերը վրանատիպ շինության պատկերն է, որը գտնվել է Փոքր Այլ լիճը եզերող քարացրոններում: Երրորդը իրար հաված շրջանակների և ուղղանկյուն կերտվածքների պատկերն է, որը հայտնաբերվել է Գորտագետի ավազանից: Ամենայն հավանականությամբ՝ սա Դ.Ալսունդովի կողմից որպես բազմասեյականոց բնակարանային համալիր մեկնաբանվող պատկերն է³⁴: Պատկերների չորրորդ խումբը ևս գտնվել է Գորտագետի ավազանում: Դրանք փորագիր շրջանակներ են՝ կենտրոնական փորվածքով: Նմանատիպ պատկերներ հայտնի են Գեղամա լեռների ժայռապատկերներում³⁵ և հաճախ մեկնաբանվում են որպես արևային նշաններ³⁶:

Կատարման տեխնիկայի առումով կարելի է դիտարկել մի քանի տարբերակ. ծեծման-ակոսային և գծանկարային (Գեղամա լեռներում այդ տեխնիկայով կատարվում էին էսքիզները), այս երկու տեխնիկաների զուգորդումը³⁷:

6. Այլ հուշարձաններ. Այլ լճերի ավազանի տարածքի տեղագնության ընթացքում հայտնաբերվեցին գտածոներ, որոնք թեպետ չեն առնչվում բրոնզ-երկաթեդարյան սրբազան տեղանքի ձևա-

²⁷ Հետազոտությունները՝ Լ. Մկրտչյանի:

²⁸ Քալանթար 1925, 216:

²⁹ Ավետիսյան և այլք 2015, 172–173:

³⁰ Avagian, Karakhanian 2003, 13–14.

³¹ Ավետիսյան և այլք 2015, 173:

³² Մարտիրոսյան 1981, 63, Իսրայելյան 1973, 46:

³³ Avagian, Karakhanian 2003, 13–14.

³⁴ Ахундов 1986, 38, հմմտ. Մարտիրոսյան 1981, նկ. 59, Մարտիրոսյան, Իսրայելյան, 1971, նկ. 204–205:

³⁵ Մարտիրոսյան, Իսրայելյան 1971, նկ. 329:

³⁶ Իսրայելյան 1973, 43–44, Есаян 1968, 259:

³⁷ Մարտիրոսյան 1981, 8–9:

Աղ. 3. Ալ լճերի ավազանի հուշարձանները

Անվանում	Տեղագրություն	Համատեքստ	Աղբյուր
Ամրոցներ և բնակատեղիներ			
Ալ լիճ 20	N 40.07500°, E 045.75449°, 2538 մ	Կառուցված է քարացրոններում	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու, Գ. Սարգսյանի, Ջ. Դանիելյանի՝ 2016թ., Գ. Սարգսյանի, Լ. Մկրտչյանի՝ 2020թ.
Դամբարանադաշտեր			
Կրոմլեխներ			
Ալ լիճ 10	N 39.97898°, E 045.73661°, 2773 մ	Փոքր տրամագծի գետաբարերից կրոմլեխներ, դամբան չկա	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015 թ.
Ալ լիճ 11	N 40.05715°, E 045.79496°, 2550 մ	Կրոմլեխներ, դամբան չկա	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015 թ.
Ալ լիճ 15	N 39.90324°, E 045.58187°, 3054 մ	Կրոմլեխներ, որտեղ հաճախ կատարված են կրկնակի թաղումներ նոր շրջանում. որպես կրոմլեխի քար՝ հաճախ օգտագործվում են ժայռապատկերների բեկորներ	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու, Գ. Սարգսյանի, Գ. Խաչատրյանի՝ 2016 թ.
Քարային լիցքով դամբաններ			
Ալ լիճ 12	N 40.01074°, E 045.67427°, 2755 մ	Կրոմլեխներ՝ ծածկված քարային դամբանով	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015թ.
Ալ լիճ 13	N 39.99206°, E 045.68916°, 2732 մ	Կրոմլեխներ՝ ծածկված քարային դամբանով	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015թ.
Ալ լիճ 19	N 40.08718°, E 045.75658°, 2441 մ	Քարային լիցքով դամբանաբլուր	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015թ.
Քարահողային լիցքով մեծ դամբանաբլուրներ			
Ալ լիճ 19	N 39.99961°, E 045.68073°, 2746 մ	Բարձր դամբանաբլուր՝ մոտ 10 մ տրամագծով	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015թ.
Հարթակներ և սրբատեղիներ			
Քարակույտ-հարթակներ (հսկայի տներ)			
Ալ լիճ 4	N 40.00098°, E 045.67745°, 2737 մ	Հսկայի տուն մեծ՝ 10 խցերով (= Ալ լիճ 3-ի կառույցը)	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015թ., Ա. Բորիսյանի՝ 2019թ.
Ալ լիճ 15	N 39.90260°, E 045.56118°, 2986 մ	Քարակույտ-հարթակները միավորվում են քարաշարերով	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու, Գ. Սարգսյանի, Գ. Խաչատրյանի՝ 2016թ.
Ալ լիճ 17	N 39.98733°, E 045.69148°, 2785 մ		Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015 թ.
Ալ լիճ 18	N 40.06577°, E 045.70335°, 2528 մ	Կից աշտարակատիպ կառույց	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015թ.
Ալ լիճ 19	N 40.08718°, E 045.75658°, 2441 մ		Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015թ.
Ալ լիճ 14	N 40.00849°, E 045.70729°, 2740 մ	Թոնիր/քարակույտ-հարթակ քարացրոնների մեջ	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015թ.
Ժայռային հարթակներ			
Ալ լիճ 5	N 39.99763°, E 045.67497°, 2745 մ	Թասածն փորվածքով քար	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015թ.
Կրոմլեխ-հարթակներ			
Ալ լիճ 21	N 39.96647°, E 045.65818°, 2969 մ	Կրոմլեխ՝ ցլակերպ վիշապի մոտ	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու, Գ. Սարգսյանի, Գ. Խաչատրյանի՝ 2016թ.
Կոթողային հուշարձաններ			
Վիշապ քարակոթողներ			
Ալ լիճ 1	N 39.96647°, E 045.65818°, 2969 մ	Վիշապ՝ ցլակերպ	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու, Գ. Սարգսյանի, Գ. Խաչատրյանի՝ 2016թ.
Ալ լիճ 2	N 40.00805°, E 045.67917°, 2747 մ	Վիշապ՝ ձկնակերպ, քարային լիցքով դամբարանի մեջ	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գնունու՝ 2015 թ.
Ալ լիճ 3	N 40.00098°, E 045.67745°, 2737 մ	Վիշապ՝ հսկայի տան մեջ	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի՝ 2019թ.
Կուռքեր			
Ալ լիճ 8	N 39.99256°, E 045.73297°, 2760 մ	Կուռք մարդակերպ	Հետազոտությունը՝ Գ. Սարգսյանի՝ 2008թ.

Պատեր			
Ալ լիճ 14	N 40.00849°, E 045.70729°, 2740 մ	Պատը սկսվում է Մեծ Ալ լճի առափնյա քարացրոններում՝ ձգվելով դեպի Մաքենիս	Հետազոտությունը՝ Գ. Սարգսյանի՝ 2008 թ., Ա. Բորիսյանի, Ա. Գևուկու՝ 2015 թ.
Ալ լիճ 19	N 40.08718°, E 045.75658°, 2441 մ	Պատեր Մեծ և Փոքր Ալ լճերի ավազանում	Հետազոտությունը՝ Գ. Սարգսյանի՝ 2008 թ., Ա. Բորիսյանի, Ա. Գևուկու՝ 2015 թ.
Ժայռապատկերներ			
Ալ լիճ 6	N 40.00297°, E 045.77386°, 2550 մ	Ժայռապատկերներ (Գորտագետի ավազանում, Փորակից 3 կմ հարավ-արևելք, 2 ժայռերից բխող աղբյուրների շուրջը)	Հետազոտությունը՝ Գ. Սարգսյանի՝ 2008 թ.
Ալ լիճ 7	N 39.99154°, E 045.73025°, 2765 մ	Ժայռապատկերներ, Փոքր Ալ լճի մոտ	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գևուկու՝ 2015 թ.
Ալ լիճ 15	N 39.90324°, E 045.58187°, 3054 մ	Դամբարաններ և ժայռապատկերներ	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գևուկու, Գ. Սարգսյանի, Գ. Խաչատրյանի՝ 2016 թ.
Ալ լիճ 15	N 39.90567°, E 045.59500°, 3036 մ	Ժայռապատկերների մեծ խումբ	Հետազոտությունը՝ Ա. Բորիսյանի, Ա. Գևուկու, Գ. Սարգսյանի, Գ. Խաչատրյանի՝ 2016 թ.
Այլ հուշարձաններ			
Ալ լիճ 16	N 40.00931°, E 045.68030°, 2733 մ	Քարեդարյան կայան	Հետազոտությունը՝ Գ. Սարգսյանի՝ 2008 թ., Ա. Բորիսյանի, Ա. Գևուկու՝ 2015 թ.

վորմանը, սակայն տարածքը արժևորում են հիշողության հնագիտության համատեքստում: Մասնավորապես, Մեծ Ալ լճի ավազանում հավաքվեցին վանակատե գործիքներ՝ շերտեր, ցլեպներ (Ալ լիճ 6), որոնց մշակման տեխնիկան բնորոշ է նեոլիթ-էնեոլիթյան ժամանակաշրջանին³⁸:

Մաքենիս–Ալ լճեր ճանապարհի աջ կողմում գտնվող տաշտաձև փորվածքով քարի (Ալ լիճ 16) վրա առկա է արաբական գրաֆիկայով թվագրում՝ 1252 (թ. հ. = 1874): Սակայն, ամենայն հավանականությամբ, քարն օգտագործվել էր այլ քանդակի (հավանաբար խաչքարի)³⁹ ագուցման համար:

Այս համատեքստում պետք է դիտարկել նաև դեպի Ալ լճերը տանող ճանապարհին գտնվող Մուրադ թափայի հուշարձանախումբը Վայոց ձորում: Այստեղ մեկ ամփոփ տարածքում կենտրոնացած են տարածամանակյա դամբանաբլուրներ և ժայռապատկերներ⁴⁰:

Դիտարկելով Ալ լճերի ավազանի հուշարձանները՝ կարելի է եզրակացնել, որ դրանք ներկայացնում են միասնական բազմաֆունկցիոնալ մի համալիր, որի տարրերը փոխկապակցված են, և որի տրամաբանական կենտրոնն էին լճերի ավազան-

ները⁴¹: Ալ լճերի տարածաշրջանը մեկուսացված չէ և մի շարք ուղիներով կապված է Գեղարքունիքի հուշարձանների հետ: Այսպես, նշյալ պատը ձգվում է դեպի Գեղարքունիքի մարզի Մաքենիս գյուղ, որտեղ նաև մի շարք բացօթյա սրբավայր-հսկայի տներ/օղուզներ կան, և որոնցից մեկին կից կառուցված է աշտարակ:

Այս համատեքստում պետք է դիտարկել նաև Ալ լճերի գոտուն հարակից մի շարք ամրոցներ և բնակատեղիներ, այդ թվում՝ «Չվածիր» ամրոցը (Ալ լիճ 20), Քարվաճառի Ծարի ամրոցը (սկ. 33–34), Գեղաքարը⁴², Ալի Բայրամլիի բնակատեղին, Իստիսուի բնակատեղին և ժայռապատկերները:

Թեպետ տարածքով անցնող ճանապարհների մասին հայտնի չէ, այնուամենայնիվ Ստեփանոս Օրբելյանի՝ Վարդանանց գործի Վայոց ձոր, ապա Արցախ նահանջելու նկարագրության մեջ, ամենայն հավանականությամբ, պետք է տեսնել ներկայիս Եղեգիս գյուղից դեպի Մուրադ թափա, այնուհետև Արփայի ակունք և Ալ լիճ տանող ճանապարհը⁴³:

Տարածամանակյա հուշարձանների առկայությունը, ինչպես նաև տեղանվան ստուգաբանու-

³⁸ Բնորոշումները՝ Բ. Գասպարյանի և Ա. Պետրոսյանի:

³⁹ Դիտարկումը՝ Հ. Հակոբյանի:

⁴⁰ Հետազոտությունները՝ Ա. Բորիսյանի, Ա. Գևուկու, Գ. Սարգսյանի, Գ. Խաչատրյանի:

⁴¹ Լճային ավազանների՝ սակրալ հուշարձանների կենտրոնացման վայր լինելու մասին Հայաստանում վկայված են մի շարք տարածաշրջաններում. Սյունիքում՝ Խոզնավար-Ծիծեռնավանք ճանապարհին, Սև լճի ավազանում, Խոզնավար-Միրիկ ճանապարհին, Ղազի գյուղ լճի ավազանում (հետազոտությունները՝ Գ. Սարգսյանի, Ա. Բորիսյանի, Ա. Գևուկու), Շիրակում՝ Արփի լճի ավազանում (հետազոտությունները՝ Ա. Բորիսյանի, Ա. Գևուկու), Փոքր Մասիսի գագաթին (Թաղիադյան 1846, 143): Հմնտ. լճերի ավազանում ժայռապատկերների կենտրոնացման մասին դիտարկումը (Փараджеева 2009, 194):

⁴² Арутюнян, Бадалян 2008.

⁴³ Ստեփանոս Օրբելյան 1986, ԺԸ:



թյունը, առանձին հուշարձանների՝ առ այսօր ուլտատեղի համարվելը, դրանց ձևափոխումը և հարմարեցումը նոր իրողություններին թույլ է տալիս ենթադրել, որ դարերի ընթացքում Ալ լճերի ավազանը ձևավորվել է որպես տևականության մեջ զարգացող սրբազան լանդշաֆտ:

Ալի Բայրամլիի համակառույց. Ալի Բայրամլիի շինությունը զբաղեցնում է բնակավայրի կենտրոնական գագաթային հատվածը, որի ընդհանուր տրամագիծը 22մ է: Այն բաղկացած է երկու համակենտրոն շրջաններից, որոնք շառավղային պատ-

երով բաժանվում են առանձին սեգմենտների: Կառույցն օղակված է կլոր հատակագծով բնակելի շինություններով՝ 3–5մ տրամագծով: Պեղումների ժամանակ հայտնաբերված նյութը բնորոշ է վաղ բրոնզի դարաշրջանին: Բլրի գագաթին բազմաթիվ ժայռապատկերներ կան⁴⁴: Դ.Ախունդովն այս շինությունը վերակազմում է որպես բազմասենյականոց մի կառույց, որը բաղկացած է 5 երկսենյականոց և մեկ երեք սենյականոց բնակարանային բջիջներից: Վերջինս, ըստ Ախունդովի, նախատեսված էր տոհմի առաջնորդի համար: Նմանատիպ պատկերներ կան Կոբխատանի Բույուկ դաշի⁴⁵, ինչպես նաև Գեղամա լեռների⁴⁶ ժայռապատկերներում: Դ.Ախունդովն այս շինությունը վերակազմում է որպես «տոհմային ամրացված բնակատեղի»⁴⁷: Սակայն Հայաստանի համաժամանակյա հուշարձաններում (Բջնի⁴⁸) առկա մի շարք զուգահեռներ չեն բացառում դրա ծիսապաշտամունքային գործառույթները:

Այլախի համակառույց (նկ. 35–56, գծանկ. 4). Գտնվում է Արցախի Շահումյանի շրջանի վարչական տարածքում, Սյունյաց լեռնաշղթայի բարձրավանդակի ալպյան մարգագետինների գոտում, Այլախ լճից 1,2կմ հյուսիս-արևելք, դեպի հարավ փոքր թեքություն ունեցող բաց դաշտում, ծովի մակերևույթից 2992մ բարձրության վրա:

Հիմնական հուշարձանը քարային լիցքով, 6–7մ տրամագծով հարթակ է: Քարային լիցքի վրա ընկած է 3,10մ երկարությամբ և մոտ 0,45մ տրամագծով կլոր մշակված, սրածայր վիշապ քարակոթող, որն, ամենայն հավանականությամբ, ի սկզբանե կանգնեցված է եղել (նկ. 42–54, գծանկ. 4):

Վիշապ քարակոթողի ենթադրյալ վայրի դիմաց կանգնած է եղել երկրորդ երկատված մենաքարը: Երկու բեկորների կոտրվածքի ուրվագիծը հստակ հուշում է, որ այն ժամանակին մոտ 2,8մ երկարությամբ, կտրվածքում քառանկյուն՝ 0,45×0,45մ չափերով, միակտոր, կանգնած մենաքար է եղել: Բացի վերոհիշյալներից, հարթակի լիցքի վրա ընկած են ևս մեկ տասնյակ տափակ մենհիրներ: Դրանց մի մասը տեղում թեքված է կամ շուռ եկած քարալիցքի վրա. դիրքից կարելի է ենթադրել, որ ժամանակին դրանք էլիպսաձև հատակագծով կրոմեղի են կազմել: Դամբարանից հարավ՝ դեպի լճակը, 65մ երկարությամբ ճառագայթաձև քարա-

⁴⁴ Исмаилов 1977, 492, Ибрагимов 1986, 25–27.

⁴⁵ Ахундов 1986, 39.

⁴⁶ Մարտիրոսյան, Իսրայելյան 1971, նկ. 250:

⁴⁷ Ахундов 1986, 39.

⁴⁸ Ղարիբյան և այլք 2010, 74–75:

Աղ. 4. Այլախի վիշապ քարակոթողը

Այլախ լիճ 1	
Անվանումը այլ/հին	Այլախ
Տիպը	Ձկնակերպ
Նյութը	Բազալտ
Պահպանվածությունը	Կոթողը. լավ (պահպանվել է ամբողջությամբ)
	Պատկերը. բավարար (աչքերից մեկը դժվար է նշմարվում)
	Համատեքստը. լավ (նախնական տեղում է)
Չափերը	330x50x41 սմ
Նախնական տեղը	Այլախ լճից մոտ 1 կմ հյուսիս-արևելք
Ներկա տեղը	Նախնական տեղում
Բարձրությունը ծ.մ.	2992 մ
Վարչական դիրքը	Քաշաթաղի շրջան, Արցախ, Սառնակունք (մոտակա համայնք Սյունիքում)
Հայտնաբերման պատմությունը	Հայտնաբերել է ԵՊՀ արշավախումբը 20.08.2016 թ.՝ հետախուզական աշխատանքներ իրականացնելու ընթացքում
Հնագիտական համատեքստը	Անմիջական. կլորավուն հատակագծով, 10 մ տրամագծով քարե հարթակի/հսկայի տան վրա եղել են 14 մենսիդրանման քարեր (99–198 սմ), 15-րդն էլ վիշապ քարակոթող է, որը գտնվում է հարթակի հարավարևելյան անկյունում: Կառույցի տարբեր հատվածներում կան ճառագայթաձև քարաշար ելուստներ: Դրանցից մեկը՝ հարավարևմտյան կողմում, մոտ 500 մ երկարությամբ ծխական ճանապարհ է:
	Հարակից. շրջակայքը խիստ հարուստ է հսկաների տներով, կլոր կառույցներով, քայթերով: Կոթողի կառույցն ընկած է նման քառակուսի մի քայթի մեջ, որը կարող է սրբազան սահման լինել:

Աղ. 5. Այլախի մենաքարերը

№	Հուշարձանը	Չափերը	Մշակում	Ուրվագծերը	Իրան	Ստորին հատված	Վերին հատված	Փոխադարձ տեղադրությունը	Հնագիտական համատեքստ	Բնական համատեքստ
1	Այլախ 1/2	165x45x23	Կոպտատաշ	Ուղիղ	Սեղանաձև	Նեղացող	Կոնաձև	Կրոմլեխ	Ամառանոց-բնակավայր, դամբարանադաշտ	Լիճ
2	Այլախ 1/3	120x26x31	Կոպտատաշ	Ուղիղ	Չուզահեռանիստ	Եռանկյուն	Երկթեք	Կրոմլեխ	Ամառանոց-բնակավայր, դամբարանադաշտ	Լիճ
3	Այլախ 1/4	140x65x20	Կոպտատաշ	Ուղիղ	Չուզահեռանիստ	Ուղիղ	Թեք	Կրոմլեխ	Ամառանոց-բնակավայր, դամբարանադաշտ	Լիճ
4	Այլախ 1/5	198x57x25	Կոպտատաշ	Ուղիղ	Սեղանաձև	Ուղիղ	Ուղիղ	Կրոմլեխ	Ամառանոց-բնակավայր, դամբարանադաշտ	Լիճ
5	Այլախ 1/6	122x68x12	Կոպտատաշ	Ուղիղ	Բազմանիստ	Ուղիղ	Ուղիղ	Կրոմլեխ	Ամառանոց-բնակավայր, դամբարանադաշտ	Լիճ
6	Այլախ 1/7	99x62x17	Կոպտատաշ	Ուղիղ	Չուզահեռանիստ	Ուղիղ	Ուղիղ	Կրոմլեխ	Ամառանոց-բնակավայր, դամբարանադաշտ	Լիճ
7	Այլախ 1/8	162x52x24	Կոպտատաշ	Անհայտ	Սեղանաձև	Ուղիղ	Սալավտավոր	Կրոմլեխ	Ամառանոց-բնակավայր, դամբարանադաշտ	Լիճ
8	Այլախ 1/9	180x71x12	Կոպտատաշ	Ուղիղ	Սեղանաձև	Թեք	Երկթեք	Կրոմլեխ	Ամառանոց-բնակավայր, դամբարանադաշտ	Լիճ
9	Այլախ 1/10	165x55x12	Կոպտատաշ	Թեք	Բազմանիստ	Թեք	Տձև	Կրոմլեխ	Ամառանոց-բնակավայր, դամբարանադաշտ	Լիճ
10	Այլախ 1/11	154x62x	Կոպտատաշ	Ուղիղ	Բազմանիստ	Թեք	Տձև	Կրոմլեխ	Ամառանոց-բնակավայր, դամբարանադաշտ	Լիճ
11	Այլախ 1/12	150x47x17	Կոպտատաշ	Ուղիղ	Բազմանիստ	Թեք	Տձև	Կրոմլեխ	Ամառանոց-բնակավայր, դամբարանադաշտ	Լիճ
12	Այլախ 2		Կոպտատաշ	Ուղիղ	Չուզահեռանիստ	?	Սեղանաձև			Լիճ

շեն պատաշար է ձգվում: Այն բարձրությամբ միաշար է, լայնությամբ՝ երկերես և ավարտվում է լճակի ափեզրին: Մոտվի վերականգնելով հուշարձանի սկզբնական տեսքը՝ պետք է ընդունենք, որ այն ցից քարերով ներփակված քարային կառուցվածք է եղել, որի կենտրոնում՝ դեմ դիմաց, կանգնած էր

վիշապ քարակոթողը և մենաքարը: Եվս մեկ մենսիդրանաձև է լճափին, որը մեկուսի կանգնած սեղանաձև վերնամասով կոպտատաշ կոթող է:

Անդրադառնալով նշված համալիրի գործառույթին՝ կարելի է առաջ քաշել երկու հնարավոր տարբերակ: Այն ի սկզբանե կարող էր լինել տոհ-

մացեղային ավագանու ներկայացուցչի դամբարան, որ հետագայում վերածվել է սրբատեղիի⁴⁹։ Այս պարագայում քարակղային թաղման խուցը պետք է տեղայնացնել հարթակի կենտրոնում։ Ծածկասալերի քարերը դրված են այսօրվա բնահողի մակերեսի մակարդակին։ Ենթադրյալ խցի երկարությունը չի ուրվագծվում, բայց լայնությունը 2մ է։ Այն պետք է կողմնորոշված լիներ հյուսիս-հարավ առանցքով և այսօր լցված է հողով ու քարերով։ Միևնույն ժամանակ այն կարող էր ի սկզբանե կառուցված լինել որպես հարթակ։ Հայաստանից (Նորաշեն, Կայծոռ բերդ, Գավառ, Մոսեսգեղ) և Հին աշխարհի այլ վայրերից հայտնաբերվել են մի շարք այդպիսի բաց հարթակների մանրակերտեր։ Ընդ որում՝ Գավառից հայտնաբերված մանրակերտում բացակայում էր գոհասեղանը⁵⁰։

Հարթակը մտնում է բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի մոտ 6 հա տարածք զբաղեցնող ամառային արոտավայրի կայան-բնակավայր համակառույցի մեջ։ Համակառույցը բաղկացած է 17–20 տարբեր չափերի ու հատակագծերի ընդարձակ փարախներից, նրանցից հարավ-արևմուտք տարածվող ընդհանուր մեծ փարախից, տեղանքի ջրահավաքում գտնվող բնական լճակից և փարախ-կացարանների ու ջրամբարի միջնամասում գտնվող մենհիրներով դամբարան-սրբատեղիից։ Այն ներփակված է եղել հատվածաբար պահպանված պարիսպ-ցանկապատով։ Բոլոր շինությունների պատերն ու ցանկապատերը կառուցված են շրջակայքից հավաքած տարբեր չափերի անմշակ բազալտի բեկորներից, չոր շարվածքով և պահպանվել են մինչև 1,0–1,2մ բարձրությամբ։ Պատերի երևացող լայնությունը չի գերազանցում 1,5–2մ։ Պատաշարերի քարերի մակերեսները մամռապատ են, ինչը խոսում է կառույցների հնության մասին։

Փարախներն ու կացարանները կենտրոնացած են համակառույցի հյուսիսային վերնամասում (նկ.55–56)։ Վերջիններս միմյանցից քարե ցանկապատերով բաժանվող, իրար կցված ու մուտքերով հաղորդակցվող մեծ տարածքներ են, որոնք միջանցքներով ու անցումներով կապվում են ընդհանուր մեծ անասնափարախի հետ։ Նկատվում է, որ

համակառույցը կառուցվել է պարբերաբար՝ ավելացնելով ու իրար կցելով նոր ու տարբեր մեծության փարախներ։ Բոլոր փարախներում նկատվում է մի ընդհանուր առանձնահատկություն՝ նրանք բոլորն էլ կան միջնամասում, կան անկյունում, կան անմիջապես ցանկապատին կցված ունեն առանձնացված, մոտ 2,0×2,5մ կամ 2,5×3,0մ չափերով փոքր, կիսագետնափոր սենյակներ, որոնք այսօր շինաքարերով լցված փոսորակների տեսք ունեն։ Հատկանշական է, որ, անկախ չափերից, յուրաքանչյուր փարախում կա միայն մեկ, գրեթե նույն մեծության կիսագետնափոր սենյակ։

Ըստ ամենայնի՝ գործ ունենք բրոնզ-երկաթեդարյան պարբերաբար օգտագործվող ամառային արոտավայրային հենակետ-բնակավայրի հետ։ Կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր փարախ նախատեսված է առանձին միավոր-բնակավայրի նախիրի համար, իսկ փարախի ներսի կիսագետնափոր սենյակն այդ բնակավայրի հասարակական հոտն ուղեկցող հովիվների կացարանն է։ Ցեղային միության ամառային կայանը կառուցվածքում ունի առանձնացված փարախներ՝ հովիվների կացարաններով, մեկ ընդհանուր մեծ փարախ և լճակ՝ հոտը ջրելու համար, և հարթակ սրբատեղի⁵¹։


Խոզնավարի լճի համակառույց (նկ.57–62, գծանկ.5)։ Խոզնավարի լճի համակառույցի հիմնական բաղադրատարրերն են ամրոցը, դամբարանադաշտը և վիշապ քարակոթողը⁵²։ Ամրոցը գտնվում է Միրիկ համայնքի արոտավայրերում, ալպյան մարգագետինների գոտում՝ Խոզնավարի լիճ կոչվող բնական լճակի հարավային ափի բլրին։ Հուշարձանը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի սահմանագլխին, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Խոզնավար գյուղից 2,5կմ արևմուտք։ Ամրոցը զբաղեցնում է երկարավուն, կոնաձև բլրի հարթեցված գագաթը և մասամբ՝ լանջերը։ Այն շատ վատ է պահպանվել։ Այսօր հատվածաբար երևում է վերին պարսպագիծը, իսկ ստորինը ուրվագծվում է որպես ռելիեֆ։ Գտնվելով բնական լճակի ափին՝ ամրոցի տարածքը մշտապես օգտագործվել է որպես անասնապահական ամառանոց։ Լճակի ափերին և մասնավոր

⁴⁹ Հմմտ. թոեղքյան մեծ դամբարանները, այնտեղ տանող ճանապարհները, դամբարաններին կից քառանկյուն կառույցները, որոնք կազմում էին մեկ ընդհանուր ծխապաշտամունքային միջավայր (Нариманишвили 2009, 99)։


⁵⁰ Есаян 1980, 39.

⁵¹ Հմմտ. Արծվաբերդ ամրոցը Տավուշում։ Նույն նշանակությունն ունեն նաև Խորտամբոց ամրոցի պաշտամունքային հարթակը (Есаян 1976, 235)։ Ազգագրական զուգահեռների առումով պետք է նշել, որ սովորաբար ամառանոցը հիմնվում էր ամառային արոտավայրի կենտրոնում՝ մի փոքր բարձունքի վրա (Брентова 2011, 110)։ Այս տիպի համալիրները սովորաբար բաղկացած էին բնակելի հատվածից, մուրիից և բացօթյա փարախից (Мкртумян 1974, 56)։

⁵² Սարգսյան և այլք 2022, 76–81։



Գծանկ. 5. Խոզնավարի սար 1 վիշապ քարակոթողը (գծագիրը՝ Ա. Հախվերդյանի)



Գծանկ. 6. Որոտան 1 վիշապ քարակոթողի մանրակերտը (գծագիրը՝ Ա. Հախվերդյանի)

Աղ. 6. Խոզնավարի լճի վիշապ քարակոթողը

Խոզնավարի սար 1	
Անվանումը այլ/իլին	Խոզնավար
Տիպը	Ձկնակերպ
Նյութը	Բազալտ
Պահպանվածությունը	Կոթողը. լավ (պահպանվել է ամբողջությամբ. կողային հատվածներում կան փոքր կոտրվածքներ)
	Պատկերը. բավարար (հազիվ նշմարվում են աչքերը)
	Համատեքստը. վատ (նախնական տեղը հայտնի չէ)
Չափսը	232x51x35 սմ
Նախնական տեղը	Խոզնավար լճից 0,5 կմ հյուսիս-արևելք
Ներկա տեղը	Նախնական տեղից ոչ հեռու
Բարձրությունը ծ.մ.	1930 մ
Վարչական դիրքը	ՀՀ Սյունիքի մարզի և Քաջաթաղի շրջանի սահման, Խոզնավար (մոտակա համայնք)
Հայտնաբերման պատմությունը	Գտել է Չոհրաբ Ըռքոյանը (Քաջաթաղի «Մերան» թերթի գլխավոր խմբագիր)
Հնագիտական համատեքստը	Անմիջական. թմբով կրոմեխի վրա է
	Հարակից. շրջակայքում՝ հսկայի տներին նմանվող կառույցներ (լճակի մոտ)

րապես ամրոցի վրա տարբեր ժամանակներում կառուցվել ու վերակառուցվել են փարախներ: Վերջիններիս շինաքարերը վերցվել են ամրոցի պարիսպներից՝ նախապես ճեղքելով ու փոքրացնելով: Հուշարձանի տարածքում դրված փարախներն ամրոցի վերին պարսպին կցվել են հիմնականում դրսից: Երևում է, որ նրանց մեկ պատը ամրոցի հնագույն շերտի՝ կիկլոպյան շարվածքով պարիսպն է: Վերին պարսպագիծը ուրվագծվում է հատվածաբար՝ տեղ-տեղ երևացող պարսպագծի քարերով:

Երկրորդ՝ ստորին պարսպաշարը, որ եզերում էր բնակատեղիի դարավանդը, ծածկված է խոտածածկույթով և հստակ չի ուրվագծվում: Բոլոր փարախները և հնագույն կիկլոպյան պարիսպները շարված են անմշակ քարերի չոր շարվածքով, բայց տարբերվում են քարերի մեծությամբ ու շարվածքի հարաբերական կանոնավորությամբ:

Միջնաբերդի ներսի տարածքը համեմատաբար հարթ է, բայց կառուցապատման ցայտուն հետքեր չեն երևում: Հուշարձանում վերգետնյա խե-

ցեղենը սակավ է: Բացված խուզահորանից հայտնաբերված խեցեղենը տարածամասնակյա է, սակայն վաղագույնը վերաբերում է բրոնզի և երկաթի դարերին (Ք. ա. II–I հազ.), որով և պետք է թվագրել ամրոցը:

Ամրոցի որոշ սենյակներում պատերի մեջ ներդրված կամ պատերին հենած են մինչև 1 մ բարձրությամբ կոպտատաշ քարե կուռքեր: Ամրոցի հյուսիսարևելյան թամբան իջվածքի հարթակում պահպանվել են կրումլեխներով եզերված սալարկղային թաղումներ, որոնք բոլորն էլ ունեն կողոպտված լինելու նշաններ: Լճակը ներփակող բլրաշղթայի ջրբաժան գծին նկատվում են շարքով գնացող խոշոր դամբարանաբլուրներ:

Վիշապ քարակոթողը տեղադրված է ամրոցի ստորոտին՝ Խոզնավար իջնոդ ճանապարհին հարող հարթակի վրա: Հայտնաբերել է Զ. Լոքոյանը 2018 թ.: Արձանը ձկնակերպ է: Վերին հատվածը լավ մշակված ու կլորացված է, գագաթին նկատվում են փորագրված ձկան գլուխը և աչքը: Կոթողի ստորին մասը մշակված չէ և, ըստ ամենայնի, այն կանգնած է եղել: Վիշապ քարակոթողը տեղահան արված ու ընկած է մեղիորացված քարակույտերի մեջ: Այն պետք է դիտարկել ամրոցի և լճակի համատեքստում: Չի բացառվում, որ ի սկզբանե կանգնած է եղել հենց նրանց մոտ:

Միրիկ 4 համակառույց (նկ. 65–66). Միրիկ 4 փարախների համակարգը գտնվում է Աղահեճ ամրոցից 4,1 կմ հարավ-արևմուտք՝ ալպյան արոտավայրերի սարահարթի սկզբնամասում⁵³: Այն Միրիկ 1 ամրոցին ամրացված փարախ-ամառանոց է՝ կառուցված զանգվածեղ, անմշակ քարերից՝ կիկլոպյան շարվածքով: Կառույցները բաղկացած են ներփակ, միմյանց հաջորդող բաց բակերից և կացարանների նմանվող փոքր սենյակներից: Եզրապատերը շարված են զգալիորեն ավելի խոշոր քարերից, քան ներսի պատերն ու միջնորմերը: Ուշագրավ է, որ կառույցների պատերի քարերը դրված են միմյանցից փոքր հեռավորությամբ, ինչը որոշ հատվածներում քարե ցանկապատի տպավորություն է թողնում: Հարկ է նշել, որ հիմնական եզրապատերի շուրջն ընկած շարի քարեր գրեթե չկան, ինչը թույլ է տալիս մտածել, որ այս քարե պատաշարերը ընդամենը երբեմնի փայտյա ցցապատի քարե հիմնաշարերն են: Հուշարձանը վատ է պահպանվել:

Նրա հիմնական մասը մեղիորացված է, և մնացել են միայն դաշտամիջյան ճանապարհի երկու կողմերի հատվածները:

Միրիկ գյուղից ալպյան արոտավայրերի սարահարթ տանող ճանապարհի սկզբնամասի ձախ եզրին՝ Միրիկ 4 ամրացված փարախի հյուսիսային կողմում է գտնվում տեղանքի ժայռապատկերքարտեզը: Այն փորագրված է բնահողի մերկացող, երկու մասերից բաղկացած ժայռաբեկորի լեռկ մակերեսին: Կլորացող, համակենտրոն ու երկաթագող փորագիր ակոսներով պատկերված են ուղիներ, հավանաբար՝ ճանապարհներ, առվակներ, բաժականման խոր փորվածքներ, հնարավոր է՝ լճակներ և հարթեցված եզրապատերով թասանման կերտվածքներ, ենթադրաբար՝ անասնափարախներ:

Ժայռափոր կերտվածքի ալպյան մարգագետինների մուտքի մոտ գտնվելը, ինչպես նաև փորագրությունների տեսքը թույլ են տալիս մտածել, որ այն իր ժամանակի արոտավայրերի սխեմատիկ քարտեզ-ուղեցույց է: Այն ակնհայտորեն փորագրված է բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանում և զուգահեռվում է ջրատարերի հայտնի քարտեզների հետ, որոնք հայտնի են Մեծամորում, Կաքավաբերդում, Գեղարդում⁵⁴:

Միրիկ 1 համակառույց (նկ. 67–82, գծանկ. 7–15). Միրիկ 1 ամրոցը (Աղահեճ) գտնվում է համանուն գյուղի արևմտյան եզրին բարձրացող, արևմուտք-արևելք առանցքով ձգվող բազալտի լավային հոսքով կազմավորված լեռնաբազկի արևելյան վերջավորության գագաթին⁵⁵: Միրիկ 1 ամրոցը, ամենայն հավանականությամբ, Աղահեճ ամրոցն է, քանի որ Աղավնոյի հովտում գտնվող այս գավառում համանուն բնակավայր միջնադարյան աղբյուրներում չի հիշատակվում: Միրիկ տեղանունն առաջին անգամ հիշատակվում է Միրիկի եկեղեցու արձանագրության մեջ. ՄԵՆՔ Մ(Ի)ՐԻԿԻ Ժ(Ո) Ղ(Ո)Վ(ՈԻ)ՐԴՄ Տ(ՈԻ)ԻՆՔ Ս(ՈԻ)Բ ՆԿ(Ե)Ղ(Ե) ՑՈՅՍ⁵⁶: Ղ. Ալիշանը, ամենայն հավանականությամբ, նկատի ունի հենց Միրիկի ամրոցը՝ հիշատակելով Հերիկից 1 մղոն հարավ-արևելք գտնվող ամրոցը⁵⁷: Միրիկի բազմաֆունկցիոնալ մեգահամակառույցն ընդգրկում է բուն ամրոցի համակառույցը, այդ թվում նաև պաշտպանական համակարգը, դղյակը, ծիսական համալիրը, ընդարձակ


⁵³ Սարգսյան և այլք 2022, 72–76:

⁵⁴ Խանգաղյան և այլք 1973, 150–152, Բոբոխյան, Հովհաննիսյան 2016, 249–250:

⁵⁵ Սարգսյան և այլք 2022, 56–67:

⁵⁶ Կարապետյան 1999, 134:

⁵⁷ Ալիշան 1893, 266:



Գծանկ. 7. Միրիկ 1 հուշարձանախմբի տեղագրական հանույթը (հանույթ՝ Գ. Սարգսյանի) (Պալատական «վարչակառավարչական» համալիր (1-1. Դոյակի պալատական կառույցը, 1-2. Օրթոստատ քարով շարված սենյակը, 1-3. Դոյակի կորագիծ, հզոր պարսպաշարը, 1-4. Դոյակի ներքին բակը՝ ագորան, 1-5. Դոյակի մուտքը): Հոգևոր, «կրոնապաշտամունքային» համալիր (2-1. Տաճարի գագաթի հրապարակը՝ կից աստիճանաձև հարթակներով, 2-2. Բուրգ-աշտարակի արևմտյան զետևափոր բակը՝ ժայռակերտ մուտքով, 2-3. Տաճարի հիմնական աստիճանավանդակը, 2-4. Տաճարի աստիճանավանդակի շքամուտքը, 2-5. Տաճարի ժապավենաձև, թեքադիր հարթակ-հրապարակները, 2-6. Տաճար տանող հին ճանապարհը, 2-7. Կուրքերի (ցից քարերի) հարթակը, 2-8. Ժայռակերտ դարպասները, 2-9. Երկհարկանի շինության ժայռափոր սենյակը): Միջնաբերդ (3. Միջնաբերդի պարիսպները, 4. Միջնաբերդի գլխավոր ճանապարհը, 5. Միջնաբերդի լանջերին տարածվող բնակատեղիի արհեստական դարավանդների պարիսպ-հենապատերը, 6. Միջնաբերդի արևմտյան պարսպաշարը և գլխավոր մուտքը)


դամբարանադաշտը, ժայռափոր ճանապարհը, պարիսպ-ցանկապատը:

Ամրոցը. Գտնվում է Միրիկ գյուղի արևմտյան եզրին բարձրացող երկար լեռնաբազկի ծայր արևմտյան եզրին (սկ. 67-74): Բլրի գագաթին միջնաբերդն է, իսկ բուն բնակատեղին տարածվում է բարձունքի հարավային և հյուսիսային լանջերին՝ հասնելով մինչև Միրիկ գյուղի եզրը: Ամրոցը բաղկացած է լեռնաբազկի գագաթին գտնվող միջնաբերդից, նրա լանջերին կառուցված բնակատեղիից և բլրի ստորոտում, մասամբ արևմտյան կողմում սփռվող դամբարանադաշտից: Ամրոցի հիմնական՝ «իշխանական», դամբարանադաշտը գտնվում է միջնաբերդից 1 կմ արևմուտք՝ կառույցին նայող սարահարթին: Ամրոցի բնակատեղին գտնվում է ամրոցակալ բլրի հյուսիսային ու հարավային լանջերին՝ պարիսպ-հենապատերով կազմակերպված արհեստական դարավանդներին: Հյուսիսային լանջի դարավանդի պարիսպ-հենապատը ձգվում է միջնաբերդի ամբողջ երկարությամբ և տեղ-տեղ պահպանվել է մինչև 7 մ բարձրությամբ:

Ամրոցանիստ բլրի հարավային գաղիթափ լանջը պատված է պարիսպ-հենապատերով՝ կազմակերպված 2-3 արհեստական դարավանդներով, որոնց վրա պահպանված են կառուցապատման հետքերը: Հենապատերը շարված են նույն՝ կիկլոպյան տեխնիկայով և պահպանվել են մինչև 5 մ բարձրությամբ: Հարավային լանջի արհեստական դարավանդներից մեկում, միջնաբերդի դոյակից մոտ 60 մ ներքև բացվում է երեք միակտոր քարերից շարված 1×1 մ չափերով միջնաբերդի ստորգետնյա անցուղու մուտքը, որը քողարկված է եղել դիմացն ընկած մեծ տափակ սալով:

Միջնաբերդի ընդհանուր երկարությունը 350 մ է, լայնությունը՝ 20-50 մ: Այն զբաղեցնում է բլրի արհեստականորեն հարթեցված գագաթը և երկու ծավալատարածային ու գործառության համալիրների միասնություն է՝ ա. պալատական՝ «վարչակառավարչական» համալիր, «դոյակ», բ. հոգևոր՝ «կրոնապաշտամունքային» համալիր:

Միջնաբերդի արևմտյան՝ նախամուտքային հատվածը ամենամատչելին է, ուստի այստեղ միջ-



Գծանկ. 8. Միրիկ 1-ի տաճարական համալիրի սխեմատիկ չափագրությունը (չափագրությունը՝ Ա. Դավթյանի, Գ. Սարգսյանի)


նաբերողը պաշտպանված է մոտ 50մ երկարությամբ ու 2մ լայնությամբ հզոր պարսպով, որի հյուսիսային եզրին նկատվում է միջնաբերդի գլխավոր մուտքը:

Պալատական՝ «վարչակառավարչական» համալիր-«դղյակը». գտնվում է միջնաբերդի ծայր արևելյան եզրին և բաղկացած է այսպես կոչված «պալատից», դիմացի բաց հրապարակից և դեպի արևելք աստիճանաձև իջնող երկու պարսպապատ փոքր հարթակներից: Դղյակի մուտքը հարավային կողմից է, ուր միջնաբերդի եզրագծից մեկ դարավանդ ներքև հորիզոնով ձգվում է հիմնական ճանապարհը: Հատակագծում եռանկյունաձև 110×40մ չափերով դղյակը պարսպապատ է և միջնաբերդի արևմտյան հատվածից առանձնանում է 3մ լայնությամբ, 30մ երկարությամբ ու մինչև 4մ բարձրությամբ պահպանված հզոր կիկլոպյան պարսպով: Պալատի համակառույցը դիմացի բաց հրապարակից զատվում է կողքի վրա ցից կանգնած քարերով


շարված օրթոստատ պատով: Այն բազմասենյականոց համալիր է, որի բնակելի շինությունները խմբավորված են դղյակի հարավային պատի երկայնքով: Վերջինս ոչ թե քարաշեն է, այլ ներսից կտրված, հղկված ժայռագիծ է, որին կցված են 8–9 սենյակներ: Այս հատվածը պատված է փլատակներով, բայց նկատվում է, որ սենյակները ժամանակին հաղորդակցվել են: Պալատի հյուսիսային հատվածը զբաղեցնում է պալատի ներքին բակը:

Օրթոստատ պատերով շինությունը կենտրոնական տեղ է զբաղեցնում պալատում: Այն պահպանվել է մեկ քարի բարձրությամբ և, ըստ ամենայնի, դիպվածաբար օգտագործվել է նաև մայր ամրոցի կործանումից հետո: Այն պեղվել է 2017թ. և ի հայտ է բերել բավականին խայտաբղետ հնագիտական նյութ, որտեղ երկաթի դարաշրջանին բնորոշ խեցեղենը փաստվել է միայն հատակին, իսկ վերևի շերտերի գերակշռող նյութը միջնադարյան է:

Դղյակի բաց բակի պարսպագծի արևելյան



Գծանկ. 9. Միրիկ 1-ի դարպասների հատվածի գծագիրը (չափագրությունը՝ Ա. Դավթյանի)



Գծանկ. 10. Միրիկ 1-ի երկհարկանի ժայռափոր սենյակի գծագիրը (չափագրությունը՝ Ա. Դավթյանի)

անկյունում՝ ցից կանգնած ժայռակտորներից մեկի ճակատին, փորված է ներճկված փոսորակ՝ փայտե լծակ տեղադրելու համար: Հնարավոր է, որ այստեղ եղել է դեպի դռան արևելյան եզրին կառուցված փոքր պարսպապատ հարթակները տանող փայտե դուռ:

Տաճարական համալիրը. Գտնվում է միջնաբերդի կենտրոնական մասում և բաղկացած է միջնաբերդի ամենաբարձր կետում՝ բլրակին կանգնած բազմաստիճան բուրգ-աշտարակից, նրան արևմուտքից հարող ժայռափոր ներքին բակից, ամրոցանիստ լեռնաբազկի հյուսիսային լանջից դեպի բուրգ-աշտարակ բարձրացող թեքադիր, երկարաձիգ աստիճանավանդակից ու ժապավենաձև հարթակներից, կուռքերի հրապարակից ու ժայռակերտ դարպասներից: Համալիրը արևմուտքից սահմանազատվում է բուրգ-աշտարակի գետնափոր ներքին բակով, արևելքից՝ պալատական համալիրի կիսաշրջան հզոր պարսպով: Ամբողջ համալիրը կառուցված է անմշակ, ճեղքած բազալտից՝ չոր, կիկլոպյան շարվածքով:


1. Մինչև 4մ բարձրություն ունեցող բուրգ-աշտարակը պսակվում է $9,60 \times 14,50$ մ չափերով հարթակ-հրապարակով: Աշտարակին հարավից կից են մեկ, իսկ արևմուտքից՝ երկու ավելի փոքր, աստիճանաձև հենապատ-հարթակներ: Աշտարակի հարթակի կենտրոնում թեթև ուրվագծվում են մի փոքր ուղղանկյուն ծավալի հիմնաքարերի հետքեր: Չի

բացառվում, որ այստեղ գործ ունենք հարթակի կենտրոնում ժամանակին կանգնած ծխական սեղան-ատրուշանի հետ:

Աշտարակը գտնվում է միջնաբերդի գագաթի ամենանեղ ու բարձր կետում և իր ծավալի երկարությամբ ամբողջովին փակում է անցումը միջնաբերդի արևմտյան մուտքից դեպի ժայռակերտ դարպասներ ու պալատական համալիր: Անցումը հնարավոր է իրականացնել՝ շրջանցելով աշտարակը հարավից՝ մեկ դարավանդ ներքև ձգվող միջնաբերդի գլխավոր ճանապարհով:

Արևմուտքից աշտարակը սահմանազատվում է միջնաբերդի մակերեսից՝ 2,5–3մ խորությամբ փորված մոտ 12×6 մ չափերով մի կառույցով (հնարավոր է՝ սենյակ կամ գետնափոր ներքին բակ): Վերջինի հարավային ճակատը կազմող ժայռային պատի մեջ բացված է 1,5 մ լայնությամբ մուտք՝ դեպի միջնաբերդի գլխավոր ճանապարհը: Հավանաբար հենց սա է եղել միջնաբերդից աշտարակ տանող անցումը:

2. Ուշադրության է արժանի թեքադիր աստիճանավանդակը և բուրգ-աշտարակը (նկ. 75–80): Այն սկիզբ է առնում ամրոցանիստ լեռնաբազկի հյուսիսային լանջի ստորոտի արևելյան կողմից դեպի տաճար տանող հնագույն ճանապարհից: Ճանապարհի մոտ 200մ պահպանված հատվածն ունի 2,0–2,5մ լայնություն և մասամբ սալապատ է: Ներսից ամրացված է լանջի թեքությունը պահող




Գծանկ. 11. Միրիկ 1-ի երկհարկանի ժայռափոր սենյակի խեցեղենը (չափագրությունը՝ Ա. Դավթյանի)

քարաշեն ցածր հենապատով, իսկ արտաքին եզրագիծը տեղ-տեղ ընդգծված է քարաշարով ու ցածր հենապատով:

Թեքաղի աստիճանավանդակի հատումը տաճար տանող ճանապարհի հետ հստակ չի երևում, բայց ճանապարհի վերջնակետից մոտ 6մ վերև պահպանվել է բուրգի թեքաղի աստիճանավանդակի կանոնավոր կառուցված գլխավոր մուտքը՝ շքամուտքը: Այն երկու կողմերից զանգվածեղ ժայռաքեկորներով ուղղորդվող, մոտ 4մ երկարությամբ ու 2մ լայնությամբ, դեպի վեր բարձրացող անցում է: Շքամուտքի հատակին պահպանվել են մեծ, ուղղանկյուն քարերից դրված 5 շարք աստիճաններ: Շքամուտքից վերև աստիճանավանդակը լայնանում է մինչև 8մ և այս լայնությամբ, ամբողջովին քարաշեն, ուղիղ բարձրանում մինչև տաճարաշտարակը: Թեքաղի աստիճանավանդակի ընդհանուր երկարությանը 70մ է, թեքությունը՝ 38°, ներքին ու վերին կետերի բարձրության նիշերի տարբերությունը՝ 46մ, ամենամեծ լայնությունը՝ 8մ:


Աստիճանավանդակը կազմված է երկու հատվածներից՝ քարաշեն եզրապատերով հարթակների ժայռավենաձև ծավալից և նրան ներքևից հարող ու աջ կողմից շրջանցող հիմնական աստիճանավանդակից: Ժայռավենաձև հարթակը 35մ երկարությամբ, 6մ լայնությամբ, եզրաբաժանում՝ մինչև 3մ բարձրությամբ, կանոնավոր պատերով ներփակված, շրջապատից բարձր կանգնած, թեքաղի,




Գծանկ. 12. Միրիկ 1-ի երկհարկանի ժայռափոր սենյակի խեցեղենը (չափագրությունը՝ Ա. Դավթյանի)

ամբողջովին քարաշեն ծավալ է: Այն սկիզբ է առնում աշտարակից և, իջնելով մինչև աստիճանավանդակի կեսը, փակվում է 3մ բարձրությամբ կանգնած ճակատ-հենապատով: Ժայռավենաձև հարթակի մակերեսի բարձրության տարբեր նիշերում պահպանվել են 4-5, մինչև 1-1,6մ բարձրությամբ, հենապատերով փակվող, փոքր, առանձնացված հարթակ-հրապարակների մնացորդներ: Վերջիններս հաղորդակցվում էին արևելյան եզրում ուղղաձիգ նեղ աստիճաններով: Այն տպավորությունն է ստեղծվում, որ ժայռավենաձև հարթակը ժամանակին կազմված էր իրար աստիճանաձև հաջորդող մի քանի փոքր, հորիզոնական մակերեսով հարթակներից:

Հիմնական աստիճանավանդակը սկիզբ է առնում ներքևի շքամուտքից և 8մ լայնությամբ բարձրանում մինչև ժայռավենաձև հարթակի 3 մետրանոց ճակատը: Այստեղ այն աջ կողմից շրջանցում է ժայռավենաձև հարթակը և արդեն 2,5մ լայնությամբ բարձրանում մինչև աշտարակի ստորոտը: Հիմնական աստիճանավանդակի եզրագծերում պատաշար չի նկատվում, և նրա թեքաղի մակերեսի ամբողջ լայնությամբ ընկած են միջին չափի, ճեղքած, անմշակ քարերից, չոր շարվածքով դրված առնվազն 25-30 աստիճաններ: Վերջիններիս պահպանվածությունը տարբեր է, բայց կարելի է ընդունել, որ աստիճանի միջինացված բարձրությունը 0,6-0,9մ է, լայնությունը՝ 0,8-1,5մ:



Գծանկ. 13. Միրիկ 1-ի երկհարկանի ժայռափոր սենյակի խեցեղենը (չափագրությունը՝ Ա. Դավթյանի)



Գծանկ. 14. Միրիկ 1-ի երկհարկանի ժայռափոր սենյակի խեցեղենը (չափագրությունը՝ Ա. Դավթյանի)

Փաստորեն, բլրի հյուսիսային լանջով ձգվող արահետը և աստիճանավանդակը ձևավորում են դեպի բրգաձև աշտարակ տանող մի միասնական արարողակարգային ճանապարհ⁵⁸։ Ծանապարհները հաճախ լինում են մեգալիթյան համակառույցներում։ Բացի այդ, ժայռափոր ճանապարհները կարող են դիտվել պարամեգալիթների, իսկ կիկլոպյան պարիսպներով եզրափակվածները՝ կվազիմեգալիթների համատեքստում⁵⁹։

Թեպետ այս կառույցի ուղղակի գուգահեռներ չկան, սակայն առանձին բաղադրատարրեր ի հայտ են գալիս մի շարք հուշարձաններում։ Այս համատեքստում պետք է քննարկել Արծվաբերդի ժայռային հարթակը, դեպի ուր աստիճաններ են տանում⁶⁰։ Արտաշատից հայտնաբերված բրոնզե քանդակը

պատկերում է աստիճանաձև հարթակի գագաթին տեղադրված եղջերվի գլխին նստած արծիվ⁶¹։ Ուշ գուգահեռներից պետք է հիշատակել նաև Վանիի (Վրաստան) աստիճանաձև գոհասեղանը⁶²։

Միևնույն ժամանակ Միրիկի աշտարակի առավել մոտ գուգահեռները դիտարկվում են իրանական աշխարհում, որտեղ հավաստված են աշտարակների գագաթներին տեղադրված գոհասեղաններ։ Վերջիններս կարող էին ունենալ ավելի վաղ ծագում, քանի որ, պատմիչների վկայությամբ, պարսիկները հավատում էին, որ չի կարելի աստվածներին կողպել շինություններում⁶³։ Այս համատեքստում պետք է հիշատակել Ջելեում (Փոքր Ասիա) Կյուրոսի կառուցած արհեստական հարթակ-տաճարը, ինչպես նաև Քուի-ի-Հաջիի կրակի տաճարը։

⁵⁸ Թեպետ այս կառույցն ունի հատկանիշներ, որոնք այն մոտեցնում են «գիկլուրատաձև» շինություններին՝ աստիճանների և հարթակների համակարգ, աստիճանաձև աշտարակ, կից հարթակ (Սարգսյան և այլք 2022, 58–59), սակայն վերջիններից այն տարբերվում է մի շարք հատկանիշներով. ա. աղյուսաշեն պլատֆորմի, բ. կառուցապատված աղյուսաշեն հարթակների, գ. վերին շինության, հիմքի կանոնավոր հատակագծի բացակայությամբ (մանու. Ллойд 1984, 166)։


⁵⁹ Цонев 2010, 48–50։ Դեպի սրբավայր տանող ճանապարհի հնագույն օրինակներից է Ամիրանիս Գորայի արահետը, որը բնակավայրից տանում էր դեպի սրբազան լեռան գագաթին գտնվող սրբատեղի (Чубинишвили, 1971, 71–73)։ Գտնվում ամրոցանիստ հրվանդանի արևելյան եզրով ընթացող արահետը տանում էր դեպի ժայռային սրբատեղի, որը գտնվում էր հետագայում կառուցված հեթանոսական տաճարից անմիջապես հարավ (Аветисян и др. 2017, 319)։ Աստիճանաձև արահետն ուղղված էր դեպի Արծվաբերդի պաշտամունքային հարթակը (Есаян, 1976, 253)։ Դեպի Շառիի ծխական նշանակություն ունեցող կիկլոպյան ամրոց տանող ճանապարհը սկիզբ էր առնում լեռան ցածր գագաթից և պարուրաձև բարձրանում էր դեպի ամրոց (Нариманишвили 2009, 104–105)։

⁶⁰ Есаян 1976, 233.

⁶¹ Аракелян 1982, 35, таб. XLIV.

⁶² Лордкипанидзе 1989, 296, Лордкипанидзе 1978, 62–63.

⁶³ Бойс 1988, 75.



Գծանկ. 15. Միրիկ 1-ի երկհարկանի ժայռափոր սենյակի խեցեղենը (Չափագրությունը՝ Ա. Դավթյանի)

Հատկանշական է, որ վերջին հուշարձանը գտնվում է լճային լանդշաֆտում⁶⁴։ Կոթողներով աստիճանան հարթակները շարունակում են գոյատևել Իրանում նաև ավելի ուշ ժամանակաշրջանում, ինչպես նաև պատկերված են դրամների վրա⁶⁵։

3. Կոտքերի հարթակը գտնվում է միջնաբերդում, տաճարի բուրգ-աշտարակից դեպի պալատական համալիր տանող ժայռակերտ դարպասների միջև ընկած բաց հատվածի կենտրոնում գտնվող փոքր բլրակին (սկ. 81-82)։ Այստեղ պահպանվել են քարաշեն պատի մեջ վերցված 8-10 շարքով կանգնեցված 0,5-0,7մ բարձրությամբ ցից քարեր։ Քարերի ծայրերը շատ դեպքում կտրված են, բայց մեկի վրա հստակ երևում է կոտք-արձանիկին բնորոշ՝ գլուխն ընդգծող ակոսավոր փորվածքը։ Կոտքի կողքի ցից ժայռակտորի մեջ սանդաճն փորվածք է։

4. Ժայռակերտ դարպասը և նրա թիկունքի երկհարկանի սենյակը գտնվում են տաճարի բուրգ-աշտարակի ու պալատական համալիրի միջնամասում, առաջինից 80մ արևելք՝ պալատական համալիրի կլորացող պարսպագծից ճիշտ նույնքան

արևմուտք։ Ժայռակերտ դարպասը կազմված է երկու դեմ դիմաց, ցից կանգնած բնական ժայռակտորներից, որոնք միջնաբերդի տարածքը հարթեցնելու ընթացքում չեն հանվել, այլ թողնվել են տեղում՝ միջանցիկ մուտք-դարպասի տեսքով։ Միրիկի ժայռակերտ դարպասը կերտվածքով կարելի է համադրել բիլիթոնների հետ⁶⁶։

Վերջինիս թիկունքում կա 10,4×3,5մ չափերով, 175-190սմ խորությամբ, բնական ժայռի մեջ փորված ուղղանկյուն սենյակ։ Ժայռափոր սենյակն ունեցել է երկրորդ հարկ, որի փլատակները փաստվեցին սենյակի լիցքի մեջ։ Այդ սենյակի հարավ-արևմտյան անկյան վերևում՝ հատակի մակարդակից մոտ 2մ բարձրության վրա, բացվեց մի տձև սենյակ։ Այն վերգետնյա է և համապատասխանում է ժայռափոր սենյակի երկրորդ հարկի մակարդակին։ Պատերի ստորին մասը կտրված է բնական ժայռերի մեջ, հատակը հարթեցված ժայռն է։ Մոտ 5,0×3,0մ չափերով վերգետնյա սենյակի պատերը դրված են եղել մեծ, ճեղքած, անմշակ ժայռաքեկորներից, որոնցից տեղում պահպանվել են վեցը։ Ուշագրավ է, որ սենյակի արևմտյան պատը կազմող մեծ ժայռաքեկորի տակ պահպանվել է հատուկ դրված ու տակից քարերով ամրացված կախովի սեղանի պես դեպի սենյակ դուրս ցցված մի տափակ, երկար ժայռաքեկոր։ Մեղանի քարի հարթ ու հորիզոնական մակերեսը բարձր է հատակից 0,65մ, դուրս է ցցվում պատից 0,85մ, լայնությունն է 0,8մ։

Ժայռափոր սենյակը պեղվել է 2017 և 2019 թթ.։ Նրա լիցքի գնությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սենյակը հողով ու քարերով լցվել է ոչ միանվագ, երկրաշարժի կամ մարդկանց կողմից ավերվելու, կործանվելու արդյունքում։ Այն լցվել է ամրոցի լքվելուց հետո, պարբերաբար, վերնի շինությունների ու պատերի բնական փլուզման և հողաշեղթի լվացման արդյունքում։ Պեղված հնագիտական արտեֆակտների ճշող մեծամասնությունը վերաբերում է Ք. ա. VIII-VI դդ., չնայած որ կան նաև ավելի ուշ ժամանակաշրջանների դիպվածային նյութեր։

Միրիկի մեգալիթյան կառույցների թվին պետք է դասել նաև Միրիկ 1 ամրոցից 1,3կմ հարավ-արևելք՝ Միրիկ 3 հուշարձանի տարածքում գտնվող և 2018 թ. պեղված դամբարանը (Գ. Սարգսյան, Հ. Խուդանյան)։ Դամբարանը կողոպտվել է հնում։

⁶⁴ Бойс 1988, 108.

⁶⁵ Girshman 1954, tab. 41, Potts 2004, 272-296.

⁶⁶ Բիլիթոնները և տրիլիթոնները հաճախ մեկնաբանվում են որպես դարպասներ (Марсаполов 2016, 47, Уваров 1878, 260)՝ իրական կամ խորհրդանշական (Harlan 2011, 220-223։ Հայաստանում հմմտ. Մաղախարեղում (Меликсет-Бек 1938, 131)։

Արևելք-արևմուտք ձգվածությամբ թաղման խուցը 0,8×2,7մ չափերով վերգետնյա քարարկով է՝ 1,2մ խորությամբ՝ կառուցված կողքին կանգնեցված մեծ սալերից: Խցի ծածկասալերը բացակայում են: Թաղման խուցն արևելքից ունի նախամուտք՝ դռմոս, որտեղ հայտնաբերվել են ութ ամբողջական կավանոթներ (երեք քրեղան և հինգ կճուճ), ինչպես նաև մանր եղջերավոր կաթնասունների ոսկորներ: Դամբարանախցում ամբողջական իր չկար, փաստագրվեցին միայն ծիսական նշանակության խեցեղենի բեկորներ՝ բնորոշ Ք.ա. VIII–VII դդ., որոնք պատկանում են շուրջ 50 տարբեր կավանոթների:

Այսպիսով, կատարված հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնել, որ Միրիկի ամրոցը բացառիկ տեղ է զբաղեցնում Ք.ա. VII–V դդ. հուշարձանների համակարգում՝ լինելով տարածաշրջանի խոշոր պաշտամունքային և վարչական կենտրոն⁶⁷:

Միրիկ 2 համակառույց (նկ.83–89). Ամրացված բնակատեղին գտնվում է Միրիկ և Հերիկ գյուղերի միջև սփռվող ընդարձակ սարահարթի արևելյան եզրին՝ Միրիկ 1 ամրոցից 1,8 կմ հարավ-արևմուտք⁶⁸: Այն գտնվում է վարելահողերի վերածված երբեմնի արոտավայրերի բաց դաշտի՝ չնչին գոգավորությամբ բարձունքին:

Բնակավայրի տարածքը համեմատաբար բարձրադիր է, բայց բնականից անպաշտպան է ու անջրդի: Բնակատեղին պաշտպանված է հատակագծում էլիպսաձև և միմյանց մեջ ներգծված երկու պարսպապատերով: Ամրակառույցները շարված են միջին ու մեծ անմշակ քարերից, երկերես, չոր շարվածքով:

Բնակավայրի ներսը խիտ կառուցապատված է ընդարձակ ուղղանկյուն ու կլորացող շինություններով, որոնց մեջ նկատվում են նաև փողոցներ ու բնակելի կացարաններ հիշեցնող փոքր սենյակներ: Շինությունների պատերը շարված են միջին չափի քարերից և պահպանվել են մեկ շարի բարձրությամբ: Առանձին շինությունների պատերի մոտ տեղադրված են ցից քարեր:

Միրիկ 2 մեգալիթյան հուշարձաններից պետք է նշել 3–4 խոշոր քարերով շարված սենյակները՝ հատակագծում ուղղանկյուն՝ մոտ 2,5×5,0մ չափերով, ժամանակին կեղծ թաղով ծածկված, կիսագետնափոր կառույցները: Ակնհայտ է, որ սրանք

հնում կողոպտված ու բնակելի կացարանի վերածված մեծ դամբարանների թաղման խցեր են: Բնակատեղիի հյուսիսային մասում երևում է նաև կատակորային թաղում հիշեցնող գետնափոր կիսաբաց խուց:

Ամրացված հյուսիսային կողմում պահպանվել են միաշար պատերով ներփակվող ընդարձակ տարածքներ, հավանաբար՝ փարախներ: Հուշարձանի նախնական թվագրությունը՝ Ք.ա. IV–I հազ., հիմնված է տարածքից հավաքված (բնակատեղիից և, հավանաբար, կողոպտված դամբարաններից) վերգետնյա խեցեղենի վերլուծության վրա: Բնությունից անպաշտպան լինելը, հարթ դաշտի կենտրոնում գտնվելը, պաշտպանական համակարգի համեմատաբար թուլությունը, անպաստ ջրագրությունը ենթադրել են տալիս, որ հուշարձանը եղել է ոչ թե մշտական բնակության վայր, այլ պարբերաբար գործածվող անասնապահական ամառանոց⁶⁹:

Ծիծեռնավանքի համակառույց (նկ.90–97). Ծիծեռնավանքի կիկլոպյան ամրոցը գտնվում է համանուն գյուղից 2,1կմ հարավ-արևմուտք՝ Աղավնոյի հովիտ տանող Խոզնավար և Բայանդուր գետակների ջրբաժանի բարձր բլրին⁷⁰: Ամրոցը զբաղեցնում է բլրի գագաթը և արևահայաց, հարավային ընդարձակ լանջը: Լեռնաբազկի լանջերին և ամրոցանիստ բլրի արևմտյան բարձունքին տարածվում է դամբարանադաշտը: Բլրի գագաթին գտնվել է միջնաբերդը: Ամրոցի պաշտպանված բնակատեղին տարածվում է հարավային թեքադիր լանջին և ունի մոտ 150×150մ չափերով ուղղանկյուն հատակագիծ: Այն բոլոր կողմերից եզերված է պարիսպներով, իսկ ներսում հորիզոնական գնացող երկու հենապատ-պարսպագծերով բաժանվում է երեք արհեստական բնակելի դարավանդների: Դարավանդներում երևում են խիտ կառուցապատումից մնացած պատերի հատվածներ և ուղղանկյուն կացարանների հետքեր: Պատերն ու պարիսպները շարված են անմշակ, ճեղքած քարերից, երկշերտ, չոր շարվածքով և տեղ-տեղ պահպանվել են մինչև 1,5մ բարձրությամբ:

Լեռնաբազկի լանջերին և ամրոցանիստ բլրի արևմտյան բարձունքին տարածվում է դամբարանադաշտը:

⁶⁷ Ավետիսյան և այլք 2019ա, 4–20:

⁶⁸ Սարգսյան և այլք 2022, 68–71:

⁶⁹ Էական Է, Յու. Մկրտումյանի այն դիտարկումը, որ ալպիական անասնապահությունը հայերի մեջ ենթադրում էր մշտական քարե, կամ/և փայտե բնակելի (քոլիկ) և անասունների համար նախատեսված (գառնանոց) շինություններ (Мкртумян 1974, 50, 83):

⁷⁰ Սարգսյան և այլք 2022, 124–129:

Հուշարձանի տարածքում հավաքված վեր-գետնյա խեցեղենը սակավ է, բայց շինտեխնիկան բնորոշ է ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններին:

Ամրոցի արևմտյան պարսպի արտաքին եզրի մոտ՝ ամրոցանիստ բլրի վերնամասում, դեպի դամբարանադաշտ տանող ճանապարհի սկզբնավորման կետում, մեծ, բնական մերկացող ժայռաբեկորի հարթեցված մակերեսին, փորված են միմյանց հետ հաղորդակցվող տարբեր չափերի կլոր փոսորակներ ու առվակներ: Առվակները սկիզբ են առնում ժայռաբեկորի ամենաբարձր կետի հարթակից և, անցնելով բաժակաձև փորվածքների վրայով, իջնում են ներքև: Ձեռակերտ այս կառուցվածքն ակնհայտորեն հնագույն զոհասեղան է:

Աղբաթխերտ ամրոց (նկ. 98–99). Գտնվում է Հակ գյուղից 1,8 կմ հարավ-արևելք, «Տաք ջուր» հանգստավայրից մոտ 0,7 կմ հյուսիս-արևմուտք՝ Աղավն գետի աջ ափին, համանուն տեղամասում⁷¹: Միջնաբերդը մոտ 120 մ տրամագծով կլորավուն թերակղզու վրա է, որն իր ողջ ծավալով հարավից մխրճվում է Աղավնոյի գետագծի մեջ՝ առաջացնելով յուրատեսակ թերակղզի, ուր հնարավոր է ներխուժել միայն հարավից՝ անցնելով մոտ 100 մ լայնությամբ թամբաձև իջվածքը և բարձրանալով ամրոցանիստ բլուրը:

Միջնաբերդը զբաղեցնում է թերակղզու գագաթի՝ մոտ 60 մ տրամագծով հարթ մակերեսը: Այն ամբողջ պարագծով ամրացված է կիկլոպյան շարվածքով պարսպով: Հարավային կողմում երևում է ամրոցի գլխավոր մուտքը: Հարավային կողմի բլրալանջի միջնամասով՝ հիմնական պարսպագծից ներքև, նրան զուգահեռ գնում է ամրոցի երկրորդ պարիսպը, որը ևս ընդհատվում է գլխավոր մուտքի միջանցքով: Միջնաբերդի հյուսիսարևմտյան մասի բարձրադիր հատվածում նկատվում են մի մեծ, առանձնացված կառույցի, հնարավոր է՝ դղյակի, փլատակներ: Այս բազամասենյականոց շինությունը կառուցված է նույն կիկլոպյան շարվածքով և փարթամ խոտածածկույթի մեջ երևում է հատվածաբար:

Միջնաբերդի մակերեսի հարթությունը, ամենայն հավանականությամբ, ձեռակերտ է, քանի որ կենտրոնում կանգնած է մնացել ձեռք չտված մի մեծ, ցից բնական ժայռագանգված: Այն, հնարավոր է, թողնվել է ինչ-որ ծիսական արարողությունների

համար՝ որպես պատվանդան: Ակնհայտ է, որ կենտրոնական տարածքն ընկալվում էր որպես բնակավայրի հրապարակ և արարողակարգային պատվանդանի հետ կազմում էր մի համալիր:

Սև լճի համակառույց (նկ. 100–105). Սյունիքի մարզի և Քաշաթաղի շրջանի սահմանագլխին գտնվող Սև լիճը նույնպես մեգալիթյան համակառույց է⁷²: Այս վայրի ծիսապաշտամունքային նշանակության մասին վկայում են ավանդազրույցները, որտեղ Սև լիճը համարվում է վիշապների բնակավայր⁷³: Այստեղ ևս առկա են լճափնյա շրջանում սփռված բազմաթիվ դամբարաններ. ինչպես քարահողային դամբարանների ներքո ամփոփված, այնպես էլ առանց թմբի կրոմլեխներ: Գ.Իսմաիլովը Սև լճի ավազանում հիշատակում է ժայռապատկերներ⁷⁴: Մեգալիթյան համալիրները ներկայացված են քարակույտ-հարթակներով (վերջիններս, ինչպես և Ալ լճերի քարացրոններում գտնվող քարակույտ-հարթակները, նույնպես կարող էին լինել հնագույն ջրհորներ) կրոմլեխներով և ցից քարերի տեսքով մշակված քարերի ու ժայռային ելուստների շարքով:

Մելիքեն դուռ ամրոց-բնակավայր (նկ. 106–109). Գտնվում է Դաշուշեն գյուղից 1,4 կմ հյուսիս-արևմուտք, Ստեփանակերտ քաղաքի դիմաց, Կարկառ գետի աջ ափին, ԼՂՀ քաղաքաշինության նախարարության մասնաշենքի հանդիպակաց լանջին բարձրացող կոնաձև բլրի վրա: Ամրոցը բաղկացած է միջնաբերդից և արևմտյան կողմում տարածվող բնակելի թաղամասից: Միջնաբերդը զբաղեցնում է մասամբ անտառապատ կոնաձև բլրի վերնամասը, որի արհեստականորեն հարթեցված գագաթին նկատվում է 20×25 մ չափերով ուղղանկյուն շինության պարագծով գնացող պարսպապատի ուրվագիծը: Վերջինիս բնական ավերումը բլրի գագաթի կենտրոնում առաջացրել է կլորավուն, ձագարաձև իջվածք: Միջնաբերդի արևելյան, ոչ անտառապատ լանջին կարելի է տեսնել մեծ, ճեղքած քարերից շարված պարսպապատի պատառիկներ:

Ամրոցն ուղիղ տեսողական կապով հարաբերվում է Կարկառ քաղաքի միջնաբերդի հետ, ինչը ենթադրել է տալիս, որ այն մտել է քաղաքի պաշտպանական համակարգի մեջ՝ դառնալով նրա հյուսիսային մատույցները պաշտպանող ամրացված հենակետ:

Ամրոցի տարածքից հայտնաբերված վերգետ-

⁷¹ Սարգսյան և այլք 2022, 43–47:

⁷² Հետազոտությունը՝ Ա.Բորոխյանի, Գ.Սարգսյանի, Ա.Գնունու, Գ.Խաչատրյանի:

⁷³ Ղանալանյան 1969, 79:

⁷⁴ Фараджева 2009, 194.

նյա խեցեղենը բնորոշ է Ք.ա VII–VI դդ. մինչև վաղ միջնադար ընկած ժամանակահատվածին:

Միջնաբերդի արևմտյան ստորոտի բնակատեղիից դեպի միջնաբերդ բարձրացող լանջին, փոքր ձեռակերտ հրապարակի եզրին գտնվում է գոհասեղանը: Այն մեծ, բնական, ցից ժայռագանգված է՝ արհեստականորեն տաշված երկաստիճան սեղանաձև ելուստի տեսքով, որի զագաթի հարթեցված մակերեսին փորված են երկու կլոր անհավասար փոսորակներ ու առվակներ⁷⁵:

Դաշուշեն դիտակետ-աշտարակ (նկ. 110–111). Դաշուշենից ոչ հեռու՝ Շելի յուրտ տեղամասում, գտնվում է ևս մեկ հուշարձան՝ մեգալիթյան աշտարակը⁷⁶: Այն բնակավայրի նկատմամբ գերիշխող բարձունքի զագաթին է և շրջանաձև հատակագծով, մոտ 5մ տրամագծով կառույց է՝ շարված միջին չափի քարերից չոր շարվածքով:

Կարկառի բնակավայր. Քաղաքատեղիի հեռավորությունը Ստեփանակերտից մոտ 2,5կմ է, կառուցվել է արևելք-արևմուտք ուղղվածությամբ հրվանդանի վրա, որն արևելքից եզերված է Կարկառ գետի խորը ձորով, իսկ արևմուտքից՝ Զարուն բաղի ջուր գետակով: Կարկառի քաղաքատեղիի կենտրոնական թաղամասն ամրացված է. առաջին ամրությունները կառուցվել են դեռևս Ք.ա. VIII–VI դդ.: Հիմնական սրբատեղին՝ տաճարը, կառուցված է կենտրոնական թաղամասի հարավային հատվածում՝ ոչ բարձր բլրակի զագաթին⁷⁷:

Քաղաքի ևս մեկ սրբատեղի գտնվում է Կարկառ քաղաքատեղիի հարավային եզրին՝ դեպի համանուն գետն իջնող լանջի փոքր բնական հարթակին⁷⁸: Սա ծակոտկեն, փոխր ապարից ժայռաբեկոր է՝ մոտ 3մ բարձրությամբ ու 4–5մ երկարությամբ: Այն միայնակ կանգնած է բաց դաշտում: Ժայռաբեկորի վրա մարդու ներգործության հետքեր չեն նկատվում: Բայց դրա դիմաց՝ դեպի ձորը նայող կողմում, պահպանվել են լայնությամբ երկշերտ պատի հետքեր: Պատը ներառում է ժայռաբեկորը բոլոր կողմերից և դիմային մասում ուրվագծում 4×6մ չափերով բաց հարթակ-հրապարակ՝ անմիջապես ժայռաբեկորի տակ: Տարածքը չի պեղվել, վերգետնյա խեցեղեն չի գտնվել: Բնական տեղանքի տարրերի օգտագործումը հազվադեպ չէր Կարկառում: Այսպես, տաճարական կառույցի ներ-

քին բակում ֆալաձև բնական ելուստ-պորտաքար էր, իսկ տաճարական կառույցի կենտրոնական հատվածում մանր քարերով ամրացված երկու անմշակ քարաբեկորներ էին, որոնք, ամենայն հավանականությամբ, ծառայել էին որպես կոտրի կամ հեղման անոթի պատվանդան⁷⁹:

Դատելով պատաշարի կառուցվածքից՝ այն կարելի է վերագրել Կարկառ քաղաքատեղիի երկաթեդարյան ժամանակաշրջանին:

Անդոկաբերդ 2 համակառույց (նկ. 112–113). Անդոկաբերդ 2 ամրացված բնակատեղին գտնվում է համանուն գյուղից 3,1կմ հարավ-արևելք՝ նախկին Թեյմուր-Մուսկանլի գյուղից մոտ 800մ արևմուտք՝ Որոտան-Անդոկաբերդ ճանապարհի աջ կողմում⁸⁰: Բնակավայրը գտնվում է Որոտան գետի կիրճով և ոչ խորը սելավատարով կազմված, արևելք-արևմուտք ձգվածությամբ եռանկյունաձև հարթ հրվանդանին: Այն ընդարձակ հերկվող դաշտի հյուսիսային եզրամասն է և առանձնապես աչքի չի ընկնում ընդգծված ռելիեֆով:

Հրվանդանի բավական հարթ մակերեսի երկու՝ դեպի հյուսիս ու հարավ մեղմ իջնող լանջերի վերին եզրագծերով ձգվում է պաշտպանված բնակավայրի պարսպագիծը: Պարսպը հատակագծում մոտենում է երկարավուն եռանկյունու, որի երկու կողերը հյուսիսային և հարավային եզրապատերն են, իսկ հիմքը՝ հրվանդանը շրջակա դաշտից անջատող, թեթև գոգավորության երկայնքով կառուցված երկու զուգահեռ կրկնապարսպները:

Բնակատեղիի մոտավոր չափերն են՝ 140×50 մ: Պարսպով ներփակված բնակատեղիի ներսում նկատվում են երբեմնի խիտ կառուցապատումից մնացած շինությունների հիմնապատերը: Ելնելով շինտեխնիկայի առանձնահատկություններից՝ հուշարձանը կարելի է վերագրել ուշ երկաթից մինչև ուշ անտիկ դարաշրջանների:

Անդոկաբերդ ամրոցից 1,50կմ հարավ-արևելք և Անդոկաբերդ 2 ամրացված բնակավայրից 380մ անմիջապես հյուսիս, հավանաբար, նույն բնակավայրի դամբարանադաշտն է, որը գտնվում է 375մ երկարությամբ՝ արևելք-արևմուտք ձգվող մի բլրակի զագաթին: Բլրի զագաթը հյուսիսային մասում ողջ երկայնքով ունի պարսպագծի մնացորդ: Համալիրը բավականին վնասված է. հարավում կա-

⁷⁵ Հուշարձանը ուսումնասիրվել է 2014 թ. Լ.Ղ.Հ Ջրոսաշրջության գործակալության արշավախմբի կողմից (Գ. Սարգսյան):

⁷⁶ Հետազոտությունը՝ Գ. Սարգսյանի, Լ. Մկրտչյանի, Ա. Գնունու:

⁷⁷ Саргсян, Гнуни 2015, 108.

⁷⁸ Հետազոտությունները՝ Գ. Սարգսյանի:

⁷⁹ Саргсян, Гнуни 2015, 108.

⁸⁰ Հետազոտությունը՝ Գ. Սարգսյանի, Լ. Մկրտչյանի:

տարվել է մելիորացիա, իսկ հյուսիսային մասում կողք կողքի պահպանվել են դամբարանների և տարբեր շինությունների մնացորդներ:

Արևմուտքից առաջին կառույցը մոտ 10մ տրամագծով քարահողային զրահով դամբանաթումբն է (դամբարան 1): Սրա արևելյան մասում նկատվել է մեծ ու կոպտատաշ քարերի (1,70սմ երկարությամբ) կուտակում, ինչը փաստում է դամբանաթմբի վերգետնյա կառույցի (թերևս դրոմոսի) մասին:

№1 դամբարանին արևելքից անմիջապես հաջորդում է արևելք-արևմուտք ուղղվածությամբ, 14,57մ երկարությամբ և 7մ լայնությամբ անհավասար ուղղանկյուն մի կառույց, որի հյուսիսային նիստը, չհասնելով արևելյանին, կլորանում է դեպի ներս՝ հավանաբար դառնալով մուտք:

Արևելյան հատվածում այս կառույցին կից են բլուրը պարագծող պարսպաշարից սկսվող, 10մ լայնությամբ և 18,8մ երկարությամբ, փոքր-ինչ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք շեղվածությամբ ինչ-որ կառույցի հիմքեր, որի պատերը ներսի հատվածի անկյուններում կլորանում են՝ կազմված լինելով երկշար և երկայնակի դրված քարերից: Այս շինության հարավարևմտյան անկյանը նույն շեղվածությամբ հպված են մեկ այլ քառակուսի կառույցի հիմքեր, որը ներսի հատվածում միջնորմով բաժանվում է երկու անհավասար մասի⁸¹:

Շինության ամենափոքր հատվածը (3,38×10մ) նույնպես իր հերթին ջլատվում է և հյուսիսարևելյան անկյունում ստանում 3մ տրամագծով բլորավուն հատված՝ շնորհիվ կլորացող անկյունների: Սրանցից մոտ 20մ արևելք՝ կրկին պարսպագծից, սկսվում է հաջորդ շինության մնացորդը՝ 10×14մ չափերով: Սրա հարավարևելյան անկյանը հպված է 6×11մ չափերով մեկ այլ կառույցի մնացորդ: Մոտ 66մ արևելք ևս նմանատիպ կառույցների հետքեր

կան: Տեղ-տեղ նկատվում են փոքրիկ դամբարաններ՝ գուրկ վերգետնյա քարաշարերից⁸²:

«Վիշկի» ամրոց (նկ. 114–115). Գտնվում է Շուշիից 3կմ հյուսիս, Ստեփանակերտ-Շուշի ավտոճանապարհի աջ կողմում բարձրացող երկու բլուրների վրա, որտեղ գտնվող ռադիոհաղորդման աշտարակների պատճառով տեղացիները այն «Վիշկի» են անվանում⁸³: Չորակի հակառակ կողմում է Կարկառ հնագույն քաղաքատեղին: Բարձր բլրի գագաթին կանգնած է մոտ 10,0×8,0մ չափերով, անկանոն բազմանկյունի հատակագծով աշտարակը՝ շարված ճեղքած խոշոր քարերից կիկլոպյան շարվածքով: Կիկլոպյան պատերը, որոնց պահպանված բարձրությունը չի գերազանցում 1մ, տեղ-տեղ ընդհատվելով ռադիոհաղորդման աշտարակի հիմքերով, ներփակում են բլրի արհեստականորեն հարթեցված գագաթի ոչ մեծ տարածքը՝ կազմելով ամրոցի հնագույն միջնաբերդը: Բուն ամրոցի շրջապարիսպն ընկած է միջնաբերդից 10–12մ ներքև, շարված է զգալիորեն ավելի փոքր չափի քարերով և մեծ ընդհատումներով ներառում է միջնաբերդն ու հարակից բլուրը մի ընդհանուր պաշտպանված գոտում: Ներսի տարածքում շինությունների հետքեր գրեթե չեն նկատվում:

Ակնհայտ է, որ այստեղ գործ ունենք տարածամանակյա մի հուշարձանի հետ, որը սկզբնավորվում է բրոնզ-երկաթեդարյան Կարկառ քաղաքատեղիի պաշտպանական համակարգի դիտակետ-աշտարակով: Ավելի ուշ՝ միջնադարում, աշտարակատիպ կառույցի շուրջը կազմակերպվում է ոչ մեծ պահակային ամրոց:

Ամրոցի մշակութային շերտը լվացված ու հողմահարված է, բայց հայտնաբերված սակավաթիվ խեցեղեն նմուշները կարելի է վերագրել երկաթի դարին և վաղ ու զարգացած միջնադարին:

⁸¹ Ուղղանկյուն կառույցների՝ կվադրալիթների մասին տես Բեշտաշենի (Жоржикашвили, Гогодзе 1974, 21–22) և Թբիլիսի (Тбилиси I 1979, 18) համատեքստում: Օ. Ուորմը նկարագրում է դոլմենանիստ բլուրը պարփակող բավիղան շրջապարիսպ (Worm 1643, 28):

⁸² Հմմտ. Բեգազինի դամբարանադաշտի (Կենտրոնական Ղազախստան) ուղղանկյուն սալային ցանկապատերը՝ սալային անցումներով (Кызласов, Маргулан 1950, 126–136):

⁸³ Հետազոտությունը՝ Գ. Սարգսյանի:

Աղ. 7. Մեզայիթյան հուշարձանները բազմաֆունկցիոնալ համալիրներում

Հուշարձանի անունը	Մեզայիթների տիպը				Բնակավայրային համատեքստ	Տեսեսական համատեքստ	Ծիսապաշտամունքային համատեքստ	Բնաաշխարհագրական համատեքստ
	Դասական մեզայիթ	Դարա մեզայիթ	Կվադրմեզայիթ	Բնական մեզայիթ				
Ալ լճի	Վիշապ քարակոթող Մարտակերպ ցից քար Քարային հարթակ Կրոմլեխ-հարթակ	Ժայռային հարթակ	Պատ		Ձվաձիթ բերդ, Ծաղի ամրոց	Փարայիններ	Դամբարանադաշտեր, Ժայռապատկերներ	Ալ լճի Քարագրոմներ Արվա գ. ակունք
Այլախ	Ցից քարերի կրոմլեխ- շրջապարիսպ, վիշապ քարակոթող					Ամրացված փարայիններ	Դամբարանադաշտեր Ժայռապատկերներ	Այլախի լիճ
Խոզնավարի լիճ	Քարակույտ-հարթակներ Վիշապ քարակոթող				Խոզնավարի լիճ ամրոց	Անսամբլարայիններ ամրոցում	Դամբարանադաշտ	Խոզնավարի լիճ
Ալի Բայրամլի			Համակենտրոն շրջաններով շինություն		Բնակատեղի		Ժայռապատկերներ	Ալայան մարգագետիններ, Տրոսի և Դարաարաջի վերահոսանք
Միրիկ 1	Բուրգ-աշտարակ Դամբարան		Արտոդոպարգերի ճանապարհ		Բնակատեղի, ամրոց, որյակ	«ցանկապատ»	Դամբարանադաշտ Կուրբերի հրապարակ	Միրիկ գետի ավազան
Միրիկ 2	Ցից քարեր				Ամրացված բնակատեղի	Անսամբլարայիններ բնակատեղիում		Ալախական մարգագետիններ
Միրիկ 4		Ժայռաքանդակ				Ամրացված անսամբլարայիններ		Ալախական մարգագետիններ
Ախթաթներտ				Բնական ցից քար կենտրոնում	Ամրոց, որյակ և բնակատեղի			Աղավալ գետի ոլորանի թերակղզի
Ծիծեռնավանք			Ժայռափոր հարթակ		Ամրոց		Դամբարանադաշտ	
Սև լիճ	Քարակույտ-հարթակ Ցից քարերի շարք						Դամբարանադաշտ	Սև լիճ
Մեկիքեն դուռ		Ժայռաքերտո- գրհանդակ			Բնակատեղի			
Ծեփ յուրտ	Կիկոյայան աշտարակ				Բնակատեղի Կարկառ քարաքատեղիի դիմացի բլրին			
Կարկառ			Ցանկապատկած Ժայռաքերտո		Բնակավայր		Տաճարական կառույց	Կարկառ գետ
Անրոկաքերտ -2	Մեզայիթյան շինություններ		Դարսպաշտ		Բնակավայր		Դամբարանադաշտ	Որոտանի կիրճ
«Վիշկի»			Աշտարակ		Ամրոց			Բլրի գագաթ

ԳԼՈՒԽ IV

ՄԵԳԱԼԻԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ

Մեգալիթյան հուշարձաններ հանդիպում են կոնկրետ գործառույթ ունեցող համալիրներում՝ դամբարանադաշտերում (դամբարանային խմբերում, թաղման համալիրներում), սրբատեղիներում, պրոֆան համալիրներին կից միջավայրերում: Դրանց տարածական և գործառույթային տարրերը հաճախ համընկնում են:

Մեգալիթները դամբարանային խմբերում.

Յուրաքանչյուր դամբարանադաշտ, փաստորեն, իրական տարածության մեջ գոյատևող վերացական սրբազան գոտու մի կոզյակ է¹: Երևակայական աշխարհի այս նյութական արտացոլումն ունի երեք փոխկապակցված մակարդակ՝ բուն թաղման հուշարձանները, թաղման համալիրները (վերդամբարանային և արտադամբարանային, սակայն կոնկրետ դամբարանի հետ կապակցված կառույցներն ու համալիրները) և թաղման խմբերը (դամբարանադաշտերն ու դրանց բաղադրատարրերը)²: Այս առումով կարևոր է դամբարանի սահմանի ընկալումը՝ որպես աշխարհների սահմանագոտի: Այն կարող է ընդգծվել ինչպես տեղանքի առանձնահատկություններով, այնպես էլ ցանկապատեր և պարիսպներ կառուցելով: Մյուս կարևոր խնդիրը դամբարանադաշտի միջուկի ձևավորումն է: Միջուկը յուրատեսակ առանցք է, որի շուրջը կազմավորվում է սրբագործված տարածքը: Այսպիսի կենտրոնի դեր կարող էին խաղալ բնական տեղանքի տարրերը, օրինակ՝ քարանձավը կամ ժայռը: Այլ դեպքերում այդպիսի միջուկի նշանակություն ունի զոհարանը, պաշտամունքային շինությունը կամ որևէ երևելի անձի դամբարանը: Միևնույն ժամանակ, հասարակության զարգացմանը զուգընթաց, դամբարանադաշտերում ձևավորվում են յու-

րատեսակ ենթակենտրոններ, որոնց շուրջը խմբավորվում են առանձին դամբարաններ: Որպես տվյալ բնակավայրի արտապատկեր՝ դամբարանադաշտը ընկալվում էր իբրև միասնական մի համակառույց: Հետևաբար դամբարանադաշտի տրամաբանական բաղադրատարրեր կարող են լինել կոնկրետ դամբարանների հետ առնչություն չունեցող զոհասեղանները, ինչպես նաև առանձին դամբարանները կամ դամբարանների խմբերը կապող ծիսական ճանապարհներն ու արահետները³: Կարևոր է հաշվի առնել բնական միջավայրը, քանի որ դամբարանադաշտը, ինչպես ցանկացած սրբագործված տարածք, գոյատևում է կոնկրետ միջավայրում՝ հարմարվելով կոնկրետ տեղանքին⁴:

Բերդիկ (նկ. 116–122). Բերդիկի դամբարանադաշտը գտնվում է Քաջաթաղի շրջանի Բերդիկ գյուղից 2 կմ արևմուտք՝ Բերդիկ–Հակ հիմնական ավտոճանապարհի և նրա հարավից 200–230 մ հեռավորությամբ զուգահեռ գնացող երկրորդական նեղ գրունտային ճանապարհների միջնամասի հարթ և բաց տեղանքում: Երկրորդական ճանապարհն անցնում է փոքր սելավատարի հարավային եզրով և միանում հիմնական ուղուն: Սելավատարի հյուսիսային կողմից Բերդիկ–Հակ ավտոճանապարհի և սելավատարի միջև առաջացած մոտ 1,5 կմ երկարությամբ և մոտ 150 մ լայնությամբ երկարավուն բաց դաշտը, դատելով վերգետնյա խեցեղենից, ամբողջովին բրոնզ-երկաթեդարյան հնավայր է: Այստեղ՝ սելավատարի եզրին, պահպանվել են կիկլոպյան շարվածքով պարսպապատեր, բազմաթիվ պատերի հատվածներ⁵:

Դամբարանների խումբը բաղկացած է 10–15 մեծ, մինչև 1,5–2,0 մ բարձրությամբ քարահողային

¹ Элиаде 1994, 20.

² Ольховский 1996, 65–76.

³ Ավետիսյան և այլք 2017, 165–167:

⁴ Ավետիսյան և այլք 2015, 26:

⁵ Հմմտ. Շահումյան-Նորակերտ երկրորդ դամբարանադաշտը, որը հյուսիսային կողմից սահմանագատված էր երկշար պարսպով (Ավետիսյան և այլք 2017, 164):

լիցքով, միմյանց հետ քարե ցանկապատերով կապվող դամբանաբլուրներից⁶, ինչպես նաև բազմաթիվ փոքր կրտմեխներով թաղումներից:

Այս հնավայրի հյուսիսարևմտյան վերջավորությունում՝ հերկված արտերի եզրին, գտնվում է սրբավայր համակառույցը՝ բաղկացած կենտրոնական հրապարակից, արահետներից և սրբացված աղբյուրից:

Համակառույցի կենտրոնական առանցքը բուն սրբավայրն է, որը գտնվում է պարսպապատ բլրակի հարթ կտրված գագաթին և ունի բաց հրապարակի տեսք: Այն տեղանքի նկատմամբ 3,0–3,5մ բարձրացող, 20–25մ տրամագծով կլոր, տափակ հարթակով բլրակ է, որի մակերեսի եզրագծով նկատվում են երբեմնի քարե պատաշարի հետքեր: Հրապարակի անսովոր հարթ, կտրված մակերեսը ակնհայտորեն ձեռակերտ է:

Բլրակի հարավային կողմից դեպի գագաթի հարթակ է բարձրանում երկու կողմերից մեծ, անմշակ բնակտոր քարերով եզերվող, վատ պահպանված թեքաղիք ճանապարհ-միջանցք⁷: Բլրակի հարթակ-հրապարակ տանող միջանցքը ներքևում սկիզբ է առնում սեղավատարի վերին եզրից: Այս կետում սեղավատարը կտրուկ խորանում է՝ ստեղծելով մոտ 2մ խորությամբ և 5–8մ լայնությամբ բնական ժայռափոր խորշ: Տեղանքի մորֆոլոգիան հուշում է, որ այստեղ ժամանակին աղբյուր է բխել:

Հրապարակի շրջակա դաշտը բազմիցս հերկվել ու վերափոխվել է. այստեղ կատարվել են քարահավաքումներ և տեղադրվել են բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի հենասյուներ: Բայց և այնպես պահպանվել են հնագույն կառուցվածքների մնացորդներ, որոնցով հնարավոր է մասնակի վերականգնել երբեմնի սրբազան լանդշաֆտը՝ որոշակի մանրամասներով: Այսպես, հերկված դաշտից, հարթակ-հրապարակի հյուսիսարևմտյան կողմից դեպի սեղավատարի աղբյուր է իջնում կողային պատաշարերով ներփակվող, մոտ 170մ երկարությամբ պահպանված երկարաձիգ ճանապարհ: Ուշագրավ է դրա կառուցվածքն ու հետագիծը:

Ճանապարհի արտաքին լայնությունը 5մ է, որից հարթ երթևեկելի մասը 3մ է, մեկական մետր

լայնություն ունեն երկու կողային եզրապատեր: Վերջիններս միաշար են, կազմված կողքի վրա կանգնեցված մինչև 0,3–0,4մ բարձրությամբ չոր շարվածքով սալերից: Պատերի երկշերտ սալերի միջնամասի՝ 0,3–0,4մ լայնությամբ տարածքը բաց է և մասամբ լցվել է մանր քարահողային լիցքով: Եզրապատերի երկու կողմերում շինաքարերի փլվածքներ չկան, այսինքն՝ ճանապարհի կողային պատաշարերի քարաշեն մասի բարձրությունը եղել է հենց այնքան, որքան և այսօր է՝⁸: Ակնհայտ է, որ սա սովորական անցուղի չէ և, ըստ ամենայնի, գործ ունենք ծիսական՝ արարողակարգային ճանապարհի հետ⁹:

Հատկանշական է նաև ճանապարհի հետագիծը: Համեմատաբար անխաթար պահպանված հատվածում ճանապարհը, հյուսիս-արևմուտքից մոտենալով սրբարանի հարթակի բլրակին, անցնում է երկու՝ հնում կողոպտված դամբանաբլուրների քարահողային լիցքի վրայով: Այն իրողությունը, որ արարողակարգային ճանապարհի հարթ հետագիծն ընդհատվում է դամբանաբլուրների լիցքի վրա բարձրանալու և իջնելու անհրաժեշտությամբ, ենթադրել է տալիս, որ այս հետագիծը պատահական չէ ընտրված:

Անցնելով երկու դամբանաբլուրների վրայով՝ ճանապարհը երկատվում է և երկրորդ թևով արևելքից ներփակելով սրբավայրի բլրակը՝ իջնում է դեպի սեղավատարի ձորակը: Ստացվում է այնպես, որ բլրակի սրբավայրի հրապարակը երեք կողմերից փակված է արարողակարգային ճանապարհներով, իսկ հարավային կողմով բացվում է սեղավատարի վրա՝ շեշտադրելով այստեղի աղբյուրի սուրբ լինելու հանգամանքը: Ճիշտ է, կենտրոնական ճանապարհը ոչ բոլոր կետերում է լրիվ պահպանվել, բայց նկատվում է, որ այն այլ մուտք ու ելք չունի:


Երկաթի դարից մեզ հայտնի են բազմաթիվ պաշտվող սրբազան աղբյուրներ, արարողակարգային ճանապարհներ, նախնայաց պաշտամունքը մարմնավորող դամբարաններ, բարձրադիր կետերում գտնվող սրբազան հարթակ-հրապարակների տեսքով սրբարաններ: Սակայն այստեղ նրանք ի

⁶ Նմանատիպ կցակառույցների համար հմնտ. Լոռի բերդի №71–72, 88–89 դամբարանները (Դևեջյան 2006, 73–74, 80):

⁷ Այս առումով՝ ուշադրության է արժանի Խանկարի այսպես կոչված թիվ 36 «պաշտամունքային դամբանաբլուրը»: Այստեղ՝ բլրի գագաթին, տեղադրված էին և քարաբեկորների շարքեր, և քարե շրջաններ: Յա. Գումելի ենթադրությամբ՝ բլրի վրա եղել է բրոնզի դարաշրջանի ինչ-որ խոշոր կառույց (Гуммель 1940, 75, 77, 103–105): Բլրի գագաթին մենհիրների շարք կա նաև Աբխազիայի Գուդաուտայի շրջ. Օտխարա բնակավայրի դոլմենային դաշտում (Цвинария 1980, 29–30):

⁸ Նշված հատկանիշները չեն բացառում, որ արահետը երկու կողմից ամրացված էր գերաններով՝ կազմելով ցցապատային հատված: Հմնտ. խեթական պատկերացումներում ծառերն անդրաշխարհում, ծառը և ջրի աղբյուրը՝ որպես աշխարհների կապող հանգույց (Арджинба 2015, 214, 218):

⁹ Խեթական թաղման ծեսում ճանապարհի նշանակության մասին տես Маккуин 1983, 132:



Գծանկ. 16. Իվանյանի դամբարանադաշտի Է. Ռոյսյանի նախագիծը
(Երևանի պետական համալսարանի թանգարանի արխիվ)

հայտ են գալիս միասին, համակարգված, որպես մեկ ընդհանուր համալիր¹⁰:

Իվանյան (նկ. 123–127, գծանկ. 16–17). Իվանյանի (նախկին Խոջալու) դամբարանադաշտն Արցախի առավել հայտնի հուշարձաններից է: Դամբարանադաշտի հնագիտական ուսումնասիրությունը սկիզբ է առել դեռևս XIX դ. վերջերից՝ Է. Ռոյսյանի կողմից: Դամբարանադաշտը գտնվել է Կարկառ, Խոջալու և Իլիսու գետերի միջագետքում՝ զբաղեցնելով մինչև 1 քառ. վերստ մակերես¹¹:

Պեղումները թույլ տվեցին հեղինակին տիպաբանել դամբարանները՝ առանձնացնելով գետաքարերից կառուցված աշտարակաձև դամբարանները, քարային լիցքով, վերին հատվածում ավազով ծածկված մեծ դամբարանները, քարահողային լիցքով դամբարանները և առանց խցի դամբարանները¹²:

Թեպետ հետագա տարիներին հուշարձանը

բազմիցս հետազոտվել է տարբեր մասնագետների կողմից, սակայն մինչև 1960–70 թթ. Կ. Քուշնարյովայի հետազոտությունները, Է. Ռոյսյանի պեղումները դամբարանադաշտի ուսումնասիրության համար հիմնական աղբյուր էին¹³:

Այժմ պարզ է, որ Իվանյանի դամբարանադաշտը հսկայական համակարգի մի մասն է, որը սփռված է ներկայիս Ասկերանի շրջանի Իվանյան, Հովսեփավան, Նորագյուղ (այստեղ ևս կան մենհիրներ¹⁴), Աստղաշեն գյուղերի տարածքում և անցնում է Կարկառ գետի աջ ափ՝ Բերքաձոր գյուղի մոտ: Մեշանինովը դամբարանադաշտը ուսումնասիրել է 1920-ական թթ. և Խաչաթեփե դամբարանաբլուրի մոտ երկու մեծ մենհիր է նշում: Այս մենհիրներն, ըստ Քուշնարյովայի, հիշեցնում են Մոխրաբլուրի կոթողը¹⁵, հետևաբար չի կարելի բացառել, որ այն ավելի վաղ են կանգնեցրել: Նշված մենհիրներից մեկն այսօր էլ կարելի է տեսնել դամ-

¹⁰ Շյուդալովորդո ճանապարհների համակարգ կա Հայթաղում (Ավետիսյան և այլք 2017, 169), Բեդենիում (Գոբեճիշիլի 1981, 8):


¹¹ Ресслер 1896, 18, Ресслер 1897, 50–51, Ивановский 1911, 149–151, ККМ 1902, 114–117, Բաբայեան 1896, 88: ԵՊՀ թանգարանում պահվող, հավանաբար Ռոյսյանի ձեռքով գծած հատակագծի վրա հստակ երևում է, որ հնավայրի բնական տարածքը ձևավորվել է Կարկառ և Խոջալու գետերի միախառնումից առաջացած հրվանդանում: Պեղումների պահին երևացող դամբարանների մեծ մասը կենտրոնացած էր հնագիտական շրջանի միջամասում՝ Շուշիի ճանապարհից արևմուտք: Հմմտ. Джафаров 1985, 418:

¹² Բաբայեան 1896, 88:

¹³ Кушнарева 1970, 109–110.

¹⁴ Кушнарева 1977, 48.

¹⁵ Кушнарева 1977, 48.



Գծանկ. 17. Իվանյանի դամբարանադաշտի տեղահանությունը
(Հախագրությունը՝ Գ. Սարգսյանի)

բարանադաշտում՝ ընկած ու մասնատված վիճակում¹⁶:

Է. Ռյուպերի քարտեզի վրա (գծանկ. 16) նշված է բնակավայր՝ Կարկառ գետի ձախ ափին՝ ընդարձակ դուխոբորական գերեզմանոցի հիմնական գերեզմանախմբից արևմուտք և հիմնական հուշարձանախմբից հյուսիս: Կ. Քուշնարյովան այն ներկայացնում է որպես մի ընդարձակ համալիր, որը սկիզբ է առնում մեծ մենհիրներից: Այս բացառիկ հուշարձանն այսօր կարելի է տեղայնացնել Ստեփանակերտի օդանավակայանի հյուսիսարևմտյան սահմանի մոտ, ցանկապատից ընդամենը 60մ հեռավորության վրա: Դ. Ջաֆարովան այն նկարագրում է իբրև ձգված, բարդ, բավիղաձև մի կառույց, որը զբաղեցնում է 9 հա տարածք: Այս հսկայական շինության մուտքը հարավ-արևմուտքից է, ունի միջանցքի տեսք՝ 45մ երկարությամբ և 6մ լայնությամբ: Արտաքին կողմից դեպի ներս են ընթանում առանձին պատաշարեր, որոնք կազմում են տարատեսակ բեկյալ կոնֆիգուրացիաներ (այստեղից էլ բավիղ՝ լաբիրինթոս անվանումը), իսկ կենտրոնում անկանոն էլիպսի ձև ունեցող ցանկապատ է: Փարե ցանկապատեր կան նաև հիմնական կառույցից դուրս:

Դրանցից մեկը ձգվում է կառույցի հյուսիսային պատին զուգահեռ՝ զատվելով խանդակով և ոլորաններով, շրջանցելով քառակուսի մի բարձունք, որը նույնպես եզերված է քարերով՝ հասնելով մինչև Խոջալի գետի աջ ափ: Որոշ վայրերում դիտվում են մենհիրներ¹⁷:

Ճարտարապետական հիշյալ մանրամասներն այսօր տեսանելի չեն, քանի որ տասնամյակների ընթացքում տնտեսական գործունեության հետևանքով հուշարձանախմբի տարածքը մեծապես խաթարվել է¹⁸: Հուշարձանը կարելի է բնորոշել որպես ուղղանկյուն մի շինություն, որը ձգված է հյուսիս-հարավ առանցքով: Պատը կառուցված է անմշակ գլաքարերից՝ կիկլոպյան շարվածքի եղանակով: Պատի լայնությունը տարբեր հատվածներում կազմում է 1,5–3 մ, իսկ պահպանված բարձրությունը երբեմն հասնում է 1,5մ: Պատաշարի ընդհանուր երկարությունը կազմում է 1044մ: Շինության մոտավոր չափերը 270x240մ է, իսկ ներկայում զբաղեցրած տարածքը՝ 6,7հա: Համալիրի հյուսիսարևմտյան պատի մոտ առկա են մի քանի ավերված դամբարանաբլուրներ, որտեղից գտնվեցին ուշ բրոնզին բնորոշ խեցեղենի առանձին նմուշներ: Հիմնա-

¹⁶ Դամբարանադաշտը հետազոտվել է նաև 2021 թ. ՀԱԻ և ԵՊՀ արշավախմբի կողմից (Գ. Սարգսյան, Լ. Մկրտչյան, Ա. Գևորգյան):

¹⁷ Джафарова 2016, 48.

¹⁸ Джафаров 2016, 38.

կան պատին արտաքին կողմից կցված են մի քանի պատեր:

Այս շինության գործառույթի վերաբերյալ գոյություն ունի մի քանի տեսակետ: Այսպես, Կ.Քուշնարյովան ենթադրում էր շինության ծիսական բնույթը, Բ.Պիոտրովսկին և Ա.Իեսենը չէին բացառում, որ այն անասնափարախ է եղել: Գ. Ջաֆարովը գտնում է, որ սա ամրացված բնակավայր է՝ նախաքաղաքային բնակավայրերի յուրատեսակ նախատիպ¹⁹: Մյուս կողմից՝ այն փաստը, որ պարսպապատերը սերտորեն կապված են թաղման կառույցների հետ, հուշում է, որ ծիսապաշտամունքային գործառույթի տեսակետն առավել հավանական է: Հնարավոր է, որ այս տարածքը պարփակում էր դամբարանադաշտի որոշ հատվածը²⁰:

Այսպիսով, Իվանյանի դամբարանադաշտի մի շարք հուշարձաններ կարելի է դասել մեգալիթների թվին: Մասնավորապես, դասական մեգալիթների մեջ պետք է ներառել մենհիրները, անդրդամբանային դոլմենատիպ կառույցները, կվադիմեգալիթների մեջ՝ այսպես կոչված լաբիրինթոսը: Գրականության մեջ հիշատակվող մի շարք հուշարձաններ (աշտարակատիպ դամբաններ, քարակույտ լիցքեր) ևս կարող են համարվել մեգալիթյան²¹:

Իվանյանի դամբարանադաշտի մեգալիթյան կառույցների մեջ պետք է հիշատակել նաև Աստղաշեն գյուղից ոչ հեռու գտնվող դոլմենատիպ կառույցը (սկ. 124–126): Այն հողային լիցքով, քարային զրահով երկու դամբարանների միջնամասում է: Ս.Տեր-Ավետիսյանը նշում է, որ քարակոթողներ կան նաև Խաչենի հովտի այլ դամբարանադաշտերում Արջաձորում և Վանք գյուղից հյուսիս գտնվող Մեծ Լինջին վայրում²²:

«**Կռապաշտի տներ**» (սկ. 128–143, գծանկ. 18–19). Այս հուշարձանախումբը գտնվում է Քաշաթաղի շրջանի Վանոցա (նախկ. Ներքին Ջիջիմլի) գյուղի հարավային եզրին, Գորիսի տարածաշրջանի Կոռնիձոր գյուղից 3 կմ հարավ-արևմուտք, գյուղի ձո-

րամիջյան այգիների մոտ, Կոռնիձոր գետակի ձախ ափի ընդարձակ հարթակի արևմտյան վերջավորությունում: Հնում մշակութային տարածքն, ամենայն հավանականությամբ, ավելի մեծ էր և ավելի է խորհրդային տարիներին գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ: Նշված հարթակը արևմուտքից սահմանազատվում է Կոռնիձոր գետակի խորը կիրճով, իսկ արևելքից՝ բլրաշարքով: Համալիրից հյուսիս աղբյուր է²³: Այստեղ, հյուսիս-հարավ առանցքով, 100 մ երկարությամբ հաջորդաբար դասավորված են քարակույտ սենյակների (դոլմենների) նմանվող 7 ուղղանկյուն խցեր՝ կառուցված ահռելի անմշակ քարերից չոր շարվածքով:

Կառույցներից երկուսը կիսագետնափոր են, մնացյալը՝ վերգետնյա: № 1 և № 2 կառույցները դրված են արհեստական հարթակի վրա²⁴: Եվ մեկ շինություն (№ 3 դամբարանը) իր երկար ու նեղ համամասնություններով արտաքնապես հիշեցնում է միջանցքատիպ դամբարաններ²⁵:

Դամբարաններն օղակված են կրոմլեխներով: Երևում են երկրորդ դամբարանի 7 մ տրամագծով հզոր կրոմլեխի մասերը, կրոմլեխով է օղակված նաև № 3 դամբարանախումբը: Հարակից № 4 և № 5 դամբարանների կիսավեր խցերի շուրջը երևում են բաց կրոմլեխներ: № 6 և № 7 շինություններն օղակված են միասնական կրոմլեխով: Դամբարանների շուրջը բաց բակ է՝ մասամբ կամ ամբողջովին լցունված քարերով²⁶:

Դամբարանները ամփոփված են եղել քարային լիցքով բարձր դամբանների ներքո, թեպետ այսօր դամբանն ամբողջովին պահպանվել է միայն № 6 և № 7 շինություններում (սկ. 135–136, գծանկ. 19): Բացառված չէ, որ որոշ շինություններ ծածկված լինեին դամբանով ոչ ամբողջությամբ²⁷:

Դամբարանները կառուցված են տափակ դրված հսկայական քարաբեկորներից²⁸: Ուշագրավ են № 6 և № 7 շինությունների մեկ ընդհանուր կրոմլեխի մեջ վերցված ու լավ պահպանված խցերը:

¹⁹ Джафаров 2021, 70.

²⁰ Հմմտ. Այգեշատը (Թորամանյան 1942, 8), խեթական դամբարանադաշտերը (Բլդիջ), որտեղ դամբարանների շարքերը զատվում էին մեգալիթյան հուշարձաններով (Маккуин 1983, 135):

²¹ Բաբայեան 1896, 88:

²² Տեր-Ավետիսյան 2010, 182:

²³ Ջրի աղբյուրի մասին տե՛ս նաև Сизов 1889, 170: Այս առնչությամբ ուշադրության է արժանի Ս. Տեր-Ավետիսյանի տեղեկությունը Տրտուի ավազանում, Հաթերքից ոչ հեռու, Կճողուտի մոտ գտնվող այսպես կոչված Ցորտ աղբրի քարի մասին, որի անմիջական հարևանությամբ աղբյուր էր հոսում (Տեր-Ավետիսյան 2010, 182):

²⁴ Worm 1643, 28.

²⁵ Հմմտ. O’Nualain 1979, 8, 10–11, Брей, Трамп 1990, 119:

²⁶ Հմմտ. Ջուրայի դոլմենները՝ Գելենջիկից ոչ հեռու (Trifonov 2013, 323–325):

²⁷ Հմմտ. Դոլմենների տիպաբանությունն ըստ Ֆելիցինի (Фелицын 1904, 83–85):

²⁸ Հմմտ. դոլմենների ուղղաձիգ դրված քարերը (սալային դոլմեններ), կամ երկու պատերը քարաբեկորներով կառուցված շինությունները՝ բաղադրյալ դոլմեններ (Марковин 1994, 229), օր՝ Խոջաբաղերի № 5 դամբարանը (Թորամանյան 2003, 14–15):



Գծանկ. 18. «Կոտայատի տներ» հուշարձանախմբի դոլմենների հանույթը և հատակագիծը. հորիզոնականները՝ 1 մ (հանույթը՝ Գ. Սարգսյանի, Ա. Դավթյանի)

Դրանք դրված են հաջորդաբար, արևելք-արևմուտք երկայնական առանցքով, թեքադիր տեղանքի բարձրության տարբեր նիշերին և, ըստ ամենայնի, ունեն ժամանակագրական որոշակի շեղում: Խցի երկարությունը 6 մ է, լայնությունը՝ 2,6 մ, իսկ ահռելի քարերից դրված պատերը թեքությամբ բարձրանում ու փակվում են կեղծ թաղով, 1,9 մ բարձրության վրա²⁹:

Ծածկն արված է կեղծ թաղի ձևով: Բոլոր դամբարաններում մուտքը յուրովի ձևավորված է: Այսպես, № 2 դամբարանի մուտքն ունի եռանկյունի

բարավորի տեսք³⁰: 7-րդ, ամենամեծ կառույցն ունի դեպի դամբարանախուցը եկող ճանապարհ՝ դրոմոս և հստակ կազմակերպված շքամուտք՝ նախասենյակով:


№ 3 կառույցի արևմուտքից հյուսիս-հարավ առանցքով ձգվում է մենհիրների շարք³¹, որտեղ կենտրոնական դիրք է զբաղեցնում այժմ զգետնված գլանաձև մենհիրը (նկ. 137–141): Այն մենհիր-ֆալոս անցումային ձևին է պատկանում, վերնամասում առկա է փոսիկ³²: Մենհիրների շարքը պատկանում էր համալիրների այն տիպին, որտեղ խոշորագույն

²⁹ Հմմտ. կրկնակի դոլմենները (Фелицын 1904, 83):

³⁰ Հմմտ. սլաքաձև կամարի տեսք ունեցող բարավորը Կայծոն բերդի, Գավառի և Գամրլիս Ծղարոյի ծխական հարթավանդի մոդելներում (Есаян 1980, 58, таб 59 (2,3), Брилева 2011, 17):

³¹ Մենհիրների շարքերի և դոլմենի համադրության մասին հմմտ. Magno 1558, 22: Արխագիայի Օսիսարա գյուղի դոլմենների դաշտում ևս մենհիրները հավում են քարային լիցքի վրա կանգնեցված դոլմենային կառույցի կրողելիսին (Ивунария 1980, 29–30):

³² Ֆալոս-մենհիր անցումային հուշարձանների մասին հմմտ. Հառիճավանքի և Գեղաշենի ցից քարերը (Avetisyan et al. 2023, 17):



Գծանկ. 19. «Կոսպաշտի տներ» հուշարձանախմբի №6–7 դրվմենների զծագիրը (չափագրությունը՝ Ա. Դավթյանի)

Աղ. 8. «Կոսպաշտի տների» մենաքարերը

№	Չափերը սմ	Մշակում	Ուրվագծերը	Իրան	Ստորին հատված	Վերին հատված	Փոխադարձ տեղադրություն	Հնագիտական համատեքստ	Բնական համատեքստ
1	180x30	Կոպտատաշ	Ուղիղ	Գլանաձև	Կոնաձև փոսիկով	Կոնաձև փոսիկով	Շարք	Դրվմեններ, փոսիկավոր քար	Կոռնիձոր գ. աղբյուր
2	135x40x20	Կոպտատաշ	Ուղիղ	Բրգաձև	Անհայտ	Սեղանաձև	Շարք	Դրվմեններ, փոսիկավոր քար	Կոռնիձոր գ. աղբյուր
3	105x40x20	Կոպտատաշ	Ուղիղ	Տձև	Անհայտ	Ուղիղ	Շարք	Դրվմեններ, փոսիկավոր քար	Կոռնիձոր գ. աղբյուր
4	80x60x20	Կոպտատաշ	Ուղիղ	Չուգահեռանիստ	Անհայտ	Տձև	Շարք	Դրվմեններ, փոսիկավոր քար	Կոռնիձոր գ. աղբյուր

կոթողը տեղադրված էր շարքի կենտրոնում³³: Այս կոթողը մենհիրային հուշարձաններին է նմանվում կոպտատաշ կերտվածքով, իսկ ֆալիկ հուշարձաններին՝ գմբեթաձև գլխիկով և գլխիկը իրանից առանձնացնող ակոսով³⁴:

Ամենայն հավանականությամբ հուշարձանախումբը եղել է բրոնզ-երկաթեդարյան սրբատեղի, ուր ինչ-ինչ ծիսական արարողակարգից հետո հուղարկվորվում էին ժամանակի նշանավոր մարդիկ:

Նշված հուշարձանները թեպետ մի շարք հատկանիշներով (մուտքի քարի բացակայություն, կեղծ թաղի տեսքով ծածկ) առանձնանում են կովկասյան դոլմեններից, այնուամենայնիվ ունեն բազմաթիվ զուգահեռներ ինչպես ճարտարապետության (հուշարձանի վերգետնյա բնույթը, քարերով լցոնված այսպես կոչված «դոլմենային բակ»), այնպես էլ տեղանքի բնական (տեղադրություն գետի դարավանդին) և մարդածին (մեկ շարքով տեղադրում, մենհիրներ, բաժակատիպ քարեր) առումով:

Օշապեն քար (սկ.144–146). Օշապեն քարի (Կաչաղակաքար) համալիրի մասին տեղեկությունները սակավ են: Ե.Լալայանը հիշատակում է Լիսագորից ոչ հեռու, Թթու ջրից բարձր, Սաղսաղան կամ Կաչաղակաքար լեռան գագաթին գտնվող համալիրը, որը ներառում էր մենհիրներ և դոլմեններ³⁵: Հուշարձանախումբը հետագոտած Գ.Սարգսյանը վկայում է, որ Օշապեն քար տեղամասում դամբարանները (ըստ Գ.Սարգսյանի՝ դրանց մեծ մասը պեղված էր, հավանաբար Ե.Լալայանի կողմից) դարավանդներով բարձրանում են դեպի լեռան գագաթ, որտեղ կա աշտարակաձև մի կառույց³⁶:

Մեգալիթյան հուշարձանների այս տիպին պետք է դասել նաև Քարիատի (Դաշքեսանի) շրջանի Չոբան դաշ դամբարանադաշտում տեղադրված մենհիրը, որը պսակում էր կիկլոպյան աշտարակը³⁷:

Մեգալիթները թաղման համալիրներում.

Մեգալիթներն ի հայտ են գալիս նաև թաղման համալիրներում, որոնց տեսանելի օրինակ է Ղալաշիկ 2 դամբարանադաշտը՝ սփռված Սթոնիս ամրոցի միջնաբերդից հարավ և հարավ-արևելք ընկած բարձրադիր ջրբաժան լեզվակներին: Այստեղ պահպանվել են կողոպտված մեծ դամբարանաբլուրներ: Դամբարանների՝ մասնակի երևացող քարակղային թաղումների խցերը կառուցված են զանգվածեղ քարերից և ծածկված են եղել կեղծ թաղի կառուցվածքով դրված սալերով: Դամբարանները սովորաբար օղակված էին կրոմեխներով: Արժանահիշատակ է դամբարանադաշտում կանգնեցված 110սմ բարձրությամբ քարե մարդակերպ կուռքը: Այն տեղադրված է դամբարանին կից ուղղանկյուն կառույցի կենտրոնական հատվածում (սկ. 150): Կուռքի աչքերը և բերանը փորագիր են, իսկ քիթը՝ ռելիեֆ: Իրանն իջնում է ոչ թե ուղիղ, այլ որոշակի թեքությամբ, ինչը, հավանաբար, պետք է խորհրդանշի նստած դիրքը: Արձանի ստորին հատվածում փոսիկ է, ինչը պետք է նշանակի սեռական (իգական) պատկանելությունը³⁸: Այն իր որոշ առանձնահատկություններով (նստած դիրք, դեմքի թեքությունը) նմանվում է Մեծամորից և այլ ուշ բրոնզ-երկաթեդարյան հուշարձաններից (Նավուր, Էրեբունի եւ այլն)³⁹ հայտնի օրինակներին: Հաշվի առնելով դիմագծային և կերտման առանձնահատկությունները՝ նշված արձանը, ըստ Բ.Առաքելյանի տիպաբանության, կարելի է դասել ավանդական-պայմանական ոճի հուշարձանների առաջին խմբին⁴⁰:

Անդրադառնալով նշված համալիրի թվագրության խնդրին՝ պետք է նշել երկու կարևոր հանգամանք: Նախ՝ Մեծամորի արձանիկի հետ բազմաթիվ ոճային զուգահեռները թույլ են տալիս նշված համալիրը թվագրել ուշ բրոնզի դարաշրջանով: Մյուս կողմից՝ թալանված խցից հավաքված խեցեղենի բեկորները բնորոշ են Ք.ա. VIII–VI դդ.:

³³ Бианки 2010, 96.

³⁴ Գևորգյան 2004, 124:

³⁵ Ե. Լալայանն այս հուշարձանախումբը համեմատում է Զորաց քարերի հետ (Լալայան 1931, 66, Աղոնց 1972, 11):

³⁶ Аветисян и др. 2017. 317: Այս առումով պետք է հիշատակել, որ նման կերպ է կազմակերպված Արմավիրի սրբատեղին, որտեղ ժայռափոր արահետը դարավանդներով բարձրանում է դեպի գագաթ, ուր գտնվում է գլխավոր սրբատեղին (Карпетян и др. 2004, 269): Զավակսի Աղիգենի շրջանի Վարխանի գյուղի պաշտամունքային շինությունները դասավորված են «ծիսական» բլրի դարավանդներին (Гамбашидзе, Гамбашидзе 1995, 53): Օշապեն քարում և Սաղսաղանում Շ. Մկրտչյանը հիշատակում է Հին բերդ և Օշապեն քար միջնադարյան ամրոցները, ինչպես նաև մի շարք քարանձավներ, որոնք միավորվում են արհեստական անցուղիներով (Мкртчян 1988, 195):

³⁷ Джафарзаде 1938, 36.

³⁸ Ավետիսյան և այլք 2015, 52, նկ. 11, Սարգսյան և այլք 2022, 108, նկ. 3:

³⁹ Есаян 1980, 51, 69, таб. 22(1), 23, 42(1), Խանգաղյան և այլք 1973, 138–139, նկ. 142, 143:

⁴⁰ Առաքելյան 1976, 14:

Մի շարք թաղման կառույցների ճարտարապետությունը կրում է մեգալիթյան տարրեր. այս համատեքստում պետք է հիշատակել Տեղ-Աղավնո ճանապարհին գտնվող դամբարանների խումբը: Տեղ-Ջաբուխ կայարան փոստային ճանապարհի երկայնքով դասավորված են մի շարք դամբարաններ⁴¹: Կույթ թափա տեղամասում է. Ռյուսերը պեղել է ինը դամբարանբլուր: Դամբարաններն ունեն քարահողային լիցք: Մեկ դեպքում (№ 2 դամբարան) դամբարանը գերանածածկ էր: № 1–4 դամբարաններում խցերը հիմնահողային էին, № 5–7 և 9 դամբարաններում՝ քարակղային, իսկ № 8 դամբարանում թաղումն իրականացված է խցի մեջ: № 3 դամբարանում կրկնակի թաղում է: Դատելով նկարագրված նյութից՝ դամբարանները պատկանում են վաղ երկաթի դարաշրջանին⁴²: Այսօր կանգուն դամբարաններում (Խնածախ 5) առկա են դասական կրոմեխներ (հսկայական ցից քարերից շարված շրջան)⁴³:

Օրթոստատ քարերից 6–30 մ տրամագծով շրջաններ կան նաև Խաչքուլաղում: Դրանց գործառույթները պարզ չեն: Մի կողմից, հնարավոր է, դրանք դամբարաններ կամ հարթակներ են, մյուս կողմից՝ Գ. Կեսմանլին չի բացատրում, որ դրանք կաթարաններ են⁴⁴:

Մեծ քարերով շարված կեղծ թաղի տեսքով ծածկ առկա է Արահուծի ամրոցում: Մեգալիթյան համալիրների թվին կարելի է դասել նաև Քարհատի (Դաշքեսանի) շրջանում պեղված թաղման կառույցները: Դամբարանադաշտը գտնվում է ծ.մ. մոտ 1800 մ բարձրության վրա: Դամբարանները (միջին չափերը 3,20x2,13 մ) կառուցված են կողքի վրա դրված քարերից և ծածկված են հսկայական քարե սալերով: Ըստ Է. Ռյուսերի՝ դամբարանադաշտերի այս համակարգը ձգվում է մինչև Սևանա լիճ⁴⁵:

Թաղման կառույցում մեգալիթյան տարրեր են նաև դամբարաններում դրված կամ դամբարանբլուրները պսակող քարաբեկորները: Նմանատիպ և մասամբ մշակված (կոնաձև վերնամասով) քարաբեկորներ մեծ քանակությամբ առկա են Գետաշենի ենթաշրջանի Բայանի և Կաչկարի դամբարանադաշտերում⁴⁶:

Սրբատեղիներում տեղադրված մեգալիթյան կերտվածքները. Միրիկյան ազլոմերացիայի պաշտամունքային լանդշաֆտում իր ուրույն տեղն ունի սրբազորված Միրիկ 5 քարանձավային համալիրը (նկ. 151–154): Այն գտնվում է Միրիկ գյուղի Աղահեճ ամրոցից 1,8 կմ արևմուտք, Հերիկ գյուղից 1,7 կմ հյուսիս-արևելք, ժայռածերպերով կազմավորված լայն ու խոր ձորի ջրհավաք գծի վրա: Մեծ և բարձր առաստաղով հարավահայաց քարանձավ է՝ ամբողջովին նստած բազալտե լավաների կոնտակտի շերտում: Մուտքի բացվածքը մոտ 30 մ է, թաղանձան ծածկի բարձրությունը՝ մոտ 25 մ, խորությունը՝ 30 մ: Պատերը պլանաձև դոլերիտային բազալտից են, առաստաղը՝ հաջորդ բազալտե լավայի կրնկի շերտն է՝ 10–15 մ հզորությամբ, հատակը պատված է նույնանման բազալտի թափված բեկորների հաստ շերտով: Անձավի առաստաղի մեջ սեղավատարի ջրերը բացել են երկու մեծ անցքեր, որտեղից դիտարկվում է հատակը: Անձավի բացվածքի արևելյան կողմի բազալտե ուղղահայաց պատի մոտ՝ 100 մ երկարությամբ տարածքում, բխում են բազմաթիվ քաղցրահամ աղբյուրներ: Անձավի դիմաց՝ ձորակի արևմտյան ափի մի ընդարձակ տափարակին, ընկած է միայնակ մեծ ժայռաբեկոր, որը, ամենայն հավանականությամբ, հնագույն զոհասեղան է: Նրա բավական հողմահարված, մոտ 3,0x2,0 մ չափերով վերին հարթ մակերեսին նկատվում է թեթև բարձրացող սեղանատիպ հարթակ, որից սկիզբ առնող ձեռակերտ փորված առվակները, ընթացքում անցնելով կոնաձև թասիկավոր փոսորակների վրայով, իջնում են դեպի ժայռաբեկորի արևելյան եզրը: Այս ժայռաբեկորի շրջակա քարերին ևս փորված են ձեռակերտ կլոր թասիկավոր փոսորակներ՝ ընդգծելով վերջինիս առանձնահատուկ նշանակությունը⁴⁷:

Պրոֆան համալիրներին կից կերտվածքները. Առանձին խումբ են կազմում բնակավայրերի ճանապարհները: Դրանք ինչպես դեպի բնակավայր տանող ուղիներն են, այնպես էլ պաշտպանական համակարգի մաս կազմող միջանցք-արահետները: Դեպի բնակավայր տանող ճանապարհներ հա-

⁴¹ Տեղ-Աղվեղիայան 2010, 183:

⁴² Ресслер 1901, 166–168.

⁴³ Ավետիսյան և այլք 2015, 216, աղ. 50:

⁴⁴ Кесманлы 1975, 472: Հմտ. ցից քարերի կրոմեխով օղակված դամբարանները Ջորաց քարերում, Գոլովինոյում և Մաշավերում (Փիլիպոսյան, Ավագյան 2016, 10–13, Թումյան 1937, նկ. 30, Кахиани и др. 1985, 30):

⁴⁵ Ресслер 1903, 92–96: Հմտ. Թումանյան 2003, 177:

⁴⁶ Ресслер 1904, 39–45.

⁴⁷ Ավետիսյան և այլք 2019, 8: Այս համալիրն ուղղակի զուգահեռներ ունի Խնածախում՝ Վանքի ձոր համալիրում: Քարաբեկոր-զոհասեղանը տեղադրված է հարթակի կենտրոնական հատվածում: Այդ նույն համատեքստում է նաև քարանձավը: Աղբյուր-քարանձավ-զոհասեղան կապը երևում է նաև Գորիսի տարածաշրջանի Բարձրավան գյուղից ոչ հեռու գտնվող Բաշարաջուր սրբավայրում (Ավետիսյան և այլք 2015, 40–43):

վաստված են Եզնագոմերի, Միրիկ 1, Սթունիս, Սոնասար, Արահուծ, Աղբաթխերտ, Աղանաբերդ ամրոցներում⁴⁸:

Ճանապարհների կառուցման ժամանակ օգտագործվող շինարարական տեխնիկան բազմազան է: Առաջին հերթին պետք է հիշատակել ժայռափոր ճանապարհները⁴⁹: Մասնակի ժայռափոր ճանապարհ էր տանում դեպի Արահուծի ամրոց⁵⁰: Ժայռափոր ճանապարհների ուշ դրսևորումներից պետք է համարել Վանքասարի քարանձավային համալիրի ճանապարհը՝ աստիճանների և ժայռափոր հարթակների համալիրով⁵¹: Նույն համատեքստում պետք է դիտարկել Դադիվանքից Ս.Աստվածածին եկեղեցու ճանապարհին՝ Տրտուի ձախ ափին՝ ուղղահայաց ժայռի մեջ փորված աստիճանների համակարգը⁵²: Հաջորդ խումբը ներկայացնում են արհեստական ծածկույթով կառուցված, այսինքն՝ սալահատակված ճանապարհները (Միրիկ 1)⁵³: Երկրորդ տիպի շինարարական տեխնիկան ներկայացված է կիկլոպյան պարսպով եզրապատված ճանապարհներով (հմմտ. Եզնագոմերի ամրոց

տանող թեքադիր ճանապարհը)⁵⁴: Հաջորդ խմբի շինարվեստը ներկայացնում են չսալահատակված ճանապարհները, որոնք երկայնքով հարթեցվում են և եզրապատվում են քարաշարերով: Ցից քարերով են եզրապատված դեպի ամրոց տանող ճանապարհները Սոնասարում և Սթունիսում⁵⁵:

Հատկանշական է, որ պրոֆան և սակրալ օբյեկտների շինարարական տեխնիկան նույնական է: Այսպես, ժայռափոր են Արծվաբերդի և Գառնիի ճանապարհները⁵⁶: Մասամբ սալահատակված էր նաև Միրիկ 1 ամրոցում հյուսիսից դեպի աստիճանավանդակ ընթացող ճանապարհը⁵⁷: Արհեստական սալահատակով ճանապարհների առավել վաղ օրինակ է հսկայական բազալտե սալերով սալահատակված Շաորիի ճանապարհը⁵⁸ (նույնը՝ Թոեղքում, Անանաուրիում, Տկվիավիում, Ջավախիում⁵⁹): Պաշտամունքային օբյեկտներում չսալահատակված ճանապարհների թվին են պատկանում Բերդիկի և Հայթադի դամբարանադաշտերի ճանապարհները:

Աղ. 9. Մեգալիթյան հուշարձանները ծխապաշտամունքային համալիրներում

Համալիրի անվանումը	Համալիրի բնույթը	Մեգալիթյան հուշարձանի տիպը	Այլ հուշարձաններ	Բնական համատեքստ
Բերդիկ	Դամբարանադաշտ	Քարերով եզերված ճանապարհներ, դուրմենատիպ համալիր՝ «տաճար», կիկլոպյան պարիսպ	Քարահողային լիցքով դամբարաններ, առանց թմբի կրոմլեխներ	Եռանկյունի հրվանդանաձև բլուր
Իվանյան	Դամբարանադաշտ	Մենհիրներ, դուրմենատիպ կառույցներ, «լաբիրինթոս»	Քարահողային, քարային, հողային լիցքով, առանց դամբանի դամբարաններ	Խոջալիսկա և Կարկառ գետերի միախառնման վայրը
«Կռապաշտի տներ»	Դուրմենների դաշտ	Դուրմենատիպ կառույցներ, մենհիրների շարք	Բաժակատիպ քարեր	Կոռնիծոր գետակի կիրճը
Օշապեն քար	Դամբարանադաշտ	Աշտարակատիպ կառույց	Դամբարաններ	Դարավանդաձև լանջ և բլրի զագագթ
Միրիկ 5	Ծիսական համալիր	Քարաբեկոր-զոհասեղան		Քարանձավ, աղբյուր

⁴⁸ Հմմտ. Կալ քարի (Есаян 1973, 77–78), Քանագեղի, Ղամբախի, Ժամի դարի, Քարե դռան (Միքայելյան 1968, 23, 26, 42), Ջաղացաձորի, Արծվանիստի (Biscione et al. 2002, 81) ամրոցների ճանապարհները:

⁴⁹ Հմմտ. Schneider 2012, 13–15:

⁵⁰ Սարգսյան և այլք 2022, 130, 134: Հմմտ. Ջաղացատեղիի (Biscione et al. 2002, 81) և Մոսկանի (հետազոտությունները՝ Լ. Մկրտչյանի) ամրոցների ճանապարհները:

⁵¹ Սիմոնյան, Սանամյան 2005, 169:

⁵² Հուշարձանը փաստագրվել է 1994 թ. Պատմամշակութային ժառանգություն զ/հ ինստիտուտի արշավախմբի կողմից (Վ. Գայսերյան, Գ. Խաչատրյան, Ա. Գառնի, ղեկ.՝ Հ. Սիմոնյան): Այս համալիրը հիշատակելիս Մ. Եպս. Բարխուդարյանը ընդգծում է կրաշաղախով կառուցված պատը և լուսամուտը՝ այն համարելով վիմափոր դիտարան (Բարխուդարյան 1995, 135–136):

⁵³ Սարգսյան և այլք 2022, 57–59:

⁵⁴ Սարգսյան և այլք 2022, 25: Գեղամա լեռներում նմանատիպ ճանապարհներ կան Քանագեղի, Ժամի դարի, Քարե դռան ամրոցներում (Միքայելյան 1968, 23, 26, 42): Ա. Մխիթարյանը հիշատակում է Ակոռիից Էյաքալ թափ տանող խոշոր քարերից կառուցված ճանապարհը, որի ցածրադիր հատվածները պաշտպանված էին պատվարով (Մխիթարյան 1904, 154): Տավուշում կիկլոպյան պատերով են եզրափակված Կալի քար, Բաղրի խաչ, Բերդաքար, Օկոն ամրոցների ամրացված միջանցք-մուտքերը (Есаян 1973, 77–78, 90, 93, 253):

⁵⁵ Սարգսյան և այլք 2002, 105, 109, 110, 112:

⁵⁶ Есаян 1973, 253, Аветисян и др. 2017, 319.

⁵⁷ Սարգսյան և այլք 2022, 57–59:

⁵⁸ Нариманишвили 2009, 104–105.

⁵⁹ Нариманишвили 2009, 99.

ԳԼՈՒԽ V

ՄԵԳԱԼԻԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ

Պատմական հիշողությունը բոլոր հասարակությունների ինքնության հիմքն է, որն անհնար է առանց նյութական կրիչների: Վերջիններս ձևավորում են ներփակ տարածական միջավայր, որին բնորոշ են բնական և մարդածին ուղենիշեր: Դրանց միավորման արդյունքում միջավայրն իմաստավորվում է, սրբացվում և դառնում տեղական հիշողության մարմնավորում¹:

**Մեգալիթյան հուշարձանների կերպավոր-
խումբ միջնադարում.** Քրիստոնեության ընդունումը Հայաստանում արդիական դարձրեց նախորդ դարաշրջանի ծիսապաշտամունքային հուշարձանների նկատմամբ դիրքորոշման ճշգրտումը: Այս գործընթացը կարող էր ընթանալ մի քանի ուղղություններով: Դրանցից կարևոր է լանդշաֆտի տարրերի մեկնաբանությունը քրիստոնեական համատեքստում: Օրինակ՝ Մադաթաշեն գյուղում կա մի քար, որի վրա նստած Ս.Մարիամ Աստվածածինը, ըստ ավանդության, հրեշտակից ստացել է որդու ծնվելու մասին ավետիսը²: Տարածքի քրիստոնեացումը ենթադրում էր նոր կրոնի սրբատեղիների՝ եկեղեցիների կառուցում հեթանոսական սրբավայրերի տեղում: Այսպես, բացառված չէ, որ Արցախի խոշորագույն եկեղեցիներից մեկը՝ Ծիծեռնավանքը, կառուցվել է հեթանոսական տաճարի տեղում³: Այստեղ պետք է հիշատակել Ծիծեռնավանքի պեղումների ժամանակ հայտնաբերված, եկեղեցական շինությունից հարավ՝ վանքապատկան տարածքում որպես շինաքար օգտագործված ձկնանման վիշապոիդը, որի ստորին հատվածում փորվածք է՝ հա-

վանաբար դրոցին ամրացնելու համար (նկ. 94-95)⁴: Նախաքրիստոնեական շրջանում տարածքի սրբագործման մասին վկայում է նաև ժամանակակից Ծիծեռնավանք գյուղի տարածքում՝ վանական համալիրից արևելք գտնվող ժայռային ելուստ-գոհասեղանը (այսպես կոչված Ջիզի քարը՝ նկ. 96)⁵: Տարածքի յուրացման համատեքստում պետք է քննարկել նաև փոքրածավալ ճարտարապետական ձևերի (մենհիրների, վիշապ քարակոթողների, ֆալիկ հուշարձանների) խաչքարացումը: Մասնավորապես պետք է հիշատակել Դադիվանքի մենհիրը: Դադիվանքի հիմնական եկեղեցական կառույցից արևմուտք, Դադիի եկեղեցի-դամբարան-սրբատեղիի հարավարևմտյան որմնամույթի արևելյան կողմում գտնվեց 193×33×25սմ չափերով հարթ դիմամասով խաչքարաքանդակ քարակոթող, որի հաստությունը վերին հատվածում բարակում է՝ հասնելով 2սմ: Խաչը քանդակված է կոթողի վերին հատվածում, փորագրության եղանակով, ինչը պարզ գծային պատկեր է՝ եռանյուղ ավարտվող խաչաթևերով, որոնց ծայրերին գնդաձև փորվածքներ են: Ստորին խաչաթևն ունի իջնող պոչուկ: Քանդակի ոճային առանձնահատկությունները թույլ են տալիս այն թվագրել մոտավորապես XI դարով⁶: Միևնույն ժամանակ այս կոթողի կերտման որոշ առանձնահատկությունները (նեղացող վերնամաս, կոպտատաշ կողային հատվածների և համեմատաբար հարթ դիմային հատվածի համադրությունը) թույլ են տալիս այն դասել ցից քարերի թվին՝ մենհիր-հուշայուն անցումային ձևին⁷: Ընկած դիրքից

¹ Аветисян и др. 2019, 271.

² Լալայեան 1897, 191:

³ Հաարթյան 1985, 221-223:

⁴ Միմոնյան 2019, 554:

⁵ Հետազոտությունները՝ Գ. Սարգսյանի, Հ. Դանիելյանի, Ա. Գնունու:

⁶ Սարգսյան, Այվազյան 2011, 101-102, Ավետիսյան և այլք 2015, 65, նկ. 19:

⁷ Հմմտ. Արտավան 2, Կապույտ խաչ (ք. Արովյան) ցից քարերը (Avetisyan et al. 2023, 17):

երևում է, որ կոթողն իր նախնական տեղում և դիրքում չէ, սակայն, ամենայն հավանականությամբ, հատուկ բերվել է թաղվել է այստեղ:

Մենհիրային հատկանիշներ (կոպտատաշ մակերես, հնգանկյունին մոտեցող վերնամաս, թեք ստորին հատված) ունի Արախիշի խաչքարը, որի վերին հատվածում փորագրության եղանակով պատկերված է ճանկավոր խաչ⁸:

Այս համատեքստում պետք է դիտարկել նաև Գետաբակի մենհիրը: Թեպետ այսօր այս խաչքարացված կոթողի համատեքստը հայտնի չէ, սակայն չի բացառվում, որ այն տեղադրված էր ճանապարհների խաչմերուկին⁹: Դաղիվանքի և Գետաբակի մենհիրների թվագրությունը համընկնում է հեթանոսական կոթողների քրիստոնեացման երկրորդ փուլին: Այն հետևանք էր, մի կողմից, տարածաշրջանում տնտեսական աճի, ինչը ենթադրում է լեռնային և բարձրլեռնային տարածքների յուրացում, մյուս կողմից՝ սեփական արմատների արժևորման ձգտումի, ինչը բնորոշ է Վերածննդին ընդհանրապես՝ որպես պատմական-մշակութային երևույթ, և հայկական վերածննդին՝ մասնավորապես¹⁰: Կոպտատաշ մշակումը, կոր ուրվագծերը, թեք կտրված վերնամասը Զիրիկի խաչքարը մոտեցնում են մենհիրներին: Խաչային պատկերը կատարված է կոթողի վերին հատվածում՝ հարթաքանդակի եղանակով: Խաչաթևերը եռանկյունաձև են, զարդարված ուղղահայաց փորագիր ակոսներով¹¹:

Քաշաթաղի շրջանի Շավա գյուղի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու հարավարևմտյան կողմում տեղադրված խաչքարը որոշ հատկանիշներով նմանվում է ցլակերպ վիշապ քարակոթողի (սկ. 155)¹²:

Մինչև ժամանակ քրիստոնեական հավատի խորհրդանիշը կարող էր տեղադրվել սրբատեղիի մոտ՝ այսպիսով վավերացնելով այդ սրբությունը: Այսպես, Քոլատակից ոչ հեռու գտնվող Վնեթեր

սրբատեղիում՝ բաժակաձև փորվածքներով քարերի մոտ, տեղադրված է խաչքար¹³:

Ուշ միջնադարում Արցախում հայտնված թյուրքական ցեղերը ևս օգտագործում էին բրոնզ-երկաթեղարյան կոթողները՝ հարմարեցնելով դրանք իրենց հավատից և սովորություններից բխող իրողություններին¹⁴: Նման կոթողների օրինակ է Ակնայի շրջանի Նոր Մարաղա գյուղի (նախկին՝ Կիզիլ-Քյանգեղի) մուսուլմանական գերեզմանոցում գտնվող մեծ ֆալոսը¹⁵: Այն բերվել է ուրիշ տեղից ու կազնեցվել որպես մահարձան: Ֆալոսի իրանը գլանաձև է, իսկ գլխիկը՝ գմբեթաձև, կիսակլորին մոտեցող: Գլխիկը զատվել է իրանից՝ վերջինիս հղկման ճանապարհով¹⁶: Այս նույն համատեքստում պետք է դիտարկել Քաշաթաղի շրջանի Որոտան բնակավայրից ոչ հեռու՝ մահմեդական գերեզմանոցում կանգնեցված կոթողները, որոնք հորինվածքով և մշակման տեխնիկայով նմանվում են մենհիրների: Բացառված չէ, որ կոթողները կամ բերվել են այլ վայրից, կամ այդ տեղում ժամանակին եղել է հետազայում ավերված դամբարանադաշտ:

Մեգալիթյան հուշարձանների ազգագրական համատեքստը. Ժողովրդական պաշտամունքի առարկա կարող էին լինել ժայռերը կամ ժայռային ելուստները, ինչպես նաև մարդածին մեգալիթները: Հատկանշական է, որ որոշ դեպքերում նմանատիպ ժայռային լանդշաֆտում հետազայում կառուցվում են սրբատեղիներ (օրինակ՝ Դիզափայտը պսակող ամենաբարձր ժայռին հետազայում կառուցվում է զանգակատուն, որը Վարդավառի տունին մեծ ուխտատեղի է դառնում)¹⁷: Ընդ որում՝ այս նույն համատեքստում էին լինում նաև լեռան ստորոտում գտնվող աղբյուրները (Արջի աղբյուրը և Քոչի աղբյուրը)¹⁸:

Ժողովրդական բանահյուսությունը նմանատիպ քարերը հաճախ կապում է մոտակա հուշարձանների հետ: Բացի այդ, նմանօրինակ քարաբե-

⁸ Ընթյան 2022, 104:

⁹ Джафаров 1938, 45–46.

¹⁰ Аветисян и др. 2019, 279.

¹¹ Ընթյան 2022, 22–23:

¹² Ընթյան 2022, 93, 98:

¹³ Мкртчян 1988, 25.

¹⁴ Кулиева 2008, 26–28.

¹⁵ Հետազոտությունը՝ Գ. Սարգսյանի: Բ. Կարապետյանի վկայությամբ՝ այստեղ դեռևս 1950-ական թվականներին կոթողի հարևանությամբ կային «քարե գնդեր» (Բ. Կարապետյանի անձնական հաղորդումը): Հմմտ. Ավետիսյան և այլք 2015, 181, աղ. 15:

¹⁶ Հմմտ. Գևորգյան 2004, 123–124:

¹⁷ Լիսիցյան 1981, 55:

¹⁸ Мкртчян 2010, 122.

կորներն ունեն բնական և մարդածին որոշ մանրամասներ, որոնք դրանք մերձեցնում են մշակված քարաբեկորների հետ: Այս համատեքստում պետք է դիտարկել հուշարձանների երկու տիպ:

Դրանցից առաջինը պաշտամունքի առարկա հանդիսացող բնական ժայռերը, ժայռային ելուստները և ժայռաբեկորներն են: Այս խմբին պատկանող հուշարձանների թվում պետք է նշել Ագռավաքարը, որը կապվում է Ծիծեռնավանքի հետ¹⁹ (նկ. 97), Քոլատակ գյուղի մոտ գտնվող Հարսնաքար ժայռը²⁰: Սղնախ գյուղում պաշտամունքի առարկա է դարձել ժայռից պոկված բեկորը (Պուկ քարը), ինչպես նաև հենց այդ ժայռը: Ընդ որում՝ երկու ժայռերն էլ կապված են պտղաբերության ծեսի հետ. Պուկ քար այցելում են ամուլ կանայք, իսկ հանդիպակաց ժայռի մոտ անց էր կացվում անձրևաբեր ծես: Այս նույն համատեքստում պետք է դիտել Քյաթուկի, Աշանի, Ներքին Թաղավարդի²¹, Գետաշենի Քաջքաքարի և Մկնատամի խաչի, Էրքեջի, Մուրուտի բնական ցից քարերը²²: Որպես առանձին ենթախումբ պետք է հիշատակել անցքերով ժայռերը (Հացի, Հին Քյաթուկ): Դոնեվազ գյուղում երկու քարերը անցք ունեն: Տղաբերքի ծեսի հետ են կապվում Պուկեբերքի և Սարիբեկի ճեղքված ժայռերը:

Հուշարձանների այս խմբին պետք է դասել նաև բնականորեն իրար վրա տեղադրված քարերը (յուրատեսակ բնական տետրալիթներ), որոնք հայտնի են Մադաթաշեն գյուղի Ալամանց գոմեր տեղամասից և Խնձրիստանից (Մուլուլ քար՝ մարդակերպ ուրվագծերով)²³:

Երկրորդ տիպին են պատկանում մարդածին մեգալիթները, որոնք հայտնի են միայն ազգագրական տվյալներով: Հուշարձանների այս խմբին կարելի է դասել Սխտորաշենի կոթողը, որն, ըստ Ե. Լալայանի, նմանվում է մենհիրի²⁴: Ըստ նկարագրության՝ մենհիր կարելի է համարել Հացի գյուղի Քոլեն խաչ, Տրղու գյուղի Ծակ քար (այստեղ փաստագրված են նաև բազմաթիվ դամբարաններ) և

Բաղրխան լեռան գագաթին կանգնեցված անցքով քարերը²⁵:

Ճարտարի պաշտվող հուշարձաններից է, ըստ Ե. Լալայանի, դոլմենի նմանվող կառույցը: Այն ներկայանում է որպես երկու՝ կողքի վրա դրված քարեր, որոնք ծածկված են երրորդով: Կառույցը հենվում է ժայռին: Այս համատեքստում պետք է դիտարկել նաև Մոավ լեռան համալիրը, որի մասին տեղեկությունները խիստ սահմանափակ են և հակասական: Առաջին հիշատակությունը պատկանում է Բաֆֆուն, որը թեև անձամբ այստեղ չի եղել, բայց հիշատակում է երեք հսկա քարերով շինություն, որի մեջ հազիվ մեկ մարդ կարող էր բնակվել²⁶: Կառույցի նկարագրությունից բխում է, որ խոսքն այստեղ դոլմենանման մի շինության մասին է: Մ. եպս. Բարխուդարյանը և Ս. Լիսիցյանը այս կառույցի մասին չեն հիշատակում՝ նշելով միայն լեռան տափարակ գագաթին տեղադրված խաչքարը: Մինչև նույն ժամանակ հիշյալ հեղինակները նշում են ահեղի քարերից ցանկապատը և սառնորակ ջրով աղբյուրը²⁷:

Ե. Լալայանի նկարագրած ևս երկու համալիր կարելի է համադրել մարդաստեղծ մեգալիթյան կառույցների հետ: Դրանք Շուշի քաղաքում գտնվող Քամուխաչ և Ավդուր գյուղում գտնվող Ավդալ օճախ համալիրներն են, որոնք, ըստ Ե. Լալայանի, ընդամենը քարակույտեր են, որոնց այցելում են չրեր կանայք²⁸: Դրանք կարող էին լինել քարային լիցքով դամբարաններ կամ քարակույտ-հարթակներ:

Որոշ դեպքերում բնական և մարդածին մեգալիթները կարող էին մեկտեղվել մեկ տարածքում: Այսպես, Քիրս լեռան գագաթին Ե. Լալայանի հիշատակած բնական մարդակերպ և կենդանակերպ արձանների հետ մեկտեղ առկա են ժայռափոր կերտվածքներ՝ փոսիկավոր և առվակներով քարեր²⁹ (նկ. 156–158):

¹⁹ Լալայան 1898b, 48:

²⁰ Мкртчян 1988, 24–25.

²¹ Լալայան 1897, 188–191:

²² Լալայան 1900, 329–331, Джейранов 1898, 89:

²³ Լալայան 1897, 189, Բարխուդարյան 1995, 104:

²⁴ Լալայան 1897, 189:

²⁵ Լալայան 1897, 189, Мкртчян 1988, 25, 171:

²⁶ Բաֆֆի 1896, 205:

²⁷ Բարխուդարյան 1995, 153–154, Լիսիցյան 1981, 55: Բարձր լեռների գագաթների թաղման համալիրների մասին հմտ. Փոքր Մասիսի բարձունքների դամբարանները և «ուղտերի շարան» կոչված մենհիրների շարքը. ինչպես Մոավ լեռան պարագայում, այստեղ ևս առկա է աղբյուր (տվյալ դեպքում՝ լիճ) (Թաղիադյան 1846):

²⁸ Լալայան 1988, 156:

²⁹ Լալայան 1897, 192: Հետազոտությունը՝ Ս. Սարգսյանի:

Հատկանշական է, որ այս խմբի հուշարձանները նույն բնական միջավայրում են, ինչ հնագիտական համատեքստով մեզալիթյան հուշարձանները՝ գտնվելով բարձր լեռնային սարահարթում (Մհավ լեռ, Քիրս), աղբյուրին կամ լճակին (Մհավ լեռ, Թաղլար, Հացի) կից: Պետք է նշել, որ մի շարք այլ հուշարձանների մոտ կատարվող արարողու-

թյուններում ջուրը հանգուցային դերակատարում ունեն (Դոնեվագ, Ներքին Թաղավարդ, Հին Քյաթուկ): Նմանատիպ համալիրները հաճախ ներառում էին նաև սրբազան ծառեր, որոնք կարող էին լինել ինքնուրույն պաշտամունքի միավոր³⁰: Կարելի է ենթադրել, որ հնում նույնպես ծառերը կարող էին դառնալ սրբազան լանդշաֆտի բաղադրատարր:

³⁰ Мкртчян 2010, 125–127.

ՎԵՐՋԱԲԱՆ

Արցախյան մեզալիթների վերաբերյալ առկա տվյալները թույլ են տալիս առանձնացնել մի քանի հիմնախնդիրներ և անել նախնական որոշ եզրակացություններ այդ բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների նշանակության և կերպավորման երկարատև ընթացքի մասին:

Մեզալիթյան լանդշաֆտի ձևավորման խնդիրը. Յուրաքանչյուր մշակութային միջավայր ձևավորվում և զարգանում է կոնկրետ բնական պայմաններում: Ընդ որում, բնական լանդշաֆտի տարրերը ոչ միայն ենթաշերտ են ստեղծում պաշտամունքային կոթողների համար, այլև սրբազործվում են³¹: Լանդշաֆտի բնական և մարդածին տարրերի միասնությունն էլ ստեղծում է սակրալ վայր՝ բնական լանդշաֆտի մի ենթամաս, որտեղ կենտրոնանում են ծիսապաշտամունքային հուշարձանները և որը, փաստորեն, դառնում է մարդու և վերին ուժերի հաղորդակցման գոտի³²: Արցախի հնագիտական հուշարձանների հետազոտությունը թույլ է տալիս առանձնացնել բնական տեղանքի որոշակի տարրեր, որոնց ուղեկցությամբ առկա են մեզալիթներ: Այդպիսի լանդշաֆտային տարրերից է ջուրը: Արցախում սրբազործվել են լճերը, աղբյուրները, գետերը (Ալ լճեր, Այլախ, Սև լիճ, Խոզնավարի լիճ): Սրբազործվել են նաև քարանձավները, որոնք ստորին և վերին աշխարհները կապող օղակի դեր են խաղացել (Միրիկ 5)³³: Քննարկվող հուշարձանները, որպես կանոն, գտնվում են լճերով առանձնացող սարահարթերում (Այլախ լիճ, Ալ լիճ, Խոզնավարի լիճ), լեռների գագաթներին (Մոավ լեռ, Բաղրխան)³⁴, բնական ամֆիթատրոն կազմող հրապարակներում (Միրիկ 5) կամ դարավանդաձև բլրի լանջերին (Օշապեն քար)³⁵:

Մեզալիթյան պաշտամունքի հիերարխիկ համակարգի հարցը. Նստակյացության զարգացումը

ուղեկցվում է կենտրոնական դիրք զբաղեցնող համայնական նշանակության սրբատեղիների ձևավորմամբ (Աղբաթխերտ, Մելիքեն դուզ): Նման խոշոր միավորներում կառուցվում են ծիսապաշտամունքային օբյեկտներ, որոնք կենտրոնական դիրք են զբաղեցնում ողջ համալիրում և, ըստ ամենայնի, ունեն տարածաշրջանային նշանակություն (Միրիկ 1): Միևնույն ժամանակ, տնտեսական գործունեության ընդլայնումը և բարձր լեռնային գոտիների յուրացումը առաջացնում էին դրանց խորհրդանշական պաշտպանության անհրաժեշտություն (Ալի Բայրամլի, Ալ լճեր, Այլախ, Խոզնավարի լիճ, Միրիկ 4): Մեզալիթյան հուշարձանները առկա են նաև բնակարանային համալիրների սրբազան անկյուններում՝ որպես պահապան կոտրքեր (Խոզնավարի լիճ, Միրիկ 2), ինչով ձևավորվում է պաշտամունքի հիերարխիա, որն ընդգրկում է տնային, համայնական և տարածաշրջանային մակարդակները:

Ուրբանիստական գործընթացների զարգացման արդյունքում նաև դամբարանադաշտն է ձևավորվում որպես ծիսապաշտամունքային համալիր՝ կենտրոնական կառույցով (Բերդիկ), սահմանն ընդգծող պարսպաշարով (Բերդիկ), մենհիրների շարքով («Կռապաշտի տներ»), հաղորդակցման ուղիներով (Բերդիկ), որոնց առանձին կառույցներ կարող էին միավորվել քարաշարերով կամ միասնական կրոնիկով («Կռապաշտի տներ»):

Մեզալիթների տիպաբանության փորձը. Հետազոտությունները թույլ են տալիս գատել մեզալիթյան հուշարձանների մի քանի տիպ: Այսպես, առկա են մենհիրների մի շարք տեսակներ, որոնք իրարից տարբերվում են քարամշակման և ձևաբանական առանձնահատկություններով (հմմտ. «Կռապաշտի տներ», Խնածախ 5, Այլախ): Առանձին պետք է նշել ցից քարերի անցումային տիպերը՝

³¹ Сорокин 1992, 214–218.

³² Воловик 2013, 31–32.

³³ Ալիշան 1910, 37:

³⁴ Հմմտ. Դադատանում լեռների գագաթներին գտնվող քարերի կուտակումները, որոնց միջավայրում հայտնաբերվել են բրոնզե արձանիկներ (Круглов 1946, 31–40):

³⁵ Հմմտ. Карапетян и др. 2004, 254–275:

1. մենսիիր-հուշայություն (որի հատկանշական գծերից է համեմատաբար հարթ մշակումը՝ Դադիվանք), 2. մենսիիր-մարդակերպ քանդակ (որ մատնանշում է մենսիիրների մարդակերպացման նախնական փուլը՝ Ալ լիճ, Ղալաջիկ 2, Որոտան), 3. մենսիիր-ֆալոս (երբ ֆալիկ հատկանիշները ընդգծվում են գլխիկի գմբեթան կերտմամբ՝ «Կռապաշտի տներ» 1, Նոր Մարաղա):

Ցից քարերի շարքում անհրաժեշտ է նշել ձկնակերպ (Այլախ լիճ 1, Ալ լիճ 2,3, Խոզնավարի լիճ 1) և ցլակերպ (Ալ լիճ 1) վիշապ քարակոթողները, որոնք գտնվել են քարակերտ հարթակի (Ալ լիճ 3) և դամբարանանման կառույցի (Ալ լիճ 2, Վարդուտ) համատեքստում, լճափին (Ալ լիճ 2, հավանաբար Խոզնավարի լիճ 1) կամ գետի ակունքի շրջանում (Ալ լիճ 1):

Մենսիիրների և այլ ցից քարերի փոխադարձ տեղադրության տեսանկյունից կարելի է առանձնացնել մի քանի տիպ՝ մեկուսի կանգնած ցից քարեր (Այլախ 2), մենսիիրների շարքեր («Կռապաշտի տներ», Սև լիճ), շրջանաձև տեղադրված մենսիիրներ՝ կրոնիկի (Խնածախ 5, Այլախ), բիլիթոնի (Միրիկ 1), մենսիիրների խմբերի (Բայան) ձևով:

Մեգալիթների թվին են պատկանում դոլմենատիպ կառույցները («Կռապաշտի տներ»), որոնք մի շարք հատկանիշներով նմանվում են դասական դոլմենների (ունեն բակ, պորտալային մուտք, կանգնած են արհեստական հարթակի վրա)՝ միևնույն ժամանակ տարբերվելով դրանցից (տափակ դրված քարերով, կեղծ թաղի տիպի ծածկով): Այս համատեքստում պետք է դիտարկել նաև խոշոր քարերից կառուցված դամբարանային սրահները (Ղալաջիկ 2):

Մեգալիթյան կառույցներ են նաև քարակույտ-հարթակները, որոնք առկա են քարացրոններում կամ դրանց անմիջական հարևանությամբ: Այսպիսի կառույցների կենտրոնական հատվածում սովորաբար փորված են լինում մեկ կամ ավելի շրջանաձև խցեր (Ալ լճերի, Սև լճի, Խոզնավարի լճի ավազաններ):

Արցախում առաջին անգամ փաստագրվել են կիկլոպյան աշտարակներ (Շելի յուրտ, «Վիշկի» ամրոց): Բացառիկ նշանակություն ունի Միրիկ 1

պաշտամունքային համալիրը, որտեղ դեպի աստիճանաձև աշտարակ է ուղղորդում լանջն ի վեր ընթացող աստիճանների և հարթակների համակարգը: Հիշատակման արժանի է նաև Ալ լիճ 15 աշտարակատիպ քարակույտ-հարթակը:

Մեգալիթյան հուշարձանների թվում բացառիկ տեղ է զբաղեցնում Ալ լճերի պարիսպը, որը քարացրոններով, լճերի երկայնքով ձգվում է մինչև ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջան:

Առանձին միավոր են կազմում ճանապարհները, որոնք կառուցվել են հողային (Բերդիկ) կամ արհեստական (Միրիկ 1) ծածկույթով և եզերված են կիկլոպյան քարաշարերով (Բերդիկ), կամ որոշ հատվածներում ժայռափոր են (Արահուն):

Մեգալիթյան հուշարձանների համատեքստում պետք է դիտարկել նաև հարթակները, որոնք լինում են ժայռային հորիզոնական (Ալ լիճ, Միրիկ 4, Ծիծեռնավանք), քարաբեկորային (Միրիկ 5, Մելիքեն դուր) և մշակված՝ կոնաձև ժայռային ելուստներով (Ծիծեռնավանքի Զիզի քար):

Արցախում առկա են նաև բնական ցից քարեր, որոնց միջավայրը դրանք մերձեցնում է մեգալիթյան հուշարձաններին:

Մեգալիթյան հուշարձանների տնականության խնդիրը. Մեգալիթների ծիսապաշտամունքային գործառույթները շարունակվել են նաև քրիստոնեության ընդունումից հետո: Որոշ կոթողներ (Դադիվանք, Գետաբակ) խաչքարացվել են, իսկ մի շարք բնական և մարդածին մեգալիթներ կարևոր դերակատարում են ունեցել ժողովրդական հավատալիքներում:

Մեգալիթների ուսումնասիրության բնագավառում դեռևս շատ խնդիրներ կան: Այսպես, տակավին պարզ չեն այնպիսի բացառիկ համակարգերի ճշգրիտ գործառույթները, ինչպիսիք են Ալ լճերի պարիսպը, Այլախի կրոնիկը, Բերդիկի դամբարանաշտի կենտրոնական կառույցը, Բվանյանի «բավիղը», Անդոկաբերդ 2-ի ուղղանկյուն կառույցները: Այս և այլ հարցերի պատասխանը կարող են տալ միայն նշված հուշարձանների կանոնավոր պեղումները:

Աղ. 10. Մեգալիթյան հուշարձանների փրկարարությունը

Հուշարձանի տիպը				Հուշարձանի անվանումը	
1. Ցից քարեր	Մարդաստեղծ	Հուշարձանի տեսակը	Մենհիր		«Կռապաշտի տներ», Միրիկ 2, Խոզնավարի լիճ, Բաղդխան, Սխտորաշեն, Նովոսարատովկա, Գետաբակ, Չոբան դաշ, Խաչքուլաղ, Իվանյան, Նորագյուղ, Արախիշ ?, Չիրիկ ?, Տրդլու, Հաթերք
			Վիշապ	Զկնակերպ	Խոզնավարի լիճ, Այլախ 1, Ալ լիճ 2, 3
				Ցլակերպ	Ալ լիճ 1, Ծալուա
			Մարդակերպ		Ղալաջիկ 2
			Ֆալոս		Նոր Մարաղա
		Անցումային ձևեր	Մենհիր-հուշասյուն	Դադիվանք	
			Մենհիր-մարդ	Ալ լիճ, Որոտան	
			Մենհիր-ֆալոս	«Կռապաշտի տներ» 2	
		Փոխադարձ դիրքը	Մեկուսի		Այլախ 2, Ղալաջիկ 2, Խոզնավարի լիճ, Միրիկ 2
			Խումբ		Բայան
	Շարք		Սև լիճ, «Կռապաշտի տներ»		
	Կրոմլեխ		Խնածախ 5, Այլախ 1, Խաչքուլաղ		
	Բիլիթոն		Միրիկ 1		
	Բնական				Քյաթուկ, Աշան, Ներքին Թաղավարդ, Քաջքաքար Մկնատամի խաչ, Էրքեջ, Մուրուտ
2. Դոլմենատիպ հուշարձաններ					«Կռապաշտի տներ», Քարհատ, Մռավ լեռ, Աստղաշեն
3. Հարթակներ	Կրոմլեխ		Ալ լիճ 21		
	Ժայռային հորիզոնական		Ծիծեռնավանք, Միրիկ 4, Ալ լիճ 5		
	Քարակույտ		Սև լիճ, Խոզնավարի լիճ, Ալ լիճ 4, 15, 16, 17, 18 (աշտարակով), 19, 14		
	Քարաքեղոր		Մելիքեն դուզ, Միրիկ 5		
	Կոնաձև ժայռ		Ծիծեռնավանք		
4. Աշտարակներ					Ծելի Յուրտ, «Վիշկի», Միրիկ 1, Գետաբակ
5. Ճանապարհներ	Ծածկույթը	Հողային		Բերդիկ	
		Սալահատակ		Միրիկ 7	
		Դարավանդի հենապատ		Միրիկ 1	
	Եզերումը	Քարաշար, ցից քարեր		Բերդիկ, Սոնասար, Սթունիս	
		Կիկլոպյան շարվածք		Միջանցք, Եզնագոմեր	
		Ժայռափոր		Արահուժ (մասնակի)	
6. Չպարզաբանված նշանակության մեգալիթյան կառույցներ					Ալի Բայրամլի, Իվանյան, Անդրկաքերդ 2, Բերդիկ
7. Պարիսպներ և պատեր					Ալ լիճ, Բերդիկի դամբարանադաշտ, Կարկառի բնական մեգալիթ

Աղ. 11. Արցախի մեգալիթները

Հուշարձանի անվանումը	Մեգալիթի տիպը	Գտնվելու վայրը	Հնագիտական համատեքստը
Ալ լճեր	Ալ լիճ 1	Վիշապ	Արփայի ակունք
	Ալ լիճ 2	Վիշապ	Դամբարան
	Ալ լիճ 3	Վիշապ	Քարակույտ-հարթակ
	Ալ լիճ 4	Քարակույտ-հարթակ, №3 վիշապի կառույցը	Քարացրոնների և լճափի միջև
	Ալ լիճ 7, 14	Քարակույտ-հարթակներ	Քարացրոններ
	Ալ լիճ 18	Քարակույտ-հարթակ աշտարակով	Պարսպի մոտ
	Ալ լիճ 5	Ժայռային հարթակ	Քարացրոնների և լճափի միջև
	Ալ լիճ 8	Մարդակերպ մենհիր	Քարացրոններ
	Ալ լիճ 21	Կրոմլեխ-հարթակ	Արփա գ. ակունք, վիշապի մոտ
Այլախ	Կրոմլեխ-հարթակ, մեկուսի մենհիր, վիշապ	Ալախական գոտի, լճափի մերձակայք	Մեգոնային բնակավայր-անասնափառարախ

Ալի Բայրամլի		Մեզալիթյան կառույց	Ալպիական գոտի, բնակավայրի կենտրոնական հատված	Բնակավայր, ժայռապատկերներ
Խոզնավարի լիճ	1	Մենհիր	Բնակելի շինություն	Բնակավայր, դամբարանադաշտ
	2	Քարակույտ-հարթակ	Լճափ	
	3	Վիշապ	?	
Միրիկ 4		Հարթակ-ժայռաքանդակ (քարտեզ)	Ալպիական գոտի	Ամրացված փարախ
Միրիկ 1		Աշտարակ-աստիճանավանդակ, ճանապարհներ, բիլիթոն	Միրիկ 1 ամրոց	Ամրոց, դյուակ, դամբարանադաշտ
Միրիկ 2		Մենհիր-պահապան կուռք	Բնակելի շինություն	Ամրացված բնակատեղի, դամբարանադաշտ
Ծիծեռնավանք 1		Ժայռային քանդակազարդ հարթակ	Ամրոցի և դամբարանադաշտի միջև	Ամրոց, դամբարանադաշտ
Ծիծեռնավանք 2	1	Մենհիր	Ուշ վանական համալիրում	?
	2	Չիգի քար	Վանական համալիրից հարավ	?
Աղբաթխերտ		Կուռքի պատվանդան	Բնակավայրի կենտրոն	Ամրոց
Սև լիճ		Քարակույտ-հարթակ, մենհիրների շարք	Քարացրոններ, լճափ	Դամբարաններ, ժայռապատկերներ
Մելիքեն դուռ		Քարաբեկոր-հարթակ	Բնակավայր, հրապարակ	Ամրոց
Շելի յուրտ		Աշտարակ	Բնակավայրի բարձրադիր հատված	Բնակավայր
«Վիշկի»		Աշտարակ	Բնակավայրի բարձրադիր հատված	Ամրոց
Կարկառ		Բնական մեզալիթ պարսպապատ	Բնակավայրի ծայրամաս	Բնակավայր, տաճարական համալիր
Անդրկաբերդ 2		Մեզալիթյան կառույցներ	Դամբարանադաշտ	Բնակավայր, դամբարանադաշտ
Բերդիկ		Դոլմենատիպ կառույց, ծիսական արահետներ	Դամբարանադաշտ	Դամբարանադաշտ
Իվանյան		Մեզալիթյան կառույց, դոլմենատիպ դամբարաններ, մենհիր	Դամբարանադաշտ	Դամբարանադաշտ
Նորագյուղ		Մենհիր	Դամբարանադաշտ	Դամբարանադաշտ
Աստղաշեն		Դոլմենատիպ շինություն	Դամբարանադաշտ	Դամբարանադաշտ
Գյաուր դամեր		Դոլմեններ, մենհիրների շարք	Կիրճի մոտ	Դոլմենների դաշտ
Օշապեն քար		Աշտարակ, մենհիրներ	Դարավանդաձև սարի լանջ	Դամբարանադաշտ
Դալաջիկ 2		Մարդակերպ կուռք	Դամբարանի կից կառույց	Դամբարանադաշտ
Խնածախ 5		Կրոմլեխ	Դամբարանադաշտ	Դամբարանադաշտ
Միրիկ 5		Քարաբեկոր զոհասեղան	Սրբատեղի	Սրբատեղի
Եզնագոմեր		Ճանապարհ	Ամրոց	Ամրոց
Միջանցք		Ճանապարհ	Ամրոց	Ամրոց
Սթունիս		Ճանապարհ	Ամրոց	Ամրոց
Սոնասար		Ճանապարհ	Ամրոց	Ամրոց
Արահուժ		Ճանապարհ	Ամրոց	Ամրոց
Սղախ		Բնական մեզալիթ	–	–
Քյաթուկ		Բնական մեզալիթ	–	–
Աշան		Բնական մեզալիթ	–	–
Ներքին Թաղավարդ		Բնական մեզալիթ	–	–
Էրքեջ		Բնական մեզալիթ	–	–
Մուրուտ		Բնական մեզալիթ	–	–
Սխտորաշեն		Մենհիր?	–	–
Բաղրիսան		Մենհիր?	–	–
Հացի		Մենհիր?	–	–
Ճարտար		Դոլմեն?	–	–
Մռավ լեռ		Դոլմեն?, կիկլոպյան ցանկապատ	Լեռան գագաթ	–
Շուշիի Քամուխաչ		Քարակույտ	–	–
Ավդուր		Քարակույտ	–	–
Նոր Մարաղա		Ֆալուս	Մահմեդական գերեզմանոց	–
Դադիվանք		Խաչքարացված մենհիր	Դադիի եկեղեցի	–

MEGALITHIC CULTURE OF ARTSAKH

H. Avetisyan, A. Gnuni, G. Sargsyan, L. Mkrtchyan, A. Bobokhyan

Although the investigations of archaeological sites in Artsakh started as early as the 19th century, they were quite inconsistent. Among those sites megaliths make up an essential part. The present research dedicated to the mentioned phenomenon allows us to draw several conclusions concerning the megaliths of Artsakh which are dated mostly to the Bronze and Iron Ages (ca. 3500-500 BC).

Formation of the megalithic landscape. The study of the megalithic monuments of Artsakh makes it possible to reveal them in context of natural landscape. Landscape components include water sources (lakes, rivers, springs) (Al lich and Khoznavar Lakes). Monuments could be located also on high plateaus of the mentioned lakes, on the tops of mountains (Mrav), areas with natural amphitheatre formations (Mirik 5), or on terraces (Oshapan Qar).

Megaliths in the hierarchical structure of worship. The progress of life in settlements led to the emergence of sanctuaries which had central position within the settlement (Aghbatkhert, Meliken duz, Mirik 1). At the same time, the domestication of high mountainous regions led to the necessity for their symbolic protection (the sanctuaries of Ali Bayramli, Lake Al lich, Lake Aylakh, Lake Khoznavar, Mirik 4). Megalithic monuments are also present in the sacred corners of the living quarters as protective idols (Lake Khoznavar, Mirik 2). Thus the hierarchy of the worship is formed, which includes domestic, communal and regional levels. As a result of the development of urban trends the burial ground was transformed into a unified ritual-worship complex with central structure (Berdik), bordering fence (Berdik), row of menhirs (Krapashti tner) or ritual roads (Berdik).

Typology of Megaliths. Megalithic monuments can be divided into several types: standing stones, dolmen-type structures, places of worship.

Table 1. Typology of megaliths

Type of the Monument				Name of the Monument	
1. Standing stone	Man made	Type	Menhir		Krapashti tner, Mirik 2, Lake Khoznavar, Badrghan, Skhtorashen, Novosaratovka, Getabak, Choban Dash, Khachbulagh, Ivanyan, Noragyugh, Arakhish? Zirik?
			Vishap	Fish shaped	Lake Khoznavar, Aylakh 1, Al lich 2,3
				Bull shaped	Al lich 1, Shalva?
			Anthropomorphic		Ghalajik 2
			Phallos		Nor Maragha
			Transitional forms	Menhir-obelisk	Dadi Vank
				Menhir-anthropomorphic sculpture	Al lich
				Menhir- Phallos	Krapashti tner 2
		Mutual location	Singles		Aylakh 2, Ghalajik 2, Lake Khoznavar, Mirik 2
			Group		Bayan
			Alignment		Lake Sev lich, Krapashti tner
			Cromlech		Khntsakh 5, Aylakh 1, Khachbulagh
			Biliton		Mirik 1
	Natural		Kyatuk, Ashan, Nerkin Taghavart, Kashkakar, Mknatami khach, Erkej, Murut		
2. Dolmen-type structures				Krapashti tner, Karhat, mt. Mrav, Astghashen	
3. Cultic platforms	Cromlechs			Al lich 21	
	Rocky platforms			Tsitsernavanq, Mirik 4, Al lich 5	
	Tombs			Lake Sev lich, Khoznavar Lake, Al lich 4, 15, 16, 17, 18 (with a tower-type construction), 19, 14	
	Rock ledges and boulders			Meliken duz, Mirik 5	
Conical rocks				Tsitsernavanq	
4. Tower-type construction				Shelli yurt, Vishki, Oshapan kar, Mirik 1, Getabak	

5. Roads	Road surface	Ground	Berdik
		Paved	Mirik 1
		Terrace retaining wall	Mirik 1
	Road border	Masonry, standing stones	Berdik, Sonasar, Stunis
		Cyclopean masonry	Mijantsk, Eznagomer
		Rock carved	Arahuts
6. Unidentified megalithic structures			Ali Bayramli, Ivanyan, Andokaberd 2, Berdik
7. Walls			Al lich, Berdik, Karkar natural megalith

Recent studies show that the category of "menhir" is much more diverse when taking into account the features of its processing, form and iconography. In this regard, it is logical to combine monuments of this type into one large group of "standing stones", including menhirs proper, obelisks, stelae, vishaps. In the same context, one can consider a group of idols repeating the outlines and iconography of the "standing stones".

Table 2. Traits of "standing stones"

Treatment	Rough, preliminary treatment, rough-hewn, hewn	
Contours	Straight, oblique, concave, indefinite shape	
Torso	Parallelepiped, cylindrical, trapezoidal, pyramidal, anthropomorphic, fish-shaped, polyhedral, without definite shape	
Top part	Straight, oblique, humpbacked, rounded, pentagonal, conical, triangular, indefinite shape, trapezoid	
Bottom part	Straight, expanding, stand, triangular, oblique, tapering, rounded, indefinite shape	
Iconography	Location	Top, center, bottom, apex
	Traits	Hole, cup-shaped depression, anthropomorphic, zoomorphic, phallic, etc.

Several types of menhirs have been recorded, which differ from each other both in form and in technique of material processing.

Table 3. Menhirs of Artsakh

	Name of the monument	Size, cm	Treatment	Contours	Torso	Bottom part	Top part	Mutual arrangement	Archaeological context	Natural context	Notes
1	Al lich 8	140x75	Rough	Anthropomorphic	Indefinite form	?	Pentagonal	Single	Embankment platforms, cromlechs, burial mounds, rock carvings	Lakes Big and Small Al lich, stone runs, alpine zone	Transitional form from menhir to anthropomorphic statue
2	Aylakh 1/2	165x45x23	Rough	Direct	Trapezoidal	Tapering	Conical		Fortified corral, necropolis	Lake Aylakh, alpine meadows	
3	Aylakh 1/3	120x26x31	Rough	Direct	Parallelepipedal	Triangular	Triangular	Cromlech	Fortified corral, necropolis	Lake Aylakh, alpine meadows	
4	Aylakh 1/4	140x65x20	Rough	Direct	Parallelepipedal	Direct	Oblique	Cromlech	Fortified corral, necropolis	Lake Aylakh, alpine meadows	
5	Aylakh 1/5	198x57x25	Rough	Direct	Trapezoidal	Direct	Direct	Cromlech	Fortified corral, necropolis	Lake Aylakh, alpine meadows	
6	Aylakh 1/6	122x68x12	Rough	Direct	Multifaceted	Direct	Direct	Cromlech	Fortified corral, necropolis	Lake Aylakh, alpine meadows	
7	Aylakh 1/7	99x62x17	Rough	Direct	Parallelepipedal	Direct	Direct	Cromlech	Fortified corral, necropolis	Lake Aylakh, alpine meadows	
8	Aylakh 1/8	162x52x24	Rough	?	Trapezoidal	Direct	Hunch-backed	Cromlech	Fortified corral, necropolis,	Lake Aylakh, alpine meadows	
9	Aylakh 1/9	180x71x12	Rough	Direct	Trapezoidal	Oblique	Hunch-backed	Cromlech	Fortified corral, necropolis	Lake Aylakh, alpine meadows	
10	Aylakh 1/10	165x55x12	Rough	Oblique	Multifaceted	Oblique	Indefinite form	Cromlech	Fortified corral, necropolis	Lake Aylakh, alpine meadows	
11	Aylakh 1/11	154x62x	Rough	Direct	Multifaceted	Oblique	Indefinite form	Cromlech	Fortified corral, necropolis	Lake Aylakh, alpine meadows	

12	Aylakh 1/12	150x47x17	Rough	Direct	Multifaceted	Oblique	Indefinite form	Cromlech	Fortified corral, necropolis	Lake Aylakh, alpine meadows	
13	Aylakh 2		Rough	Direct	Parallelepipedal	?	Trapezoidal	Single	Fortified corral, necropolis	Lake Aylakh, alpine meadows	
14	Krapashtner 1	180x30	Rough	Direct	Cylindrical	Direct	Conical	Alignment	Dolmens, cup marks	Gorge of the Kornidzor river, spring	Transitional form menhir-phallus with cup marks
15	Krapashtner 2	135x40x20	Rough	Direct	Pyramidal	?	Trapezoidal	Alignment	Dolmens, cup marks	Gorge of the Kornidzor river, spring	
16	Krapashtner 3	105x40x20	Rough	Direct	Indefinite form	?	Direct	Alignment	Dolmens, cup marks	Gorge of the Kornidzor river,	
17	Krapashtner 4	80x60x20	Rough	Direct	Parallelepipedal	?	Indefinite form	Alignment	Dolmens, cup marks	Gorge of the Kornidzor river	
18	Sev lich	?	Rough	Direct	Indefinite form	?	Indefinite form	Alignment	Tomb-platforms, cromlechs, burial mounds, rock carvings	Lake Sev lich, alpine meadows	
19	Mirik 2	?	Rough	Direct	parallelepipedal	?	Direct, triangular	Single	Fortified settlement, necropolis	Alpine meadows	Menhirs were found in dwellings as amulet-idols
20	Lake Khoznavar	?	Rough	Direct				Single	Fortified settlement, necropolis	Lake Khoznavar, alpine meadows	Menhirs were found in dwellings as amulet-idols

Stone stelae called vishap (dragon) represent a separate type of "standing stones". In recent years five such stelae have been recorded in Artsakh. All of them are located near high mountain lakes (Al lich, Aylakh, Khoznavar). Those vishaps were recorded in situ or in loco, being disposed in the center or in the neighborhood of cultic sites (Al lich 1, 3, Aylakh), and one of them (Al lich 2) crowned the stone mound of the barrow.

Table 4. Vishaps of Artsakh

Name	Administrative belonging	Type	Material	Size, cm	Archaeological context
Al lich 1	Karvachar subregion of the Shahumyan region of Artsakh	Bull-shaped	Bazalt	380x105x34	Cromlechs, cemetery, cult platform-cromlech, tomb
Al lich 2	Karvachar subregion of the Shahumyan region of Artsakh	Fish-shaped	Bazalt	110x43x23	Tombs, cromlechs
Al lich 3	Karvachar subregion of the Shahumyan region of Artsakh	Fish-shaped	Bazalt	279x61x32	Cult platform-tomb, 10 chambers in the northwestern part of the platform
Aylakh lich 1	Border of Syunik marz of RA, Kashatagh region and Karvachar region of Shahumyan subregion of Artsakh	Fish-shaped	Bazalt	330x50x41	Located in the center of the cult platform, surrounded by a cromlech with 14 menhirs, tomb, cult site-cromlech
Khoznavar sar 1	Border of Syunik marz of RA, Kashatagh region and Karvachar region of Shahumyan subregion of Artsakh	Fish-shaped	Bazalt	232x51x35	Located directly in the center of a stone-earth covered tomb bordered by a cromlech. Near the basin of the Lake Khoznavar are houses of giants, fortress and mounds

Megaliths include also dolmen-type structures (Krapashtner, Astghadzor). These have some characteristics in common with dolmens (the courtyard, being situated on an artificial platform and a portal, doorway opening) and yet are quite different from the classic Caucasian dolmens (flat laid stones, false-vaulted overlap). For the first time on the territory of Artsakh cyclopean towers were discovered (Dashushen/Sheli Yurt, Shushi/Vishki, Oshapen qar). Especially important is the cult complex of Mirik 1, where a system of stairs and platforms leads towards the tower.

Also cultic sites in the form of stone mounds can be reckoned among the megalithic monuments and these are noted in stone runs or in close proximity to them (Al lich, Sev lich, Khoznavar lich). One of the most excep-

tional monuments is the wall fence of Al lcher, which stretches along the lake towards the Vardenis region. The types of platforms are also examined in the context of megalithic monuments, such as horizontal rock platforms (Al lich, Mirik 4, Tsitsernavanq), stone fragment platforms (Mirik 5, Meliqen duz), as well as processed cone-shaped rocky outcrops Zizi qar (Tsitsernavanq).

Table 5. Cultic platforms and tower-like structures of Artsakh

Name of the monument	Type of the monument	Description	Archaeological context	Natural context
Al lich 4	Platform-tomb	Within the structure is a vishap stone stela	Cemetery, vishap, megalithic wall, rock art	Located between stone runs and the shoreline of Lake Big Al lich
Al lich 7, 14	Platform-tomb		Cemetery, vishap, megalithic wall, rock art	Stone run
Al lich 18	Platform-tomb with tower-type construction		Megalithic wall	Stone run, high mountain alpine meadows
Al lich 5	Rock-platform	Cup marks, there are traces of secondary use (cross)	Cemetery, vishap	Located between stone runs and the shoreline of Lake Big Al lich
Al lich 21	Cromlech	Cromlech is made of medium-sized boulders	Cemetery, vishap	Located at the source of the river Arpa
Aylakh	Cromlech	Cromlech is made up of vertically standing menhirs, in the middle is a vishap stone	Fortified corrals, rock art, beam-like wall	Lake Aylakh, high mountain alpine meadows
Aylakh	Tower-type construction	Mound tower	Fortified corrals, rock art	Lake Aylakh, high mountain alpine meadows
Aylakh-Nazeni	Platform-tomb	Platform-tombs connected by stone ridges	Fortified corrals, rock art	Lake Aylakh, high mountain alpine meadows
Lake Sev lich	Platform-tomb		Tombs, cromleches, alignment, rock art	Lake Sev lich, high mountain alpine meadows, stone runs
Lake Khoznavar	Platform-tomb		Fortified settlement, menhirs, vishap	Lake Khoznavar, high mountain alpine meadows
Tsitsernavanq 1	Rock-platform	Cup marks, grooves	Fortress Tsitsernavanq, cemetery	Watershed range of the rivers Bayandur and Khoznavar, descending to the valley of the river Agavno
Tsitsernavanq 2	Conical rock ledge Zizi Kar	Imitation steps	Medieval Monastery of Tsitsernavanq	Tsitsernavanq river basin
Mirik 4	Rock-platform (map)	Cup marks, grooves	Fortified corrals	Alpine meadows
Mirik 5	Platform-boulder	Cup marks, grooves		Natural amphitheatre, cave, spring
Meliken duz	Platform-boulder	Cup marks, steps	Fortified settlement	Top of the hill
Oshapen kar	Tower-type construction	Mound tower	Cemetery	Terraced slope
